



Զիաց Մեր Հանապազորդ

ՀՈՒԼԻՍ • ՕԳՈՍՏՈՍ • ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017



Եկե՛ք երկրպագենք նրան,
Ծնրադրենք մեր Արարչի՝ Տիրոջ առջև:
ՍԱՐՄՈՍ 95. 6

Հարգելի՛ բարեկամ,

Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած արևելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության և Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

Շապիկի առաջին էջին՝ Ամարասի վանք Ամարասի վանքը գտնվում է Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղի մոտ, Խազազ և Լուսավորիչ սարերի միջև ընկած գոգահովտում: Ըստ հայ պատմիչների՝ Ամարասի վանքի եկեղեցին հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը IV դ. սկզբին: V դ. սկզբին Մեսրոպ Մաշտոցն Ամարասի վանքում բացում է Արցախի առաջին դպրոցը: Նույն ժամանակահատվածում Ամարասի վանքը դառնում է երկրամասի խոշոր կրոնական կենտրոն և եպիսկոպոսանիստ վանք: XI-XIV-դդ. վանքը ենթարկվել է թշնամի ազդերի կողոպուտներին և ավերումներին: Վանքն իր անընդմեջ գործող դպրոցով շարունակել է մնալ որպես կրոնական և մշակութային կենտրոն: XV–XVI դդ. այստեղ գրվել և ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: XVII դ. 3-րդ քառորդին նորոգվում է Գանձասարի Պետրոս կաթողիկոսի կողմից: XIX դ. 2-րդ քառորդին Ամարասի վանքային համալիրը, որն ուներ XVII դ. կառուցված բավական ուժեղ պաշտպանական համակարգ, օգտագործվել է որպես ամրոց, իսկ 1832–48 թթ. ծառայել է որպես ռուս-պարսկական սահմանի մաքսատուն: Խարխլված եկեղեցին վերականգվել է 1858 թվականին՝ շուշեցի հայերի օժանդակությամբ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո լքվել և ամայացել է: Վերաբացվել է 1992 թվականին՝ որպես Արցախի թեմի գործող վանք: Ամեն տարի հարյուր վոր այցելուներ է ունենու: Այժմ կատարվում են պարիսպների վերականգնողական աշխատանքներ:

Լուսանկարը՝ Աբրահամ Բալաբանյանի



Ձիաց մեր հանապազորդ

ՀՈՒԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածություններ

Ի՛նչ ՏԱՐԻ

Գ ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible
Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread
գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի
խորհրդածությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am.

Տան մաքրություն

Վերջերս սենյակս փոխեցի վարձակալած բնակարանիս մեջ: Այս գործը ակնկալածից շատ ավելի ժամանակ խլեց, որովհետև չուզեցի պարզապես իմ ունեցած խառնիճաղանջ ու խառնիխուռն իրերը դնել նոր սենյակում: Ուզեցի բոլորովին նոր, կոկիկ սենյակ ունենալ: Ժամերով մաքրութիւն անելով՝ դասավորեցի ամեն ինչ: Նետելու, նվիրելու ու նորից գործածելի ապրանքները տարբեր պարկերի մեջ դրեցի: Այս սպառող ու հոգնեցնող աշխատանքի արդյունքը եղավ մի գեղեցիկ սենյակ: Այս տան մաքրութեան ծրագիրը ինձ տվեց նոր ու թարմ ըմբռնում Ա Պետրոսի 2.1-ի շուրջ. «Արդ, դեն գցելով ամեն չարութիւն, ամեն խաբեութիւն, կեղծավորութիւն, նախանձ և ամեն չարախոսութիւն»: Ա Պետրոս 1.1-12 համարներում արձանագրված Քրիստոսով նոր կյանք ունենալու ուրախ հայտարարութիւնից հետո առաքյալը թախանձում է նրանց քանդիչ սովորութիւնը դեն նետել իրենց վրայից (1.13-2.3): Երբ մեր ընթացքը Տիրոջ հետ խանգարված է թվում, ու մեր սերը ուրիշների հանդեպ կծկված, այս իրավիճակը պատճառ է հարցականի տակ դնելու մեր փրկութիւնը: Մենք մեր կյանքը չէ, որ փոխում ենք փրկվելու համար, այլ նրա համար, որ մենք փրկված ենք (1.23):

Ինչպես մեր նոր կյանքն է Քրիստոսի հետ, այնպես էլ մեր ունեցած վատ սովորութիւնները չեն անհետանում մեկ գիշերվա մեջ: Հետևաբար օրեցօր մենք կարիք ունենք մեր «տունը մաքրելու»՝ դուրս նետելով այն ամենը, ինչն արգելք է հանդիսանում մեզ համար ուրիշներին սիրելու (1.22) ու աճելու (2.2): Հետո այդ նոր ու մաքուր տեղում մենք կարող ենք փորձառութիւն ու նոր ստեղծված լինելու զգացում ունենալ Քրիստոսի գորութիւնով ու կյանքով (հմ. 5):

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմք որ մեր մեջ նոր կյանք ես ստեղծում մեր Տիրոջ՝ Հիսուսի միջոցով: Օգնիր մեզ ամեն օր Քեզ դառնալու՝ մաքրվելու ու նորոգվելու համար:

Կարդա՛

Ա Պետ. 1. 22 - 2.5

Արդ, դեն գցելով ամեն չարութիւն, ամեն խաբեութիւն, կեղծավորութիւն, նախանձ և ամեն չարախոսութիւն...

Ա Պետ. 2.1

Ամեն օր մենք կարող ենք մերժել քանդիչ սովորութիւններն ու վայելել նոր կյանք Քրիստոսով:

Կարճ ճանապարհ ընտրել

Նենսին դուրս նայեց իր ընկերուհու տան պատուհանից թեյ խմելու ժամանակ: Գարնան անձրևն ու արևի շողացող ճառագայթը գույների գեղեցիկ պատկեր էին ցույց տալիս խնամքով պատրաստված շուշանների ու բազմատեսակ ծաղիկների գունավոր ծաղկանոցից: Նա ասաց. «Այդ գեղեցիկ պատկերն ուզում եմ ունենալ՝ առանց որևէ աշխատանք կատարելու»: Մի շարք կարճ ճանապարհներ լավ են ու նույնիսկ գործնական: Սակայն այլ ճանապարհներ կարող են մեր հոգիները վնասել ու մեր կյանքերը խել: Մենք ուզում ենք երազելի կյանք ունենալ՝ առանց դժվարությունների: Ուզում ենք «մեծ» լինել՝ առանց նկատի առնելու վտանգն ու ճախողելու հնարավորությունը կյանքի արկածախնդրությունների մեջ: Ցանկանում ենք Աստծուն հաճո լինել, սակայն ո՛չ այն ժամանակ, երբ անհարմար լինի մեզ: Տեր Հիսուսը ցույց տվեց իր հետևորդներին, որ չկա կարճ ճանապարհ, որով կարողանանք խուսափել մեր կյանքերը Իրեն հանձնելու դժվար ընտրություններից: Նա զգուշացրեց նախատեսական աշակերտություններից, երբ ասաց. «Ոչ ոք, ով ձեռքը մաճի վրա է դնում ու հետ նայում, Աստծու արքայություն համար հարմար չէ» (Ղուկ. 9.62): Քրիստոսին հետևելը պահանջում է մեր հավատարմությունների արմատական փոփոխությունը: Երբ հավատքով Հիսուսին դառնանք, գործը կսկսվի, ու դա անելը իսկապես արժե: Նա նաև մեզ ասաց, որ ոչ ոք չկա, որ զոհում է ամեն բան «ինձ համար կամ ավետարանի համար ու հիմա՝ այս ժամանակ... Հարյուրապատիկ չստանա, իսկ հանդերձյալ աշխարհում էլ՝ հավիտենական կյանք» (Մարկ. 10.29-30): Քրիստոսին հետևելու գործը դժվար է, սակայն Նա մեզ տվել է իր Հոգին, ու մրցանակը լեցուն ուրախ կյանք է՝ հիմա ու հավիտյան:

Կարդա՛
Ղուկաս 9.57-62

«Եթե մեկն ուզում է իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա, ամեն օր իր խաչն առնի ու իմ հետևից գա: Ղուկ. 9.23

Աղոթք - Հայր, ինձ տված գործը անելու զորությունը պիտի գտնեմ միայն այն ժամանակ, երբ Քեզ ու Քո Սուրբ Հոգուն վստահեմ: Խնդրում եմ, օգնիր ինձ, որ զգույշ լինեմ:

Դժվար է անել այն բոլոր բաները, որոնք արժե անել:

Քանդել բաժանումները

Հողված գրելու ժամկետի ավարտը ճնշեց վրաս, մինչ մտածում էի այդ առավոտ ամուսնուս հետ ունեցած վիճաբանություն մասին: Նայեցի համակարգչի պաստառի վրա թարթող նշիչին՝ մատներս դրած ստեղնաշարին, ու ասացի. «Տե՛ր, նա էլ սխալ էր»:

Երբ համակարգչի պաստառը սևացավ, դեմքս տեսա: Իմ չընդունած սխալներն ու հանցանքներս թաքցնելը աշխատանքս խանդարելուց շատ ավելին էին անում: Դրանք լարում էին հարաբերություններս ամուսնուս ու Աստծո հետ: Բջջային հեռախոսը վերցրի, հպարտությունս անտեսեցի ու ներողություն խնդրեցի: Հաշտ լինելու խաղաղությունը գնահատեցի, երբ ամուսինս էլ իր հերթին ներողություն խնդրեց: Աստծուն շնորհակալություն հայտնեցի ու կարողացա հոգվածս ժամանակին ամբողջացնել:

Իսրայելի ժողովուրդը մեղքի ցավի ու վերանորոգման ուրախություն փորձառությունը ունեցավ: Հեսուն խորհուրդ տվեց ժողովրդին չհպարտանալ Երիքովի պատերազմով (Հես. 6.18), սակայն Աքարը գողացավ ավարից նգովված իրերը ու պահեց իր վրանում (7.1): Միայն այն ժամանակ, երբ նրա հանցանքը երևան եկավ, ու պետք եղածը կատարվեց (Հմ. 4-12), ժողովուրդը Աստծո հետ եղած հաշտությունը վայելեց: Մենք էլ հաճախ չենք նկատում, թե ինչպես ենք «մեր մեղքերը մեր վրաններում պահում» եւ մեր սրտերը Աստծուց մի կողմ դարձնելով՝ ազդում մեր շուրջիներին վրա: Ընդունելով Հիսուսին որպես Տե՛ր՝ մեր մեղքերն ընդունելը ու ներում խնդրելը հիմքն են հավատարիմ ու առողջ հարաբերության Աստծո և ուրիշների հետ:

Աղոթք - Տե՛ր, օգնիր մեզ ճանաչելու, խոստովանելու ու մեր մեղքերից ետ դառնալու, որպեսզի կարողանանք սնուցվել սիրո հարաբերություններով Քեզ ու ուրիշների հետ Ռիսուսի անունով:

Աստված կարող է սրբել մեր սրտերի մեղքերը, որոնք քանդում են մեր մտերմությունը Իր և ուրիշների հետ:

Կարդա՛ր Հեսու 7.1-12

Այլևս ձեզ հետ չեմ
լինի, քանի այդ
նգովվածը չէք
վերացնի ձեր միջից:
Հեսու 7.12

Ազատություն տոնել

Առևանգվելուց, 13 տարի պատանդ մնալուց ու ազատ արձակվելուց հետո թերթի նորգելանդացի նկարիչ Օլաֆ Ուիլիզը լայն ժպիտով հայտարարեց. «Ավելի կենդանի եմ գգում հիմա, քան իմ ամբողջ կյանքի ընթացքում»:

Դժվարընկալելի պատճառներով ազատ արձակվելը ավելի բերկրալից է, քան ազատ լինելը:

Նրանց համար, ովքեր ամեն օր վայելում են ազատություն, Օլաֆի ուրախությունը լավ հիշեցում է, թե ինչպես ենք հեշտություն մոռանում, թե որքան օրհնված ենք: Սա նաև ճիշտ է հոգևոր իմաստով: Մեզնից նրանք, ովքեր Քրիստոնյա են եղել երկար ժամանակ, հաճախ են մոռանում, թե ինչպիսին է մեղքի մեջ պատանդ լինելը: Մենք կարող ենք դյուրահաճ ու ապերախտ լինել: Սակայն հետո Աստված հուշարար է ուղարկում մեզ նոր հավատացյալի կերպարի մեջ, ով տալիս է լիառատ վկայություն, թե Նա ինչ է արել մեր կյանքում, ու դարձյալ տեսնում ենք մեր ուրախությունը, երբ «հոգու օրենքն ինձ ազատեց մեղքի ու մահվան օրենքից» (Հռոմ. 8.2): Եթե ազատությունը քեզ թվում է ճանճրացնող, և կամ դու կենտրոնանում ես այն բաների վրա, որոնք չես կարող անել, նկատի ունեցիր այս. «Բայց հիմա, որ մեղքից ազատված եք և Աստծու ծառա եք դարձել, սրբանալու համար ձեր պտուղն ունեք, և դրա վերջը հավիտենական կյանքն է» (6.22):

Ուրախ եղիր Քրիստոսով քեզ տրված ազատության համար՝ շնորհակալ լինելով Աստծուն այն բաների համար, որոնք կարող ես անել՝ որպես Իր ծառան:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ իմ ունեցած ազատության համար, որ Դու տվեցիր Քո Որդու միջոցով: Ամեն:

Քրիստոսի համար ապրելը ճշմարիտ ազատություն է բերում:

Կարդա՛ր
Յոռմ. 6.15-23

Որովհետև Չիսուս Քրիստոսի մեջ կյանքի հոգու օրենքն ինձ ազատեց մեղքի ու մահվան օրենքից: Յոռմ. 8.2

Կարող եմ դա ասել

«Նախընտրություն գաղափարը մեծագույն ազդակներից է քույր-եղբայր մրցակցություն մեջ», - գրում է մանուկների վարվելակերպի զարգացման բժշկ դոկտոր Բարբարա Հաուարդը իր «Երբ ծնողները նախընտրած զավակ ունեն» հոդվածում:

Հին Կտակարանից լավ օրինակ է Հովսեփի պարագան, երբ հոր նախընտրած որդին լինելու համար պատճառ դարձավ իր եղբայրների բարկության (Ծննդ. 37.3-4): Հետևաբար, նրանք նրան ծախեցին Եգիպտոս գնացող վաճառականների ու այնպես ներկայացրին, թե մի կենդանի է նրան պատառոտել (37.12-36):

Կարդա՛
ԾՆՆՂՈՑ 45.1-11

Արդ, ոչ թե դուք եք ինձ ուղարկել այստեղ, այլ՝ Աստված: ԾՆՆՂ. 45.8

Նրա երազը փշրված էր, ու ապագան անհույս էր թվում: Սակայն Հովսեփը իր կյանքի ճամփորդության ընթացքում որոշեց հավատարիմ լինել Աստծուն ու Նրան վստահել ցանկացած պարագայում: Իր գործատիրոջ կնոջ սուտ զրպարտություններից հետո նա բանտարկվեց մի բանի համար, որ չէր գործել: Նա պայքարեց իր հանդեպ եղած անարդարության դեմ ու շարունակեց վստահել Աստծուն: Տարիներ հետո՝ սովի ժամանակ, իր եղբայրները Եգիպտոս եկան ցորեն գնելու ու վախեցան, երբ իմացան, որ իրենց անարգած կրտսեր եղբայրը հիմա Եգիպտոսի Կառավարիչն էր: Սակայն Հովսեփը նրանց ասաց. «Բայց դուք մի՛ տրտմեք, մի՛ նեղվեք, որ ինձ վաճառել եք այստեղ բերելու համար, որովհետև Աստված ձեզ փրկելու համար է ուղարկել ինձ այստեղ ձեզնից առաջ: Արդ, ոչ թե դուք եք ինձ ուղարկել այստեղ, այլ՝ Աստված» (45.5, 8):

Հովսեփի ազնիվ խոսքերը ինձ մտածել են տալիս, թե ես վրեժխնդի՞ր պիտի լինեմ, թե՞ բարեգուլթ, որովհետև իմ սիրտը վստահում է Տիրոջը:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, տուր մեզ հավատք՝ Քեզ վստահելու, ու կարողություն՝ Քո բարի ձեռքը տեսնելու մեր կյանքի ճանապարհի վրա: Ամեն:

Կյանքի խավարագույն ժամերին միայն հավատքի աչքերով կարող ենք տեսնել Աստծո սիրող ձեռքը:

Առաջին քայլը

Մեծ համբերությամբ աշխատեցինք մեր որդեգրած մանչուկի բուժման ու մեր ընտանիքում նրա նոր կյանքին հարմարվելու վրա: Նրա՝ փոքր հասակից որբ մնացած լինելու խոցող զգացումը նրան դրդում էր ժխտական վարվելակերպի: Հակառակ սեր ցույց տալու մեր թափած ջանքերին՝ զրկանքի փորձառության պատճառով նրա ունեցած վերաբերմունքը ինձ վրդովմունքի հասնելու աստիճան ետ մղեց: Ամոթագին տառապանքս կիսեցի հոգեբույժի հետ: Նրա ազնիվ խոսքը. «Նա կարիք ունի, որ դու անես առաջին քայլը՝ ցույց տալով, որ արժանի է սիրո, մինչ նա կկարողանա իր սերը արտահայտել», ապտակի նման հարվածեց ինձ:

**Կարդա՛ր
Ա Յովի. 4.7-21**

Մենք սիրենք նրան,
որովհետև առաջ
նա սիրեց մեզ:
Ա Յովի. 4.19

Հովհաննես առաքյալի նամակը մղում է ընթերցողներին սիրո անհավատալի խորության՝ հայտարարելով, թե Աստծո սերը ազբյուրն ու պատճառն է մեր՝ իրար հանդեպ սեր ունենալու (Ա Հովհ. 4.7, 11): Ընդունում եմ, որ շատ հաճախ նման սեր ցույց չենք տալիս ուրիշներին, լինեն նրանք օտարականներ, բարեկամներ կամ մեր զավակները: Հովհաննեսի խոսքերը վերանորոգված փափագի ու այն կատարելու կայծ դրեցին իմ մեջ. Աստված առաջին քայլն արեց: Նա իր Որդուն տվեց՝ ցույց տալու իր Սիրո կատարելությունը մեր հանդեպ: Ես երախտապարտ եմ, որ Նա իր մեծ սիրով է մեզ սիրում, այն, ինչ մենք հաճախ չենք անում:

Թեև մեր մեղավոր վերաբերմունքի համար մենք արժանի չենք իր ողորմությանն ու սիրուն, Նա տակավին մեր հանդեպ իր սերն է ապացուցում (Հռոմ. 5.8): Առաջին քայլն անելով՝ Նա թախանձում է մեզ իրար սիրել՝ որպես ապացույց իր մեծ սիրո:

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ ինձ սիրում ես՝ հակառակ իմ բոլոր մեղքերին: Օգնիր, որ կարողանամ առաջին քայլը անել ուրիշներին սիրելու համար: Ամեն:

Աստված նախ սիրեց մեզ, որպեսզի մենք իրար սիրենք:

Գերազանց բարին

Մինչ հասակ էի նետում Զամայկայում, ծնողներս քրոջս և ինձ մեծացրին իբրև «բարի մարդիկ»: Մեր տանը բարի լինել նշանակում էր ճշմարտությունն ասել, հաջողություն արձանագրել դպրոցում ու աշխատանքում և եկեղեցի հաճախել առնվազն Ս. Մոնդյան ու Հարություն տոներին: Ես մտածում եմ, որ բարի լինելու այս սահմանումը ծանոթ է շատերին՝ անկախ մշակույթից: Պողոս առաքյալը փիլիպպեցիներին գրած նամակում գործածեց իր մշակույթի «բարի լինելու» սահմանումը՝ կարևոր մի կետ ցույց տալու համար:

Պողոս առաքյալը, իբրև առաջին դարի հավատարիմ հրեա, հետևեց իր մշակույթի բարոյական օրենքի տառին: Նա ծնվել էր «չիտակ» ընտանիքում, ուներ «չիտակ» դաստիարակություն և հետևում էր «չիտակ» կրոնին: Հրեական սովորության համաձայն՝ նա լավ մարդ լինելու բոլոր սովորները ուներ: Զորքորդ համարում նա գրում է, թե ինքը կարող է իր ունեցած բոլոր այս հատկությունների համար պարծենալ: Սակայն հակառակ այս բոլորին՝ Պողոսն ասում է իր ընթերցողներին ու մեզ, թե ավելին կա բարի լինելուց:

Նա գիտի, որ բարի լինելը նույնը չէ, ինչ Աստծուն հաճոյանալը: Պողոսը 7-8 համարներում գրում է, թե Աստծուն հաճո լինելը Տեր Հիսուսի հետ կապ ունի: Նա իր բարությունը դիտում է որպես վնաս, երբ համեմատում է «Հիսուս Քրիստոսին ճանաչելու գերազանցության հետ»: Մենք բարի ենք ու Աստծուն հաճո, երբ մեր հավատքն ու հույսը միայն Քրիստոսի վրա են և ոչ թե մեր բարության:

Պողոսը 7-8 համարներում գրում է, թե Աստծուն հաճո լինելը Տեր Հիսուսի հետ կապ ունի: Նա իր բարությունը դիտում է որպես վնաս, երբ համեմատում է «Հիսուս Քրիստոսին ճանաչելու գերազանցության հետ»: Մենք բարի ենք ու Աստծուն հաճո, երբ մեր հավատքն ու հույսը միայն Քրիստոսի վրա են և ոչ թե մեր բարության:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, մինչ փորձում եմ բարի կյանքով ապրել, օգնիր ինձ, որ գիտենամ, թե Տեր Հիսուսին ճանաչելը գերազանց բարության ճանապարհն է: Ամեն:

Մենք բարի ենք ու Աստծուն հաճո, երբ մեր հավատքն ու հույսը միայն Քրիստոսի վրա են ու ոչ թե մեր բարության:

Կարդա՛ Փիլիպ. 3.1-11

Եվ հենց ամեն ինչ էլ վնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Բրիստոսի գերազանց գիտության համար...:

Փիլիպ. 3.8

Մի հանգստյան օր

Մի կիրակի կանգ առա Հյուսիսային Լոնդոնի շենքերով խճողված մեր շրջանի միջով վազող կարկաչահոտ ջրի մոտ ու հիացա նրա գեղեցկությունը: Դիտելով ուժգնորեն վազող ջրերը ու լսելով թռչունների գեղգեղանքը՝ ինձ հանգիստ զգացի: Շնորհակալություն հայտնեցի Աստծուն, որ մեզ օգնում է, որ մեր հոգիների համար հանգիստ գտնենք:

Տերը շաբաթը հաստատեց իր ժողովրդի հանգստանալու ու նորոգվելու համար, որովհետև Նա ցանկացավ նրանց առաջընթացը:

Ինչպես տեսնում ենք Ելք գրքում, Նա հորդորում է վեց տարի հողը մշակել, բայց յոթերորդ տարին հանգիստ թողնել: Այդպես և վեց օր աշխատել ու յոթերորդ օրը հանգստանալ: Իր սոված կյանքի այս ուղին առանձնացրեց Իսրայելի ժողովրդին ուրիշ ազգերից, և ոչ միայն, այլ նաև թույլ տվեց, որ իրենց տանը եղող օտարներն ու գերիները հետևեն այս ձևին:

Մենք մեր հանգստյան օրին կարող ենք մոտենալ ակնկալություններով ու ստեղծագործական մտքով՝ ընդունելով առիթը պաշտելու, ու անել այն, ինչով կարող ենք սնուցել մեր հոգիները: որոնք կարող են լինել տարբեր՝ մեր նախապատվություններին համաձայն: Ոմանք պիտի ուզեն խաղեր խաղալ, ուրիշները այգեգործություն անել, ոմանք բարեկամների ու ընտանիքի հետ միասին ճաշել, ոմանք էլ կեսօրից հետո քնել:

Ինչպես կարելի է հանգստյան օր ունենալու գեղեցկությունն ու հարստությունը վերահաստատել, եթե այն պակասում է մեր կյանքից:

Աղոթք - Տեր Աստված, Քո մեջ եմ գտնում մեր հանգիստը: Շնորհակալ եմք, որ մեզ ստեղծել ես թե՛ գործելու և թե՛ հանգստանալու համար: Խնդրում եմք, օգնիր մեզ գտնելու մեր կյանքերի շիտակ կշիռը: Ամեն:

Մեր հավատքի ու ծառայության մեջ աշխատանքի չափ կարևոր է հանգիստը:

Կարդա՛ր
Ելք 23.10-13

Վեց օր կաշխատես, իսկ յոթերորդ օրը կթողնես, որ հանգստանան...

Ելք 23.12

Ուրախ սիրտ

Թողնուհուս նախասիրած երաժշտությունը Ջոն Ֆիլիպ Սուգայի քայլերգերից մեկն է: Սուգան՝ «քայլերգի թագավորը», 19-րդ դարի վերջին Միացյալ Նահանգների երգահաններից էր: Մորիան 20 ամսական փոքր երեխա է: Նա պարզապես սիրում է երաժշտությունը, նույնիսկ կարողանում է զգալ մի քանի նոտաներ ու հարմարեցնում ուրախ առիթներին: Երբ մեր ընտանիքը հավաքվում է, հաճախ մենք երգում ենք այս երգը՝ ծափերով ու աղմկոտ ձայներ հանելով, թոռնիկները պարում են ու շրջանակով քայլում եղանակի յուրաքանչյուր զարկի հետ: Միշտ էլ այս հավաքույթների ավարտին ունենում ենք գլխապտույտ ունեցող մանուկներ ու շատ ծիծաղ:

Կարդա՛ր
Բ Մնաց. 7.1-11

Աղաղակեցե՛ք Տիրոջ առջև, երկրի բոլոր բնակիչներ: Սաղմ. 99.2

Մեր զվարճալի բացականչությունները ինձ հիշեցնում են այն Սաղմոսը, որ մեզ հորդորում է «ծառայել Տիրոջն ուրախությունով» (Սաղմ. 99.2): Երբ Սողոմոն թագավորը իր շինած տաճարը նվիրեց Աստծուն, Իսրայելի ժողովուրդը ցնծությունով պաշտամունք բարձրացրեց (Բ Մնաց. 7.5-6): Հավանաբար Սաղմոս 99-ը իրենց երգած երգերից մեկն էր այդ օրը: Սաղմոսը հռչակում է. «Աղաղակեցե՛ք Տիրոջ առջև, երկրի բոլոր բնակիչներ, ծառայեցե՛ք Տիրոջն ուրախությունով: Նրա առջև ելե՛ք ցնծությամբ... Մտե՛ք նրա դռներով խոստովանությամբ եւ մտե՛ք նրա սրահները՝ օրհնությամբ. գոհություն՝ մատուցեցե՛ք Տիրոջն ու օրհնեցե՛ք անունը նրա» (Հմ. 2-4): Ինչո՞ւ: Որովհետև «քաղցր է Տերը, նրա ողորմությունը հավերժ է...» (Հմ. 5): Մեր բարի Աստվածը մեզ սիրում է: Երախտապարտ սրտով եկեք գոչենք. «Նրա առջև ելե՛ք ցնծությամբ» (Սաղմ. 99.3):

Աղոթք - Սիրելի՛ Տեր, մեզ շնորհակալ սիրտ տու՛ր Քեզ պաշտելու համար, որովհետև Դու բարի ես և ինչ անում ես, բարի է: Քո սերը հավիտենական է: Ամեն:

Պաշտամունքը ուրախ սրտի հորդումն ու հեղումն է:

ԽՈՒՍԱՓԻԷԼ

2004-ի հունիսին կանադացի դահուկորդ Բեքի Աքոթը ստացավ օլիմպիական ոսկի մեդալ: Սա հետաքրքիր է, որովհետև ձմեռային օլիմպիական մրցումները տեղի էին ունեցել 2002-ին Միացյալ Նահանգների Յութա նահանգում: Աքոթը շահել էր պղնձյա մեդալը՝ լինելով երրորդը: Սակայն ամիսներ անց առաջին երկուսի մեդալները հո են վերցվում, երբ պարզվում է, որ նրանք արգելված նյութեր են օգտագործել: Լավ է, որ Աքոթը ստացավ իր ոսկի մեդալը, սակայն առիթը չունեցավ հպարտությամբ բեմ բարձրանալու և ստանալու մրցանակը իր երկրի դրոշի ներքո և հիմնի նվազակցությունամբ: Այդ անարդարությունը այլևս հնարավոր չէ վերացնել: Ցանկացած անարդարու-

Կարդա՛ ծճնդոց 4.1-12

Հավատով Աբելը
Կայենից ավելի լավ
գոհ մատուցեց Աստ-
ծուն: Եբր. 11.4

թյուն մեզ նեղացնում է, ու վստահաբար շատ ավելի մեծ սխալներ կան, քան արժանանալիք մրցանակներից զրկումը: Կայենի ու Աբելի պատմությունը ցույց է տալիս անարդարության գերագույն օրինակ (Ծննդ. 4.8): Առաջին հայացքից կարող է թվալ, թե Կայենը իր եղբոր սպանության պատճառով գալիք դատապարտությունից խուսափեց: Նա երկար տարիներ ապրեց, ունեցավ ամբողջական կյանք ու նաև քաղաք կառուցեց (Հմ. 17): Սակայն Աստված անձամբ հակադարձեց Կայենին. «Այդ ի՞նչ արեցիր, քո եղբոր արյան կանչը բողբոսում է ինձ» (Հմ. 10): Հետո Նոր Կտակարանը արձանագրում է Կայենին որպես անտեսելու օրինակ (Ա. Հովհ. 3.12, Հուդա 1.11): Սակայն Աբելի համար կարգում ենք. «Հավատքով Աբելը... տակավին հիմա էլ խոսում է» (Եբ. 11.4):

Աստված արդարություն է սիրում, սխալները չտկում է ու տկարներին պաշտպանում: Իվերջո, ոչ ոք չի կարող խուսափել իր գործած անարդարությունից: Ոչ էլ Նա է Իր համար մեր հավատքով կատարած բարի գործերը անմրցանակ թողնում:

Աղոթք - Հայր, ինչպես Քո Որդին մեզ սովորեցրեց աղոթել, խնդրում ենք, որ Քո թագավորությունը գա, Քո կամքը լինի՝ այս կտորած աշխարհը փոխելու: Շնորհակալ ենք, որ մեզ փրկում ես: Ամեն:

Մեղքը չպիտի դատապարտվի մեր ուզած ձևով, այլ այնպես, ինչպես Աստված է տեսնում:

Հիսուսին հանձնվել

Մատանայի ոտնահետքը հետք է Մասաչուսեթս նահանգի Իբստուիչ շրջանի մի բլրի վրա գտնվող եկեղեցու մեջ գտնվող որձաքարի վրա: Տեղական ավանդույթյան համաձայն՝ «ոտնահետք»ը դրոշմվել է 1740-ի աշնան մի օր, երբ ավետարանիչ Ջորջ Ուայթֆիլդը այնպես հզոր կերպով քարոզեց, որ սատանան ցատկեց եկեղեցու զանգակատնից ու ոտքի վրա ընկավ որձաքարին քաղաքից փախչելու ժամանակ:

Հակառակ նրան, որ սա ավանդույթյուն կամ առասպել է, պատմությունը հիշեցնում է քաջալերող մի ճշմարտություն Աստծո սուրբ Խոսքից: Հակոբոսի 4.7-ը մեզ հիշեցնում է. «Արդ հնազանդվեցե՛ք Աստծուն, հակառակ՝ կացեք սատանային, ու նա ձեզանից կփախչի»:

Աստված մեզ տվել է այն զորությունը, որով կարող ենք դիմադրել մեր հակառակորդին ու կյանքում ունեցած փորձություններին: Աստվածաշունչը մեզ ասում է. «...Մեղքը ձեզ վրա պիտի չիշխի» (Հռոմ. 6. 14) Աստծո սիրո շնորհի պատճառով Հիսուս Քրիստոսի միջոցով: Մինչ շտապում ենք դեպի Հիսուսը. երբ փորձությունը հարձակվի, նա մեզ կարողություն կտա հաստատ մնալու Իր զորության մեջ: Ոչ մի բան չի կարող հաղթել նրան, որովհետև նա «հաղթել է աշխարհին» (Հովհ. 16.33):

Մինչ մեր անձերը հանձնում ենք մեր Փրկչին՝ անսալով նրան ու քայլելով Իր Խոսքին հնազանդվելով, նա մեզ օգնում է: Երբ Իրեն ենք հանձնվում, փորձության փոխարեն նա կարողանում է մեր պատերազմները մղել, ու Իր միջոցով մենք հաղթող ենք դուրս գալիս:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, իմ կամքը Քեզ եմ հանձնում այսօր: Օգնիր ինձ Քեզ մոտ մնալու միշտ ու սիրելու Քեզ՝ հնազանդվելով Քեզ: Ամեն:

«Ամենից անգոր սրբի աղոթքն իսկ սոսկում է պատճառում սատանային»: Օսվալդ Չամբերս

Կարդա՛
Հակոբ. 4.6-10

Նույնպես էլ դուք ձեր անձերը մեղքի համար մեռած համարեցեք, իսկ Աստծու համար կենդանի: Հռոմ. 6.11

Աստծուն մոտենալ

Մի կին, ցանկանալով աղոթել, պարապ աթոռ է վերցնում ու նրա առջև ծնկի իջնում: Արցունքներով ասում է. «Իմ սիրելի երկնավոր Հայրս, եթե կարելի է, այստեղ նստի՛ր, որովհետև Դու և ես խոսելու ենք»: Ապա նայելով դատարկ աթոռին՝ սկսում է աղոթել: Նա Աստծուն իր վերաբերմունքի մեջ վստահություն է ցույց տալիս ու երևակայում, թե Աստված նստել է աթոռի վրա, ու հավատում է, թե Նա լսում է իր խնդրանքին:

Աստծո հետ ժամանակ անցկացնելը կարևոր պահ է: Աստված մեզ մոտենում է, երբ մենք ենք Իրեն մոտենում (Հակ. 4.8): Նա մեզ վստահեցնում է.

«Ահա՛ ձեզ հետ եմ ամեն օր» (Մատթ. 28.20): Մեր երկնավոր Հայրը միշտ սպասում է, որ Իրեն մոտենանք, ու միշտ պատրաստ է մեզ լսելու:

Շատ հաճախ մենք պայքարում ենք աղոթելու համար, որովհետև հոգնած, քնատ, հիվանդ ու տկար ենք զգում: Սակայն Տեր Հիսուսը մեզ համակրում է, երբ մենք տկար ենք լինում ու փորձություններ ենք դիմազրավում (Եբր. 4.15): Ուստի պիտի «համարձակությամբ մոտենանք, որ ողորմություն ընդունենք ու շնորհ գտնենք պատշաճ ժամանակին մեզ օգնելու» (Հմ. 16):

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ կարող եմ Քեզ աղոթել ամեն տեղ ու ամեն ժամանակ: Դիր իմ սրտի մեջ ցանկություն՝ Քեզ մոտենալու: Ուզում եմ սովորել Քեզ մոտենալ հավատքով ու վստահությամբ: Ամեն:

Կարդա՛
Եբր. 4.14-16

Ինձ համար բարիք է մերձենալ Աստծուն, հույսս դնել Տիրոջ վրա:
Սաղմ. 72.28

Աստված ամեն տեղ է ու պատրաստ է մեզ լսելու:

Մտերմիկ մանրամասներ

Տիեզերքը զարմանալիորեն վիթխարի է: Լուսինը մեր շուրջ պտտվում է ժամում շուրջ 2,300 մղոն արագությամբ: Երկիրը արևի շուրջ պտտվում է ժամում 66,000 մղոն արագությամբ: Մեր արևը 200 երկիրիոն այլ աստղերից եւ մեր համաստեղության եռլիոնից ավելի մոլորակներից մեկն է: Ու մեր Ծիր Կաթին աստղաբույլը միայն մեկն է 100 երկիրիոն այլ համաստեղություններից, որոնք չըջում են տիեզերքում: Ապշեցուցիչ երևույթ է սա:

Բաղդատած այս վիթխարի տիեզերքի հետ՝ մեր փոքր մոլորակ երկիրը խիճից մեծ չէ, ինչպես մեր յուրաքանչյուրի կյանքը՝ ավազի հատիկից: Ու դեռ Աստվածաշնչի համաձայն՝ համաստեղությունների Աստվածը մանրէի արժեք ունեցող մեզնից յուրաքանչյուրին մանրակրկիտ կերպով դիտի ու ճանաչում է: Նա մեր ստեղծվելուց առաջ իմացավ (Սաղմ. 138.13-16): Նա մեզ վրա հսկում է, մինչ մենք մեր առօրյայով ենք ապրում, ու լսում է մեր յուրաքանչյուր խորհուրդը (Հմ. 1-6): Կարող է դժվար լինել ընդունել այս իրողությունը: Այս փոքր «խիճ»ը մեծ հարցեր ունի պատերազմի ու սովի նման, ու մենք կարող ենք հարցականի տակ դնել Աստծո հոգատարությունը մեր դիմազրաված դժվարությունների ժամանակ: Սակայն երբ Դավիթ Թագավորը 138-րդ Սաղմոսը գրեց, ճգնաժամի մեջ էր (Հմ. 12-20): Ու երբ Հիսուսը ասաց, թե Աստված մեր գլխի յուրաքանչյուր մազը հաշվում է (Մատթ. 10.30), Նա խաչելության աշխարհի մեջ էր ապրում: Այս իրողությունը պարզապես Աստծո հոգատարության փափազը չէ, այլ իսկական ճշմարտություն: Նա, որ հսկում է համաստեղության պտույտը, մեզ լավ է ճանաչում: Այս ճշմարտությունը մեզ օգնում է մեր դիմազրաված դժվարությունների մեջ:

Աղոթք - Հայր Աստված, Քո աչքը վրաս է, նույնքան, որքան երկնքի աստղերի: Շնորհակալ եմ Քո սիրո, հոգատարության և ուշադրության համար: Ամեն:

Կարդա՛ր
Սաղմոս 138.1-18

Դու իմացար իմ
ճիստուկացը, հեռ-
վից հասկացար իմ
մտածումները:
Սաղմ. 138.2

Տիեզերքի Աստված մեր մասին մտերմությամբ է հոգում:

Դեմ-հանդիման

Թեև աշխարհում ամեն ինչ կապված է աներևակայելի էլեկտրոնային միջոցներով, սակայն ոչ մի բան չի կարող փոխարինել այն ժամանակին, որ անձնապես իրար հետ ենք անցկացնում: Երբ կհավում ենք ու զվարճանում իրար հետ, մենք զգում ենք մյուս անձի հուզումները՝ դիտելով նրա դեմքի արտահայտությունը: Նրանք, ովքեր իրար սիրում են, լինեն ընտանիքի անդամ կամ բարեկամ, սիրում են կիսվել երես առ երես:

Դեմ-հանդիման հաղորդակցությունը մենք տեսնում ենք Տիրոջ ու Մովսեսի միջև, այն մարդը, որին Աստված ընտրեց իր ժողովրդին առաջնորդելու: Մովսեսը վստահությունաբաժնի տարիների ընթացքում ու շարունակեց Աստծուն հետևել՝ հակառակ Իսրայելի ժողովրդի ապստամբության ու պոռնկության: Ժողովրդի՝ Տիրոջը պաշտելու փոխարեն ոսկի հորթին պաշտելուց հետո (տե՛ս՝ Ել. 32) Մովսեսը վրան կառուցեց բանակատեղիից դուրս Աստծուն հանդիպելու համար, ու ժողովրդին հեռվից հետևեց (33.7-11): Երբ Աստծո ներկայությունը խորհրդանշող ամպի սյունը վրանի վրա իջավ, Մովսեսը խոսեց ժողովրդի փոխարեն: Տերը խոստացավ, որ իր ներկայությունը պիտի ուղեկցի նրանց (Հմ. 14):

Հիսուսի՝ խաչի վրա մահվան ու հարության պատճառով մենք այլևս կարիք չունենք Մովսեսի նման մեկին Աստծո հետ խոսելու համար: Մենք կարող ենք բարեկամություն հաստատել, իր հետ հանդիպել ու իր հետ ազատորեն հաղորդակցվել Քրիստոսի միջոցով (Հովհ. 15.15):

Աղթոք - Սիրելի՛ Յայր, օգնիր, որ կարողանանք Քեզ հետ հաղորդակցվել դեմ-հանդիման, ինչպես արեց Մովսեսը: Օրհնիր մեզ այսօր ու հավիտյան: Ամեն:

Մենք կարող ենք Աստծո հետ խոսել, ինչպես խոսում ենք մեր բարեկամների հետ:

Կարդա՛
Ելք 33. 7-14

Տերը Մովսեսի հետ խոսում էր դեմ-հանդիման, ինչպես մեկը կը խոսեր իր բարեկամի հետ:

Ելք 33.11

Պատրաստվում ես

Ավագ դպրոցում ուսանելու ընթացքում՝ երկու տարի աշխատեցի կարգ-անուշդ սպասարկող ճաշարանում: Այդ գործի մի շարք կողմեր դժվար էին: Միայն պատվերների պարագայում հաճախորդները բարկանում էին, մինչ ես փորձում էի ներողամտություն հայցել: Այդ գործը թողնելուց հետո դիմեցի համակարգչային գործի իմ համալսարանում: Գործատերերը ավելի հետաքրքրված էին ճաշարանում իմ ունեցած աշխատանքով, քան համակարգչային գիտելիքներովս: Նրանք ուզում էին իմանալ, թե ինչպես էի վարվում հաճախորդների հետ: Անախորժ զրույցյուկներում իմ ունեցած փորձառությունը պատրաստեց ինձ ավելի լավ աշխատանքի: Երիտասարդ Դավիթը հարատևեց մի փորձառություն մեջ, որը մենք անախորժ ենք համարում: Երբ Իսրայելը մարտահրավեր ստացավ փղշտացիներից մեկին ուղարկելու Գողիաթի հետ մենամարտելու, ոչ ոք բավարար քաջությունը չունեցավ այդ պայքարի համար: Ոչ մեկը՝ բացի Դավիթից: Սավուղ թագավորն էլ ուրախ չէր նրան կռվի ուղարկելու, սակայն Դավիթը բացատրեց, որ որպես հովիվ նա կռվել ու սպանել էր առյուծին ու արջին՝ պաշտպանելու համար իր ոչխարներին (Ա. Թագ. 17.34-36): Նա վստահորեն ասաց. «Եթե Տեր Աստված ինձ փրկել է առյուծի ու արջի ճանկերից, ինձ կփրկի նաև այդ անթլփատ այլազգու ձեռքից» (Հմ. 37): Հովիվ լինելը շատ հարգանք չբերեց Դավիթին, սակայն նրան պատրաստեց կռվելու Գողիաթի հետ ու վերջապես լինելու Իսրայելի մեծագույն թագավորը: Մենք կարող ենք դժվար վիճակների մեջ լինել, սակայն նրանց միջով անցնելիս Աստված մեզ պատրաստում է ավելի մեծ բանի համար:

Կարդա՛ Ա Թագ. 17.8, 32-37, 48-50

Եթե Տեր Աստված ինձ փրկել է առյուծի ու արջի ճանկերից, ինձ կփրկի նաև այդ անթլփատ այլազգու ձեռքից: Ա Թագ. 17.37

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ հաստատ մնալ իմ կյանքի անախորժ հանգամանքներում՝ իմանալով, որ Դու ինձ պատրաստում ես ավելի մեծ բանի համար: Ամեն:

Աստված գործածում է ներկան՝ պատրաստելու մեզ ապագայի համար:

Խոր արմատներ

Մաքվոյա ծառը երեք որդան փայտատեսակի ծառերից մեկն է, որ աշխարհի ամենամեծ ու երկարակյաց բույսն է: Այն կարող է աճել 300 ոտք բարձրությամբ, կշռում է մոտ 1.1 միլիոն կգ ու ապրում է շուրջ 3000 տարի: Սակայն այս ծառը իր մեծություն ու երկարակեցություն համար շատ բան է պարտական հողի տակ գտնվող 12-14 ոտք միահյուսված խոր արմատներին, որոնք տարածվում են շուրջ 4000 քառակուսի մետր տարածության վրա ու ուժգին ամրացնում են այդ հսկա ծառը:

Սակայն այս որդան փայտատեսակի արժեքավոր արմատների ցանցը շատ փոքր է՝ համեմատած ազգային պատմության, կրոնի ու կանխատեսության հետ, որ գտնվում է Հիսուսի կյանքը: Մի առիթով Հիսուսը մի խումբ կրոնական առաջնորդների ասաց, թե այն գրքերը, որ նրանք սիրում ու վատահում են, պատմում են իր պատմությունը (Հովհ. 5:39): Նազարեթի ժողովարանում երբ նա բացեց Եսայի մարգարեի գիրքը ու կարդաց Իսրայելի Մեսիայի նկարագրությունը, ասաց. «Այս գրքում գրվածքն այսօր կատարվեց, որ ձեր ականջներով լսեցիք» (Ղուկ. 4:21):

Ապա իր հարությունից հետո Հիսուսն օգնեց իր աշակերտներին, որ հասկանան, թե ինչպես են Մովսես մարգարեի խոսքերը և նույնիսկ Իսրայելի երգերը ցույց տալիս, թե ինչու էր հարկավոր, որ նա չարչարվի, մեռնի ու մեռելներից հարություն առնի (Ղուկ. 24:46):

Ի՞նչ սքանչելի ու մեծաշուք է տեսնել Հիսուսին արմատավորված մի ազգի պատմության ու գրքերի մեջ, ինչպես նաև տեսնել, թե որքա՛ն ընդարձակորեն են մեր կյանքերը արմատավորված՝ Նրան ունենալու մեր կարիքի մեջ:

Աղոթք - Երկնքում եղող Յայր, օգնիր մեզ բնավ չմոռանալ, թե Իսրայելի պատմությունը ու Սուրբ Գրքի ներշնչած խոսքերը խորապես հաստատում են, որ մենք Քո Որդու կարիքն ունենք: Ամեն:

Կարդա՛ր
Ղուկաս 24. 44-49

Այն

նրանց միտքը բաց
արեց, որ գրքերը
հասկանան:

Ղուկ. 24.45

Ամբողջ Գիրքը օգնում է մեզ տեսնելու, որ մենք Հիսուսի կարիքն ունենք:

Ծիշտ հոր պես

Ինչքան գեղեցիկ է տեսնել մի զավակի, որ կրկնօրինակում է իր ծնողներին: Հաճախ ենք հանդիպում փոքրիկների, որոնք, մեքենայի իրենց աթոռիկին նստած, երբեմն բռնում են երևակայական մի ղեկ և ուշադրությամբ հետևում, թե ինչ պիտի լինի հոր հաջորդ շարժումը:

Հիշում եմ, որ նույնն էի անում, երբ փոքր էի. ոչինչ ավելի մեծ հաճույք էր պատճառում ինձ, քան անել ճիշտ այն, ինչ հայրս էր անում: Վստահաբար նա ավելի ուրախանում էր՝ տեսնելով, որ իր արածներն եմ ընդօրինակում: Ուզում եմ մտածել, որ Աստված էլ նո՛ւյնը զգաց, երբ տեսավ Իր սիրելի Որդու անելն այն, ինչ Ինքը արեց. կորածներին մոտենալ, կարոտյալներին օգնել ու հիվանդներին բժշկել: Հիսուսն ասաց. «Որդին իրենից չի կարող ոչինչ անել, եթե չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ նա անում է, հենց Որդին էլ այդ բանը նրա նման է անում» (Հովհ. 5.19):

Մենք էլ ենք հրավիրված նույնը անելու ու «Աստծուն նմանվելու... ինչպես սիրելի զավակներ... և սիրո՛վ ապրելու» (Եբ. 5.1-2): Մինչ շարունակում ենք աճել՝ Հիսուսին նմանվելու համար, թող սիրե՛նք, ինչպես Հայրը սիրե՛ց, ներե՛նք, ինչպես Ինքը ներե՛ց, հոգա՛նք այնպես, ինչպես Ինքը հոգա՛ց, ու ապրենք այնպիսի կյանքով, որ Իրեն է հաճելի: Հաճույք է ընդօրինակել Նրա արարքները Սուրբ Հոգու գործությամբ՝ վստահ լինելով, թե մեր վարձատրությունը սիրո Աստծո գործալից ու գթոտ ժպիտն է:

Աղոթք - Տե՛ր Գիսուս, շնորհակալ եմք, որ ցույց ես տալիս մեզ Դորը տանող ճանապարհը: Օգնիր, որ ավելի ու ավելի Քեզ ու Դորը նմանվեմք ամեն օր: Ամեն:

Չայրը տալիս է իր Սուրբ Գոգին՝ մեզ Իր Որդուն նմանեցնելու համար:

Կարդա՛ր Չովհ. 5.17-20

Որդին իրենից չի կարող ոչինչ անել, եթե չտեսնի Դորն անելիս, որովհետև ինչ որ նա անում է, հենց Որդին էլ այդ բանը նրա նման է անում: Չովհ.5.19

Պիտակներից այն կողմ

Մեր քաղաքում գտնվող մի եկեղեցի ունի եզակի բարի գալուստի քարտ, որ հստակ է դարձնում Աստծո սերն ու շնորհը բոլորի հանդեպ: Քարտն ասում է. «Եթե դու սուրբ, մեղավոր, կորցնող, շահող, գինեմոլ, կեղծավոր, խարդախ, վախկոտ... ես, բարի ես եկել այստեղ»: Հովիվներից մեկն ինձ ասաց. «Քարտը մենք միասին ենք կարդում ամեն Կիրակի մեր պաշտամունքի ժամանակ»: Որքա՞ն հաճախ ենք մենք ընդունում նման պիտակներ ու թույլ տալիս, որ դրանք սահմանեն, թե մենք ով ենք: Ու որքան դյուրությամբ ենք ուրիշներին պիտակում նման առիթներով: Սակայն Աստծո շնորհը անտեսում է բոլոր պիտակները, որովհետև արմատավորված է Իր սիրո մեջ ու ոչ թե մեր անձնական ըմբռնումի: Մենք մեզ լավ կամ վատ, հրաշալի կամ սոսկալի, կարող կամ անօգուտ ենք դիտում, դեռ կարող ենք հավիտենական կյանքը ստանալ որպես Աստվածային պարգև: Պողոս առաքյալը Հռոմում եղող հավատացյալներին հիշեցրեց՝ ասելով. «Որովհետև մենք դեռ տկար էինք, Քրիստոսը որոշված ժամին մեռավ ամբարիշտների համար» (Հռոմ. 5.6):

Տերը չի պահանջում մեզնից փոխվել մեր կարողությունը վստահելով: Ընդհակառակը, Նա հրավիրում է մեզ մոտենալու Իրեն, ինչպիսին որ ենք, հույս, բժշկություն ու ազատություն գտնելու համար: «Բայց Աստված մեր նկատմամբ Իր սերը հայտնեց, երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ» (Հմ. 8): Աստծո ներումը անտեսում է մեր ճախողության ու հպարտության պիտակները:

Աղոթք - Երկնավոր Դայր, շնորհակալ ենք Քո հիանալի սիրո համար, որ ցույց ես տալիս Որդուդ միջոցով: Ամեն:

Տերը պատրաստ է և ցանկանում է մեզ այնպիսին, ինչպիսին ենք:

Կարդա՛ր Հռոմ. 5.1-11

Բայց Աստված մեր նկատմամբ իր սերը հայտնեց. երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ: Հռոմ. 5.8

Բոլորից հզոր

Բրազիլիայի ու Արգենտինայի սահմանին գտնվող Իգուազու-գու գետի բարձունքից թափվող 275 ջրվեժների ցանցով: Բրազիլիայի կողմը գտնվող պատի վրա փորագրված է Սաղմոս 92.4-ի խոսքը. «Առատ ջրի ձայնից ծովի ալիքներն սքանչելի դարձան. սքանչելի ես դու բարձունքներում, Տե՛ր»: Իսկ նրա տակ փորագրված են այս խոսքերը. «Աստված միշտ ավելի մեծ է մեր նեղություններից»:

Սաղմոս 92-ի հեղինակը, որ արձանագրեց այս խոսքերը թագավորների իշխանության ժամանակ, գիտեր, թե Աստված գերազույն հեղինակութունն էր:

Նա գրեց. «Տերը թագավորեց...

Սկզբից է պատրաստված գահը քո, և հավերժ ես դու» (Հմ. 1-2): Հոգ չէ, որքան էլ բարձր լինեն հեղեղներն ու ալիքները, Տերը այդ բոլորից ավելի մեծ ու հզոր է: Թափվող ջրերի շառաչը իրապես վեհափառ է, սակայն բոլորովին տարբեր երևույթ է պատին խփվող ջրերի մեջ լինել: Կարող է պատահել, որ այդ վիճակի մեջ ես այսօր:

Ֆիզիկական, նյութական կամ հարաբերական հարցերը թվում են շատ մեծ, ու դու զգում ես այնպես, կարծես ջրվեժի հզոր ճնշման տակ լինես: Նման պարագաներում ունենք մեկը, որին կարող ենք դիմել: Նա Տերն է, «Նա, ով կարող է առատությամբ ամեն բանից ավելին անել, քան որ խնդրում ենք» (Եփ. 3.20), ու մեր բոլոր նեղություններից շատ ավելի մեծ է ու հզոր:

Աղոթք - Տե՛ր, գիտեմ, Դու հզոր ես ու ավելի մեծ, քան հանդիպող ցանկացած նեղություն: Վստահ եմ, որ այդ ամենի միջից ինձ ապահով կանցկացնես: Ամեն:

Բնավ մի չափիր Աստծո անսահման զորությունը քո սահմանափակ ակնկալություններով:

Կարդա՛ր Սաղմ. 92

Տերը թագավորեց,
վայելչություն հա-
գավ, զորություն
հագավ Տերն ու
գոտևորվեց:

Սաղմ. 92.1

Ամեն բանի ժամանակը

Երբ վերջերս ճանապարհորդում էի, դիտեցի ինձնից մի քանի շաբթ ատաղ նստած մի մոր ու նրա զավակներին: Մինչ նորածինը գոհունակությամբ խաղում էր, մայրը ժպիտով նրա աչքերի մեջ էր նայում ու այտերը փայփայում: Փոքրիկը աչքերը լայն բացած ապշահար մորն էր նայում: Հրճվանքով և ուշադիր դիտեցի նրանց՝ հիշելով զավակներին, երբ այդ տարիքին էին:

Մտածեցի Սողոմոն թագավորի ասած «երկնքի տակ եղող ամեն բանի» խոսքերի մասին, որոնք արձանագրված են Ժողովողի գրքի մեջ (Ժող. 3.1): Նա խոսում է մի շաբթ հակադրությունների մասին, թե ինչպես «ամեն բանի համար ժամանակ կա». «Մնելու ժամանակ եւ մեռնելու ժամանակ, տնկելու ժամանակ ու տնկվածը արմատից խլելու ժամանակ» (Հմ. 2): Թերևս Սողոմոն թագավորը այս համարների մեջ վհատություն զգացում է ունենում, երբ տեսնում է անիմաստ մի կյանք: Սակայն միաժամանակ տեսնում է Աստծո դերը յուրաքանչյուրի կյանքում, թե մեր գործը «պարզև է Աստծուց» (Հմ. 13), և «ինչ որ Աստված է անում, հավիտյան գոյատևում է» (Հմ. 14):

Մենք թերևս կարոտով ենք հիշում որոշ բաներ մեր կյանքում, ինչպես ես եմ հիշում իմ զավակներին, երբ փոքր էին: Սակայն գիտենք, թե Տերը խոստանում է մեզ հետ լինել ամեն ժամանակ (Ես. 41.10): Մենք կարող ենք իր ներկայությունը վստահել ու տեսնել, թե մեր նպատակը պիտի լինի միայն իր հետ քայլել:

Աղոթք - Տեր, Դու ինձ առաջնորդում ես իմ կյանքի տարբեր հանգրվաններում, ու ինչպիսի հանգամանքներում էլ լինեմ, ես վստահ եմ, որ Դու ինձ հետ ես: Ամեն:

Աստված տալիս է մեզ մեր ապրելու եղանակները:

**Կարդա՛ր
ժողովող 3.1-14**
Ամեն բանի ժամանակը կա, և աշխարհում ամեն գործ ունի իր ժամանակը: Ժող. 3.1

Հագնված

Հեղինակ Լորան Ուիլնսները իր գրած «Աստծուն Հագնել» գրքում ասում է, որ մեր հագուստները լուռ պատմում են ուրիշներին մեր ո՛վ լինելը: Ինչ որ հագնում ենք, կարող է արտացոլել մեր աշխատանքը, ինքնությունը եւ ընկերային վիճակը: Օրինակ՝ գրություններով շապիկները, առևտրականին բնորոշ հագուստը, մեքենա նորոգողի յուղոտած տաբատը: Ուիլնսները գրում է. «Առնչվող գաղափարն այն է, որ մեր հագուստների նման Քրիստոնյաներն անբարբառ խոսում են Հիսուսի մասին»:

Ըստ Պողոսի՝ մենք էլ անբարբառ կարող ենք Քրիստոսին ներկայացնել:

Հռոմեացիներ 13.14-ը ասում է. «Բայց Տեր Հիսուս Քրիստոսին հագե՛ք ու մարմնի համար խնամք մի տարեք դեպի ցանկություն»:
Ի՞նչ է նշանակում սա: Երբ հավատքով Քրիստոնյա լինենք, Քրիստոսի ինքնությունը մեր վրա կվերցնենք: «Որովհետև ամենքս Աստծու որդիներ ենք Քրիստոս Հիսուսին հավատալով»,¹ ասում է առաքյալը (Գաղ. 3.26): Այդ է լինելու մեր վիճակը: Սակայն ամեն օր կարիք ունենք նրա կերպարը հագնելու: Սա կարելի է անել՝ ջանալով ապրել Հիսուսի համար ու Հիսուսի նման լինել, աճելով Աստծու նմանվել, սիրել և հնազանդվել ու մեջք դարձնել այն մեղքից, որ ժամանակին մեզ գերի է դարձրել:

Այս աճումը Քրիստոսի մեջ արդյունքն է Սուրբ Հոգու՝ մեր մեջ գործելուն, ինչպես նաև մեր ցանկության՝ Իրեն մոտենալու՝ Խոսքը սերտելով, աղոթելով ու այլ հավատացյալների հետ հարբերվելով (Հովհ. 14.26): Երբ ուրիշները մեր խոսքերին ու մեր կեցվածքին են նայում, ի՞նչ ենք վկայում Քրիստոսի մասին:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, ուզում ենք Քո պատկերը ցուցանել: Օգնիր մեզ ավելի Քեզ նման լինելու ամեն օր: Օգնիր, որ աճենք Քեզ նմանվելու սիրո, ուրախության ու համբերության մեջ: Ամեն:

Երբ ուրիշները մեզ տեսնեն, թող նրանց տեսածը լավը ներկայացնի Փրկչի մասին:

Կարդա՛
Յոճմ. 13.11-14

Բայց Տեր Հիսուս
Քրիստոսին հագեք:
Յոճմ. 13.14

Իսկապես վախենում եմ

Մի պատանուհի բժշկական քննությունների ենթարկվելու նախօրյակին «Իսկապես վախենում ու սոսկում եմ» խայթող խոսքը Հայտարարեց իր բարեկամների դիմատետրին (Facebook): Անհրաժեշտ էր, որ բժշկական գործողությունների ու ստուգումների համար իր բնակարանից երեք ժամ հեռավորության վրա գտնվող հիվանդանոցում մնար ու վախով սպասեր՝ տեսնելու, թե բժիշկները ինչ պիտի կարենային ասել իր ունեցած հարցերի պատճառների մասին: Մեզնից ո՞վ, երիտասարդ կամ տարեց, չի ունեցել նման վախեր, երբ դիմագրավել է անցանկալի ու վախազդու հանգամանքներ: Եվ ո՞ր կարելի է դիմել օգնություն ստանալու համար: Ի՞նչ մխիթարություն կարելի է գտնել Աստծո խոսքում, որ կարող է մեզ քաջություն տալ նման պարագաներում: Ծնարությունը, թե Աստված մեզ հետ է ամեն դեպքում, կարող է մեզ օգնել, որ հույս ունենանք: Եսայի 41.13-ն ասում է. «Արդարե, ես եմ քո Տեր Աստվածը, որ բռնել եմ քո աջ ձեռքից, որ ասում եմ քեզ, թե՛ «Մի՛ վախեցիր, ես կօգնեմ քեզ»:

Առավել ևս՝ Աստված անբացատրելի ու մեր սրտերը հաստատող խաղաղություն է առաջարկում, երբ մեր դժվարությունները Իրեն ենք հայտնում աղոթքով (Փիլ. 4.6-7):

Աստծո խաղաղությամբ և Նրա վստահելի ներկայության միջոցով, որ ամեն մտքից վեր է (Հմ.7), մենք կարող ենք մեր հույսն ու օգնությունը գտնել՝ տոկալու այն վիճակներում, ուր իրապես վախենում ենք ու սոսկում:

Աղոթք - Սիրելի՛ երկնավոր Հայր, երբ վախենում եմ, ինձ հիշեցրու, թե Դու իմ ձեռքն ես բռնում ու խաղաղություն պարգևում: Շնորհակալ եմ, որ կարող եմ Քո ձեռքերին հենվել ու օգնություն ստանալ, երբ վախի մեջ եմ: Ամեն:

Աստված մեզ հետ է մեր բոլոր տառապանքներում:

Կարդա՛ Փիլիպ. 4.4-9

Ոչինչ հոգ մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն: Փիլիպ. 4.6

Յեղինակություն ստեղծեցի՞ր

1 1950-1960 թթ. Հովիվուդի երաժշտական շարժանկարները շատ հռչակավոր էին: Մասնավորաբար երեք դերասանուհիներ՝ Օդրի Հեփբուրնը, Նատալի Վուդը և Դեբորա Քերը հիացնում էին հանդիսատեսին իրենց հիանալի կատարմամբ: Նրանց դերի գրավիչ լինելու պատճառը ու փայլ տվողը նրանց սքանչելի երգեցողությունն էր: Սակայն Մարնի Նիքսոնն էր այս դասական շարժանկարների հաջողության իսկական պատճառը, որ կցեց ձայները յուրաքանչյուր դերասանուհու դերի, բայց չզնահատվեց երկար ժամանակ իր այս սքանչելի աշխատանքի համար:

Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու մեջ էլ գտնվում են մարդիկ, որոնք հավատարմորեն օժանդակում են ուրիշներին, որոնք աշխատանքի ու ծառայություն մեջ երևում

են հրապարակի վրա: Տերտիոսի գործը, որպես գրչի մարդ, եղավ Պողոսի հզոր ձայնը (Հռոմ. 16:22): Եպափրասի վարազույրի ետևում կատարած աղոթքները ազդու ու էական հիմքը եղան Պողոսի ու եկեղեցու համար (Կոր. 4:12-13): Լիդիան ուրախություն էր տունը բացեց հոգնած առաքյալի առջև, որպեսզի հանգիստ առնելու տեղ ունենա (Գործք Առ. 16:15): Հետևաբար, հնարավոր չպիտի լիներ Պողոսի գործը՝ առանց Քրիստոսով իր այս գործակիցներից ստացած աջակցության (Հմ. 7-18): Մենք կարող ենք տեսանելի դերեր չունենալ, սակայն գիտենք, թե Աստծուն հաճելի է, երբ հնազանդություն մեր կարևոր դերը կատարում ենք իր ծրագրի մեջ: Երբ Տիրոջ գործի մեջ ամեն ժամանակ ավելի՛ առաջանանք (Ա. Կորնթ. 15:58), մենք արժեք ու իմաստ կգտնենք մեր ծառայության մեջ՝ պատիվ բերելով Աստծուն և ուրիշներին դեպի Նրան առաջնորդելով (Մատթ. 5:16):

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ, որ հնազանդությամբ իմ բաժինը կատարեմ Քո տված պարտականության մեջ: Ամեն:

Ճշմարիտ ծառայության գաղտնիքը ամբողջական հավատարմությունն է, ուր որ Աստված է մեզ դնում:

Կարդա՛ր Կողոս. 4.7-18

Այսպես ձեր լույսը մարդկանց առաջ թող լուսավորի, որ ձեր բարի գործերը տեսնեն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է: Մատթ. 5:16

Հասարակություն կառուցել

Հենրի Նոուենը ասում է. «Հասարակությունը» այն հավաքականությունն է, ուր ապրում է այն անձը, որի հետ բնավ չպիտի ուզելիք ապրել: Շատ հաճախ մենք մեզ շրջապատում ենք այն անհատներով, որոնք հետ շատ ենք ուզում հաղորդակցվել ու ապրել: Ու կազմում ենք խմբակ, ոչ թե հասարակություն կամ հավաքականություն: Ցանկացած մարդ կարող է խմբակ կազմել, սակայն շնորհ, տեսիլ ու հարատև աշխատանք է պահանջվում հավաքականություն կազմելու համար: Քրիստոնյա եկեղեցին առաջին հաստատությունն է պատմության մեջ, որ իրար մոտ բերեց հրեաներին ու հեթանոսներին, այրերին ու կանանց, գերիներին ու ազատներին:

Պողոս առաքյալը պերճախոսություններով կայացրեց Աստծո խորհուրդը, որ դարեր շարունակ ծածուկ էր մնացել: Կազմելով հասարակություն զանազան անդամներով՝

Պողոսն ասաց. հիմա մենք առիթ ունենք աշխարհի ուշադրությունը ու նույնիսկ մեզնից այն կողմ գտնվող գերբնական աշխարհը գրավելու (Եփ. 3.9-10): Որոշ միջոցներով եկեղեցին ցավ ի սիրտ իր պարտականության մեջ ձախողել է: Սակայն տակավին եկեղեցին այն միակ վայրն է, որ այցելում եմ, որ տարբեր սերունդներ իրար կողքի է բերում՝ նորածին մանուկներ, երեխաներ, որոնք սողում են ու մերկանում են միշտ անհարմար ժամանակ, գիտակից տարեցներ, որոնք գիտեն պատշաճ կերպով վարվել ամեն ժամանակ, և ուրիշներ, որոնք թմրում են ու քնում, երբ քարոզչը մի քիչ երկար է խոսում: Եթե ուզում ենք Աստծո առաջարկած հասարակության փորձառությունը ունենալ, պատճառ ունենք փնտրելու մի եկեղեցու ժողովուրդ, որ մեզ նման չէ:

Աղոթք - Տեր, հիշեցրու ինձ, թե Եկեղեցին Քո ձեռքի գործն է, և Դու մեզ իրար կողքի ես բերել Քո բարի նպատակի համար: Օգնիր մեզ արտահայտելու մեր շնորհքը ուրիշներին, որոնցից ուզում ենք ստանալ: Ամեն:

Այն մարդը, որ ապրում է փոքր հասարակության մեջ, ապրում է շատ ավելի մեծ երկրի մեջ:

Կարդա՛ր Եփես. 2.19-3.11

Որ հեթանոսները ժառանգակիցներ ու մարմնակիցներ են և Ավետարանով Քրիստոսի մեջ խոստման մասնակից:

Եփես. 3.6

Ի՞նչ ենք ետ բերում

Ձոն Ֆ. Բյորնսը քառասուն տարի գրեց «Նյու Յորք Թայմզ» թերթում աշխարհի իրադարձությունների մասին: 2015-ին՝ թոշակի անցնելուց հետո գրված մի հոդվածում Բյորնսը մոտիկ մի բարեկամի ու թղթակցի խոսքերը հիշեց, որ քաղցկեղի պատճառով մահացել էր: Բարեկամն ասել էր. «Երբեք չմոռանաս. կարևոր չէ՝ ինչքան հեռու ես ճանապարհորդել, կարևորը ինչ ես ետ բերել»:

36-րդ Սաղմոսը կարելի է համարել Դավթի «ետ բերած» բաների ցուցակը իր կյանքի ճանապարհորդությունից. հովվից մարտիկ ու թագավոր: Սաղմոսը գույգեբի ցանկ է, որ հակադրում է չարը արդարին ու հաստատում նրանց, որ Տիրոջն են վստահում:

«Մի՛ նախանձիր չարամիտներին և ոչ էլ նրանց, ովքեր անօրենություն են գործում, քանզի նրանք խոտի պես իսկույն կչորանան» (Հմ. 1-2):

«Տերն ուղղում է այն մարդու ընթացքը, ով շատ է սիրում իր ճանապարհը: Եթե անգամ նա սայթաքի, չի կործանվի, քանզի Տերը բռնել է նրա ձեռքը» (Հմ. 23-24):

«Մանուկ էի ես և ծերացա, բայց արդարին արհամարհված չտեսա, կամ նրա զավակին՝ հաց մուրալիս» (Հմ. 25):

Աստված մեզ ի՞նչ է սովորեցրել մեր կյանքի փորձառությունից: Ինչպե՞ս ենք մենք նրա հավատարմություն ու սիրո փորձառությունը ունեցել: Ի՞նչ միջոցներով է Տերը մեր կյանքերը ձևավորել:

Կարևորը չէ, թե որքան հեռու ենք ճամփորդել, այլ հաշվի է առնվում այն, թե ինչ ենք ետ բերել մեզ հետ:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ ինձ հետ քայլում ես իմ կյանքի մեջ: Օգնիր ինձ, որ հիշեմ Քո հավատարմությունը: Ամեն:

Մինչ տարիները գումարվում են, Աստծո հավատարմությունը բազմապատկվում է:

Կարդա՛
Սաղմ. 36.1-6, 23-27

Մանուկ էի ես և ծերացայ, բայց արդարին արհամարհված չտեսա կամ նրա զավակին՝ հաց մուրալիս: Սաղմ. 36.25

Խորունկ տեղերից դուրս

Ուշադրություն՝ զննեցի ջրերը՝ տեսնելու, թե որևէ տեղ վտանգ կա՞ր: Որպես լողավազանի պահակ՝ վեց ժամ տևող աշխատանքային հերթապահությունն հսկում եմ ավազանի մեջ լողացողներին: Եթե դիրքս լքեմ, ու նույնիսկ եթե մի րոպե ուշադրությունս վրիպի, հետևանքները կարող են շատ վատ լինել լողացողների համար: Եթե լողացողը խեղդվելու վտանգի մեջ լինի լողալ չիմանալու պատճառով, իմ պարտականությունն է ջրից դուրս հանել նրան ու տանել ապահով մի տեղ ավազանի մոտ:

Թշնամի փղշտացիների դեմ իր մղած պատերազմի ժամանակ Աստծո աջակցության փորձառությունը ունենալուց հետո (Բ Թագ. 21.15-22) Դավիթը իր ազատվելու նմանեցնում է «հորդառատ ջրից»

դուրս բերվելուն (22.17): Երբ Դավիթի ու իր մարդկանց կյանքը իր թշնամիների պատճառով ընկղմվելու լուրջ վտանգի մեջ էր, Աստված դուրս հանեց նրան ու ազատեց: Մինչ լողավազանի պահակները վճարվում են լողացողների ապահովության համար, Աստված, մյուս կողմից, ազատում է Դավիթին, որովհետև բարեհաճ է նրա նկատմամբ (Հմ. 20): Իմ սիրտը հրճվանքով է լցվում, երբ անդրադառնում եմ, որ Աստված վրաս ոչ թե հսկում ու պաշտպանում է ինձ, որովհետև պարտավոր է, այլ Իր հաճության համար: Երբ զգանք, թե կյանքի դժվարությունների դեմ մեր պայքարը կորցնում ենք, կարող ենք հանգիստ լինել՝ դիտենալով, որ Աստված՝ մեր կյանքի պահակը, տեսնում է մեր նեղությունները եւ Իր հաճության համար մեզ վրա հսկում ու պաշտպանում է մեզ:

Կարդա՛ր
Բ Թագ. 22.17-20

Նա երկնքի բարձունքներից ինձ ձեռք երկարեց և ինձ դուրս բերեց հորդառատ ջրերից: Բ Թագ. 22.17

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ տեսնում ես իմ նեղությունները ու պատրաստ ես ինձ ազատել: Օգնիր ինձ, որ ավելի վստահեմ Քո ազատարար սիրուն: Ամեն:

Աստված պատրաստ է Իր գավակներին փրկելու:

Քաղցր բարեկամություն

Հանգստյան տանն ապրող կինը ոչ ոքի հետ չէր խոսում, ոչ էլ բան էր խնդրում: Այնպես էր թվում, թե կարծես գոյություն չուներ. պարզապես նստում էր ճոնչացող ճոճաթողի վրա ու ճոճվում էր: Նա առանձնապես այցելուներ չուներ, հետևաբար երիտասարդ հիվանդապահուհին հաճախ էր մտնում նրա սենյակ, երբ աշխատանքային դադար էր ունենում: Հարցեր չէր տալիս կնոջը խոսեցնելու համար, այլ պարզապես ուրիշ աթոռի վրա նստելով ճոճվում էր նրա հետ: Ամիսներ հետո տարեց կինը ասաց. «Շնորհակալ եմ ինձ հետ ճոճվելու համար»: Նա երախտապարտ էր նրա ցուցաբերած բարեկամության համար:

Կարդա՛ր
Հովհաննես 14.15-26

Ե՞նչ անարտություն
Հոգին... ձեզ մոտ է
մնում ու ձեզ հետ
կլինի: Հովհ. 14.17

Երկինք գնալուց առաջ Հիսուսը խոստացավ իր աշակերտներին մնայուն ընկերակից ուղարկել: Նա ասաց, որ նրանց մենակ չի թողնի, այլ Սուրբ Հոգուն պիտի ուղարկի, որ նրանց մեջ բնակվի (Հովհ. 14.17): Այդ խոստումը ճշմարիտ է նաև այսօր նրանց համար, ովքեր հավատում են Հիսուսին: Հիսուսն ասաց, որ Երրորդության Աստված իր բնակությունը մեր մեջ է փնտրում (Հմ. 23):

Տերը մեր մտերիմ ու հավատարիմ ընկերակիցն է մեր ամբողջ կյանքի ընթացքում: Նա առաջնորդում է մեզ մեր ամենից դժվար ու նեղ հանգամանքներում, ներում է մեր հանցանքները, լսում է յուրաքանչյուր լուռ աղոթք ու շինում այն լեռները, որոնք մենք չենք կարող շինել:

Կարող ենք այսօր իր քաղցր ընկերակցությունը վայելել:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ Քո Հոգին տալիս ես մեզ՝ որպես մնայուն ընկերակից: Ամեն:

Քրիստոնյայի սիրտը Սուրբ Հոգու բնակարանն է:

Ներված

Բարեկամս՝ Նորմ Գուլքը, երբ աշխատանքից տուն է վերադառնում, երբեմն անակնկալ է ունենում ընտանիքի համար: Նա ներս է մտնում ու դռան միջից բացականչում. «Դուք ներված եք»: Դա չի նշանակում, որ ընտանիքի անդամները մեղք են գործել իր հանդեպ ու իր ներումի կարիքը ունեն: Նա պարզապես հիշեցնում է, որ օրվա ընթացքում բնականաբար սխալներ ենք անում ու մեղք գործում, սակայն Աստծո շնորհով ներվում ենք:

Հովհաննես առաքյալը շնորհի մասին ծանուցում է. «Բայց եթե լույսի մեջ ման գանք, ինչպես որ նա է լույսի մեջ, ուրեմն հաղորդություն ունենք իրար հետ, և նրա Որդի Հիսուս Քրիստոսի արյունը մեզ մաքրում է ամեն մեղքից: Եթե ասենք, թե մեղք չունենք, ինքներս մեզ ենք խաբում, և մեր մեջ ճշմարտություն չկա: Ապա եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար, որ մեր մեղքերը ների մեզ և մաքրի մեզ ամեն անիրավությունից» (Ա Հովհ. 1.7-9):

«Լույսի մեջ ման գալը» փոխաբերական պատկեր է՝ Տեր Հիսուսին հետևելու: Հովհաննեսը շեշտում է, թե Հոգու օգնությամբ Հիսուսին նմանվելը նշան, է որ մենք առաքյալների խմբին ենք միացել հավատքի հաղորդակցության միջոցով: Մենք ճշմարիտ Քրիստոնյաներ ենք: Սակայն նա շարունակում է ասելով, որ մենք մեզ չխաբենք, որովհետև մենք շատ անգամ սխալ ընտրություններ պիտի անենք: Սակայն շնորհը ամբողջությամբ տրված է մեզ, ու մեզ հարկավոր ներումն ենք ստանում: Կատարյալ չենք, սակայն ներում ունենք Տեր Հիսուսով: Այդ է բարի լուրը մեզ այսօր:

Աղոթք - Տե՛ր, գիտեմ, որ նույնիսկ մոտ չեմ կատարյալ լինելու: Այդ պատճառով Քո ու Քո ներումի կարիքն ունեմ: Առանց Քեզ կորած եմ: Ամեն:

Սիրող քննիր ամեն օր՝ Աստծո իմաստությունից չխտորելու համար:

Կարդա՛ր
Ա Հովհ. 1.1-10

Մոլորվեցի կորուսյալ ոչխարի պես, փնտրիր ծառայիդ: Սաղմ. 118.176

Առանձնաշնորհյալ միջոց

Հարավային Իսրայելի Նեգեվ անապատում կանգնած Ուխտի Տապանակը ներշնչում է տեսողներին, հակառակ նրան, որ վերարտադրումն է նախատիպի: Ելից 25-27 գլուխներում Աստծո տվյալների համաձայն՝ ամբողջական չափերով է շինված այս կոթողը, սակայն բնականաբար առանց ոսկու ու Սատիմի փայտի:

Երբ մեր զբոսաշրջիկների խումբը հասավ «Սուրբ տեղը» ու մտավ «Սրբություն Սրբոցը»՝ տեսնելու «տապանակը», մեզնից ոմանք տարակուսեցին: Այս սուրբ տեղը է՞՞ր, ուր միայն քահանայապետը իրավունք ուներ մտնելու: Ինչպե՞ս կարող ենք այստեղ մտնել անպատշաճ կերպով:

Ես միայն կարող եմ երևակայել, թե ինչ զգացին վախով լեցուն իսրայելցիները, երբ մոտեցան Աստծո ներկայություն վրանին մատուցվելիք զոհերով գիտենալով, թե գալիս էին Ամենակարող Աստծո ներկայությունը: Ու զարմանք ապրեցին, երբ Աստված նրանց պատգամ տվեց Մովսեսի միջոցով: Այսօր դու եւ ես կարող ենք ուղղակի Աստծուն մոտենալ վստահությամբ՝ գիտենալով, թե Հիսուսի զոհաբերությունը վերացրել է մեր ու Աստծո միջև եղած արգելքը (Եբ. 12.22-23): Մեզնից յուրաքանչյուրը կարող է Աստծո հետ խոսել երբ ցանկանա ու Նրա ձայնը լսի ուղղակի Նրա Խոսքը կարգալով: Մենք կարող ենք վայելել այս ուղիղ հաղորդակցությունը, որ իսրայելցիները միայն կարող էին երևակայել: Աննկատ չթողնենք Աստծուն՝ մոտենալու այս առանձնաշնորհումի ամենօրյա կարելիությունը՝ որպես Իր սիրելի զավակներ:

Կարդա՛ր
Եբ. 12.18-24

Բայց մոտեցել եք...
անդրանիկների
հանդեսին:
Եբ. 12.22-23

Աղոթք - Շնորհակալ եմ, Հայր, Քեզ մոտենալու այս սքանչելի առանձնաշնորհումի համար, որ Հիսուսն է մեզ տվել՝ գիտենալով, որ մենք ներված ենք Իր արյունով: Բնավ չմոռանանք, թե որքան մեծ զոհ անհրաժեշտ եղավ: Ամեն:

Աղոթքի միջոցով մենք անմիջական հնարավորություն ունենք Հորը մոտենալու:

Բոլոր սերունդները

Իմ ծնողներն ամուսնացան 1933-ի Մեծ Անգործության շրջանում: Կինս և ես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած շրջանի ծնունդների ավերացման ժամանակից ենք: Մեր չորս աղջիկները, ծնված լինելով 1970-ական թթ., պատկանում են տարբեր մեզնից ժամանակաշրջանի սերնդի: Հասակ առնելով տարբեր ժամանակներում՝ զարմանալի է, որ մենք ունենք տարբեր կարծիքներ շատ բաների մասին:

Սերունդները շատ են տարբերվում իրարից կյանքի փորձառություն ու արժեքների մեջ: Սա նաև ճշմարիտ է Հիսուսի հետևորդների պարագայում: Սակայն հոգ է թե ինչ ենք հագնում կամ ինչ տեսակի երաժշտություն ենք լսում. մեր հոգևոր կապերը այդ տարբերություններից ավելի ուժեղ են: Սաղմոս 144-ը Աստծուն փառավորելու

երգ է, որ հայտարարում է մեր հավատքի մասին: «Սերնդից սերունդ պիտի գովեն գործերը քո, և պիտի պատմեն գորությունները քո: Քո մեծ բարություն հիշատակը պիտի ավետեն, և պիտի ցնծան քո արդարությունը» (Հմ. 4, 7): Տարիքի ու փորձառության տարբերության մեջ մենք իրար ենք մոտենում Տիրոջը պատվելով: «Քո արքայական փառքի մասին պիտի խոսեն ու քո գորությունները պիտի պատմեն» (Հմ. 11): Մինչ տարբերություններն ու նախապատվությունները կարող են մեզ բաժանել, Տեր Հիսուս Քրիստոսի վրա մեր ունեցած հավատքը մեզ իրար է միացնում՝ երկկողմանի վստահությունամբ, քաջալերանքով ու փառաբանությունով: Ինչ էլ լինի մեր տարիքը կամ տեսքը, մենք իրար կարիքն ունենք: Հոգ է թե ինչ սերնդի ենք պատկանում, կարող ենք իրարից սովորել ու միասին մեր Տիրոջը պաշտել:

Աղոթք - Տեր, միացրու տարբեր սերունդների պատկանող Քո ժողովուրդը՝ Քեզ պատվելու ու փառավորելու համար, մինչ ցույց ենք տալիս Քո սերը: Ամեն:

Աստծո թագավորությունը կենդանի ու գործուն է բոլոր սերունդների մեջ:

Կարդա՛ր
Սաղմոս 144. 1-13

Քո արքայությունը ողջ հավիտենության արքայությունն է, և քո տերութիւնը՝ սերնդից սերունդ: Սաղմ. 144.13

«Նոր մարդ»

Երբ պատանհներին մի խումբ այցելեց տարեցների Հանգստյան տունը Զամայկայի Մոնեկո Մոցոլոմ, մի երիտասարդ կին նշմարեց մի մենակյաց մարդու սենյակի մի անկյունում: Պարզ էր, որ նա շատ բան չուներ՝ բացի քնելու տեղից, որից հնարավոր չէր դուրս գալ՝ իր անկարողության պատճառով: Երիտասարդ կինը սկսեց խոսել Աստծո՝ մեր Հանդեպ ունեցած սիրո մասին ու կարգալից Սուրբ Գրքից մի քանի հատված: Զգալով նրա ցանկությունը ավելին լսելու՝ կինն սկսեց բացատրել նրան Հիսուսի մահվան գոհողության հրաշալիքի մասին: «Դժվար էր այս մարդու համար, որը հույս չուներ, ոչ էլ ընտանիք, հասկանալ, թե մեկը, ում նախապես չէր ճանաչում, իրեն այնքան սիրեր, որ մեռներ խաչի վրա իր համար»,- ասաց նա: Երիտասարդ կինը նրան պատմեց Տեր Հիսուսի ու երկնքի խոստումի մասին բոլոր հավատացյալների համար: Մարդը հարցրեց. «Ուզո՞ւմ ես ինձ հետ պարել այնտեղ՝ վերևում»: Աղջիկը տեսավ, թե մարդն ինչպես սկսեց երևակայել իրեն ազատ իր հոգնած մարմնից ու ֆիզիկական սահմանափակություններից:

Երբ նա ասաց, թե ուզում է Հիսուսին վստահել որպես իր Փրկչի, աղջիկը օգնեց նրան, որ ազդի ներքոմի ու հավատքի ազդի: Ու երբ աղջիկը առաջարկեց միասին նկարվել, նա պատասխանեց. «Եթե ինձ օգնես, որ նստեմ, ես նոր մարդ կլինեմ»:

Փառք Աստծուն կյանք տվող, հույս տվող, բոլորին հասանելի Հիսուս Քրիստոսի ավետարանի համար, որ նոր կյանք է տալիս բոլոր նրանց, ովքեր Իրեն են վստահում (Կող. 1.5, 23):

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք Հիսուս Քրիստոսով մեր ունեցած նոր կյանքի համար: Օգնիր մեզ բաժանել ուրիշների հետ այդ նոր կյանքն ունենալու մեր հույսը, որպեսզի նրանք էլ նոր մարդ լինեն: Ամեն:

Հիսուսը նոր կյանք է առաջարկում:

Կարդա՛ր Կողոս. 1.3-14

Եթե հավատի մեջ հիմնավոր ու հաստատուն մնաք, առանց կտրվելու Ավետարանի հույսից, որ լսեցիք: Կողոս. 1.23

Նոզոմի հույս

2011-ին Տոկիոյի Հյուսիս-արևելյան շրջանում 9 բալանոց երկրաշարժ ու դրա հետևանքով ցունամի տեղի ունեցան: Այս սուսկալի աղետը խլեց 19,000 մարդու կյանք ու քանդեց 230,000 տուն: Աղետից հետո «Նոզոմի ծրագիր»-ը ծնունդ առավ ճապոնեցի «Հույս» բառի փոխարեն՝ հայթայթելու կայուն եկամուտ, ընկերություն, պատիվ և հույս Աստծո: Նոզոմիի կանայք իրենց տների ավերակների միջից հավաքեցին արժեքավոր ապակեղենների փշրանքներ ու իրար կցելով՝ պատրաստեցին զարդարանքներ ու գոհարեղեն: Այժմ այդ զարդարանքներն ու գոհարեղենը վաճառվում են աշխարհի ամեն անկյունում՝ ապրուստ ապահովելով կանանց և բաժանելով նրանց Քրիստոնեական հավատքի խորհրդանիշները: Նոր Կտակարանի օրերում սովորություն էր դարձել արժեքավոր իրերը պահել կավե անոթների մեջ: Պողոսը նկարագրում է, թե ինչպես են Ավետարանի գանձերը գտնվում Հիսուսին հետևող մարդկանց տկար մարմինների՝ կավե անոթների մեջ (Բ Կորնթ. 4.7): Պողոսը նկատում է, որ մեր կյանքերը պարունակող տկար՝ նույնիսկ մի շարք դեպքերում կոտրած անոթները կարող են հայտնել Աստծո գորությունը՝ հակառակ մեր անկատարության:

Երբ Աստված բնակվում է մեր կյանքերի անկատար ու կոտրած փշրանքների մեջ, Նրա գորությունն բուժիչ հույսը շատ հաճախ ավելի տեսանելի է: Այո՛, Նրա վերանորոգության գործը մեր սրտերում հաճախ թողնում է ճեղքեր ու սպիներ: Սակայն հավանաբար այդ գծերից մեր սովորածը մեր մեջ եղած բարոյականությունն է, որ Նրա նկարագիրը ուրիշների համար ավելի տեսանելի է դարձնում:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, խնդրում եմ ցույց տուր Քո գորությունը, մինչ բաժանում եմ Քո Ավետարանի գանձը իմ կոտրած, սակայն գեղեցիկ կյանքի մեջ: Ամեն:

Կոտրածությունը կարող է ամբողջականության առաջնորդել:

Կարդա՛ր Բ Կորնթ. 4.7-18

Բայց այս գանձն ունենք հողե անոթներում, որպեսզի գորության գերազանցությունն Աստծունը լինի և ոչ թե մեզանից:

Բ Կորնթ. 4.7

Դասախոսի խոստովանությունը

Անվանի հեղինակ ու քոլեջի դասախոս Դեյվիդ Ֆոստերը, իր ուսանողների խղճուկ գրողական կարողությամբ մտահոգ, խորհեց, թե ինչպես կարող է նրանց գրելու կարողությունը զարգացնել: Ճիշտ այդ պահին մի հարց ցնցեց նրան: Դասախոսն ինքն իրեն հարցրեց, թե ինչու է ուսանողը պարտավոր լսելու մեկին, որ իր նման «պճնոտ, նեղմիտ, ինքնարդար և հավակնոտ» մեկն է: Նա հասկացավ, որ հպարտության խնդիր ունեւր:

Դասախոսը հնարավորություն ունեւր և կարողացավ փոխվել, սակայն էջր կարող նմանվել իր ուսանողներին: Սակայն երբ Հիսուսը աշխարհ եկավ, ցույց տվեց, թե խոնարհությունը ինչի է նման՝ մեր նմանը լինելով: Ամեն տեսակ սահմանափակումներից դուրս գալով՝ սպասավորություն արեց՝ սովորեցնելով իր Հոր կամքը կատարելով: Նույնիսկ երբ խաչվում էր, Նա աղոթեց ներում խնդրելով Իրեն սպանողների համար (Ղուկ. 23:24): Շունչ առնելով իր ամեն պրկումի հետ՝ Նա դեռ հավիտենական կյանքի խոստումը տվեց իր հետ խաչված ոճրագործին (Հմ. 42-43):

Ինչո՞ւ Հիսուսն այդ բանն արեց: Ինչո՞ւ պիտի ծառայեր մեր նման մարդկանց մինչև մահը: Հովհաննես առաքյալը այս կետի մասին խոսում է՝ ակնարկելով Նրա սիրուն: Նա գրում է. «Սրանով ճանաչեցինք Քրիստոսի սերը, որ նա իր անձը տվեց մեզ համար»: Ապա շարունակում է. «Մենք էլ պարտավոր ենք մեր անձերը դնել մեր եղբայրների համար» (Ա Հովհ. 3.16):

Հիսուսը ցույց տվեց, թե իր սերը վերացնում է մեր հպարտությունը, պճնոտությունը և հավակնոտությունը: Ու Նա դա արեց ազդու կերպով ու իր կյանքը տվեց մեզ համար:

Աղոթք - Դայր, մենք ցածր աչքերով ենք նայում իրար: Խնդրում ենք, ներիր մեզ: Տուր մեզ Քո Որդու ցույց տված սիրող սիրտը: Ամեն:

Կարդա՛ր
Ա Դովի. 3.11-18

Սրանով ճանաչեցինք Քրիստոսի սերը, որ նա իր անձը տվեց մեզ համար: Ա Դովի. 3.16

Չիսուսը սիրեց մեզ՝ ծառայելով:

Խաղաղություն և վստահություն

Երբ վեց տարեկան էի, առաջին անգամ եզերանիվի վրա բարձրացա մեծ եղբայրներիս հետ: Հագիվ մի ոլորանի էինք հասել մեծ արագությամբ, սկսեցի ճչալ. «Կանգնեցրո՛ւ անմիջապես: Ուզում եմ ցած իջնել»: Անշուշտ եզերանիվը չկանգնեց, ու ես ստիպված եղա կառչած մնալ բռնակլին ամբողջ ճանապարհին:

Երբեմն կյանքն էլ նման է այդ անցանկալի անիվի թավալումին՝ հանկարծակի վայրէջքներով ու անսպասելի դարձվածքներով, որոնց գալուստը երբեք չենք կանխատեսում: Երբ անակնկալ դժվարությունների ենք հանդիպում, Աստվածաշունչը մեզ հիշեցնում է, որ լավագույն բանը Աստծուն վստահելն է:

Խառն ժամանակներում, երբ երկիրը գտնվում էր գրավման սպառնալիքի առջև, Սուրբ Հոգուց ներշնչված Եսայի Մարգարեն Տիրոջից այս գորավոր խոստումը ստացավ. «Հոգում է ճշմարտության մասին և ապահովում խաղաղությունը» (Ես. 26 3):

Մեր Փրկչի տված խաղաղությունը, երբ Իրեն ենք դիմում, ամեն մտքից վեր է (Փիլ. 4.7): Երբեք չպիտի մոռանամ քաղցկեղից տառապող կնոջ խոսքը: Մեր եկեղեցու խմբի՝ նրա համար աղոթելուց հետո կինն ասաց. «Չգիտեմ, թե ինչ պիտի պատահի, սակայն գիտեմ, որ լավ պիտի լինեմ, որովհետև Տերը այս երեկո մեզ հետ էր»:

Կյանքը պիտի ունենա իր դժվարությունները, սակայն մեր Փրկչիչը, որ կյանքից ավելի է մեզ սիրում, բոլորից մեծ է:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, խնդրում եմ օգնիր ինձ, որ այսօր Քեզ վստահեմ, որպեսզի կարողանամ ապրել և ուռճանալ Քո տված խաղաղության մեջ: Ամեն:

Հիսուսը խաղաղություն է:

Կարդա՛ր Եսայի 26.1-9

Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ես եմ տալիս ձեզ, ոչ թե ինչպես աշխարհն է տալիս. ձեր սիրտը թող չխռովվի ու չվախենա:
Հովհ. 14.27

Մարզվել կյանքի համար

Երկար վազքի մրցմանը իմ պատրաստվածությունը լավ չէր, ու հատկապես վերջին մասը հուսախաբուծյալ հասցրեց:

Ժամանակի կեսը քայլեցի ու նույնիսկ կարիք ունեցա նստելու որոշ ժամանակ անց: Զգացի, որ պարտվել էի այս քննության մեջ:

Հետո հիշեցի, թե իրականության մեջ սա էր պատրաստությունը: Հաջողություն ունենալու քննությունն չէր՝ հաղթելու համար, ոչ էլ մրցանիշ կտրելու: Սա մի բան էր, որի միջով անցնելը դարձյալ ու դարձյալ իմ գոյատևումը բարելավելու համար էր:

Կարող է պատահել, որ դու վատ զգաս քո պատրաստվելու ժամանակ: Աստված թույլ է տալիս, որ քննության միջով անցնենք՝ մեր հոգու մկանները ուժեղացնելու ու հարատևելու համար: Նա սովորեցնում է մեզ իրեն վստահել ու մաքրում է մեզ սրբանալու համար, որպեսզի Բրիստոսին ալելի նմանվենք:

Զարմանալի չէ, որ Սաղմոսերգուն փառավորում է Աստծուն, որ Իսրայելի ժողովրդին կրակով ու ջրով բյուրեղացրեց (Սաղմ. 67.10-12), երբ նրանք չարչարվում էին ստրկության մեջ աքսորի ժամանակ: Աստված ոչ միայն նրանց պահպանեց ու բերեց առատ մի վայր, այլև միաժամանակ բարի գործ արեց նրանց կյանքի մեջ:

Մինչ մենք քննության միջով ենք անցնում, կարող ենք Աստծուն վստահել մեր զորության համար: Նա մեզ մաքրում է մեր դժվարին պայմաններում:

Աղոթք - Տե՛ր, գիտեմ, որ Դու թույլ ես տալիս, որ փորձությունների միջով անցնեմ, որպեսզի զորանամ ու բյուրեղանամ: Սովորեցրու ինձ շարունակել Քո զորությանը վստահել՝ հարատևելու համար: Ամեն:

Մեր հավատքը քննելու պահերը մեր հավատքը զորացնելու պահերը կարող են դառնալ:

Կարդա՛ր
Սաղմ. 65.8-12

Քննեցիր մեզ, Աստվա՛ծ, ու փորձեցիր, ինչպես արժաթն է փորձվում: Սաղմ. 15.10

Շնորհ ցույց տալ

Ամերիկայի Միացյալ Նահանգների գոլֆի մրցաշարը սկիզբ առավ 1934-ին, և մինչև օրս միայն երեք խաղացողներ են տիրացել գավաթին երկու տարի անընդմեջ: 2016-ի ապրիլի 10-ին թվում էր, թե Ջորջան Սփիթը պիտի դառնար չորրորդը: Սակայն նա սխալվեց վերեջին ինը անցքերին և երկրորդը դարձավ: Հակառակ իր հուսախաբուլթյան՝ Սփիթը շնորհալի գտնվեց մրցաշարի հաղթող Դենի Ուիլյեթից ու շնորհավորեց նրան տարած հաղթանակի համար, ինչպես նաև նրա անդրանիկ գավաթի ծննդյան ուրախ առիթով, մի բան, որ «չատ ավելի կարևոր էր, քան գոլֆը»: Գրելով Նյու Յորք Թայմզ թերթում՝ Քերրն Կրուզն ասաց. «Շնորհք է պետք՝ տեսնելու համար մեծ պատկերը գավաթի հանձնման արարողության ընթացքում մի ուրիշի, որն արժանանում է առաջին տեղին, և թղթակիցները նրան է, որ նկարում են»: Կրուզը շարունակում է. «Սփիթի՝ գնդակին կատարած հարվածը հաջող չէր ամբողջ շաբաթվա ընթացքում, սակայն նա իր նկարագիրը ցույց տվեց»:

Պողոսը թախանձում է Կողոսայի մեջ բնակվող Տեր Հիսուսի հետևորդներին՝ ասելով. «Դրսինների հետ իմաստություն՝ մե վարվեցեք ու ժամանակը օգտագործեցե՛ք: Ձեր խոսքն ամեն ժամանակ թող շնորհով՝ աղով համեմված լինի, որպեսզի գիտենաք, թե ինչպե՛ս արժան է ձեզ ամեն մեկին պատասխան տալ» (Կող. 4.5-6): Ինչպես մենք ենք Աստծո շնորհը ձրի ստացել, մեր առանձնաշնորհումն ու կոչն է ցույց տալ այն կյանքի ամեն հանգամանքներում՝ շահելու լինենք թե կորցնենք:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, օգնիր ինձ Քո Դոգու միջոցով շնորհալի ու ազնիվ լինել ուրիշների հանդեպ՝ Քեզ ներկայացնելով: Ամեն:

Կարդա՛ր Կողոս. 4. 2-6

Ձեր խոսքն ամեն ժամանակ թող շնորհով՝ աղով համեմված լինի, որպեսզի գիտենաք, թե ինչպե՛ս արժան է ձեզ ամեն մեկին պատասխան տալ:

Կող. 4.6

Շնորհալի խոսքերը միշտ էլ շիտակ խոսքերն են:

Աստծո սերը ցոլացնել

Ես առանձնաշնորհում ունեցա ծառայելու որպես մորս խնամակալ քաղցկեղի կենտրոնում նրա բուժվելու ընթացքում: Նույնիսկ անկողնից վեր կենալու դժվարություն ունեցած օրերին նա Աստվածաշունչ կարդաց ու աղոթեց ուրիշների համար: Նա ամեն օր Հիսուսի հետ ժամանակ անցկացրեց, իր հավատքը արտահայտեց՝ Աստծուն վստահելու համոզումով, իր ազնիվ արարքներով, ուրիշներին քաջալերելու ցանկությունով ու նրանց համար աղոթելով: Առանց մտածելու, թե որքան էր նրա ժպտուն դեմքը փայլում Տիրոջ սիրո շնորհով, նա Աստծո սերը բաժանեց իր շուրջ եղող մարդկանց հետ, մինչև այն օրը, երբ Տերը նրան Իր մոտ՝ տուն կանչեց:

Մովսեսը քառասուն օր ու քառասուն գիշեր Աստծո մոտ մնալուց հետո (Ել. 34:28) Մինա լեռից ցած իջավ: Նա գաղափար չուներ, որ իր մոտիկությունը Տիրոջը իրականում իր երևույթն էր ցույց տալիս (Հմ. 29): Սակայն իսրայելցիները կարողացան

ասել Մովսեսի մասին, թե Տիրոջ հետ էր խոսել (Հմ. 30-32): Նա շարունակեց Աստծո հետ հանդիպել ու իր շուրջ գտնվողների կյանքի վրա ազդել (Հմ. 33-35): Մենք կարող ենք չտեսնել, թե ինչպես է Աստծո հետ մեր ունեցած փորձառությունը մեզ փոխում ժամանակի ընթացքում, ու մեր բարեփոխությունը վստահաբար չպիտի լինի Մովսեսի լուսափայլ երեսի բարեփոխության նման: Սակայն երբ Աստծո հետ ժամանակ անցկացնենք ու մեր կյանքերը ավելի ու ավելի Իրեն հանձնենք, մենք պիտի կարողանանք Իր սերը հստակ ցոլացնել:

Աղոթք - Տե՛ր, խնդրում ենք բարեփոխիր մեզ Քո ներկայությամբ իրավիրելով: Թող Քո սերն ու հույսը շողան մեր միջոցով, ուր որ գնանք, ու ազդեն մեր շուրջ եղողների կյանքի վրա: Ամեն:

Աստծո հետ մեր անցկացրած մտերմիկ պահերը կարող են մեզ փոխել և առաջնորդել ուրիշներին Իր սիրուն:

Կարդա՛ր Ելք 34. 29-35

Երբ Մովսեսն իջնում էր Սինա լեռից, ուխտի երկու տախտակները Մովսեսի ձեռքին էին: Լեռից իջնելիս Մովսեսը չգիտեր, որ Տիրոջ հետ խոսելու պատճառով իր երեսը ճառագում է:

Ելք 34.29

Կյանքի լիությունը

Ճանապարհիս երբ քրոջս հանդիպեցի, քեռորդիներս անհամբերությամբ ուզեցին ցույց տալ իրենց առօրյա պարտականությունները ցույց տվող էլեկտրական ցուցատախտակները: Յուրաքանչյուր գունավոր ցուցատախտակ նրանց անելիքների ընթացքն է պահում: Երբ նրանք գործն ամբողջացնում են հաջողությամբ, կարող են կանաչ կոճակին սեղմել, որը մի կետ է ավելացնում իրենց ընդհանուր հաշվին: Իսկ եթե որևէ պարտականություն վատ կատարեն, օրինակ՝ տան դուռը բաց թողնեն, տուգանք պիտի վճարեն, ու մի թիվ կպակասի ընդհանուր հաշվից: Բարձր հաշիվը գրավիչ վարձատրություն է խոստանում, ինչպես համակարգչի վրա խաղալու առիթը, իսկ սխալ գործը պակասեցնում է որոշ թիվ ընդհանուր գումարից: Ուստի քեռորդիներս հիմա անընդհատ ցանկանում են իրենց պարտականությունները ամբողջովին կատարել: Այս հրաշալի վիճակը ինձ էլ մղում է նման մի խթանող բան մտածել կյանքիս մեջ: Սակայն Աստված մեզ տվել է մղում: Փոխանակ պարզապես հրամայական հնազանդություն պահանջելու՝ Հիսուսը իրեն հետևողներին կյանք է խոստանում: Թեև այդ կյանքը ունենալու համար թանկ գին պիտի վճարել, սակայն միաժամանակ առատ ու «ճոխ» կյանք է դա (Հովհ. 10.10): Նրա թագավորության մեջ կյանքի փորձառությունը ունենալն արժե «հարյուրապատիկ» կյանք - հիմա ու հավիտյան (Մարկ. 10.29-30):

Մենք կարող ենք ուրախ լինել, երբ ծառայում ենք Աստծուն, որ չի վարձատրում կամ պատժում մեզ մեր չափանիշով: Նա առատաձեռնությամբ է ընդունում մեր տկար ջանքերը՝ նույնիսկ ընդունելով ուշացածներին՝ մասնակից լինելու Իր Թագավորությանը (Մատթ. 20.1-16): Այս ճշմարտության լույսի տակ եկեք ուրախությամբ իրեն ծառայե՛ք այսօր:

Աղոթք - Տե՛ր, մեզ օգնի՛ր՝ հիշելու, որ Քեզ հետևելը մեծ իմաստ ունի ու արժեք: Ամեն:

Դիտուսին հետևելը ուղին է հարուստ ու գոհացուցիչ կյանքի:

**Կարդա՛ր
Յովհաննես 10. 9-10**

Ես եկա, որ կյանք ունենան և է՛լ ավելին ունենան:

Յովհ. 10.10

Բոլորին հասանելի

Համբավավոր անձերով լեցուն ժամանակակից մշակույթում չգարմանալի երևույթ է, երբ գործարարները շուկա են բերում «համբավ ունեցող մարդկանց, որպեսզի վաճառեն իրենց արտադրությունը»: Վուհինի Վարան «Նյու Յորքեր» թերթում հրատարակած հոդվածում նշում է, որ կարելի է 1500 դոլարով անձնական հանդիպում ունենալ Շակիրայի հետ և 1200 դոլարով 11 հյուրերով ճաշել հոգևակավոր Մայքլը Չիարելլո խոհարարի հետ նրա շքեղ կալվածքում:

Շատերը նկատեցին Հիսուսին իբրև համբավավոր մեկը ու հետևեցին Նրան, լսեցին Նրա ցուցումները, ուշադրությամբ դիտեցին Նրա կատարած հրաշքները ու խնդրեցին բժշկություն իր սուրբ ձեռքերից: Հիսուսը երբեք հեռու ու մեկուսացած չէր, այլ միշտ բոլորին հասանելի: Երբ իր երկու աշակերտները՝ Հակոբոսն ու Հովհաննեսը, Թագավորության մեջ իրենց ունենալիք տեղով էին հետաքրքրված, Հիսուսը հիշեցրեց բոլոր աշակերտներին, թե «Մ'վ որ ուզում է մեծ լինել, թող ձեզ սպասավոր լինի: Ու ձեզանից ով որ ուզում է առաջինը լինել, թող բոլորին ծառայի» (Մարկ. 10.43-44): Հիսուսն իր այս խոսքը ասելուց հետո իրեն հետևող ամբոխին կանգնեցրեց՝ մի կույր մուրացկանի հարց տալով. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ համար անեմ» (Հմ. 51): Կույրը պատասխանեց. «Ռաբունի՛, որ աչքերս բացվեն» (Հմ. 52): Նրա աչքերը բացվեցին, ու Հիսուսին հետևեց: Մեր Տերը «չի եկել, որ իրեն ծառայեն, այլ ինքը ծառայի ու շատերի փոխարեն իր անձը փրկանք տա» (Հմ. 45): Թող մենք էլ Նրա նման զթասիրտ լինենք ու հասանելի բոլորին:

Կարդա՛

Մարկոս 10.42-52

Որովիտես Մարդու Որդին էլ չի եկել, որ իրեն ծառայեն, այլ ինքը ծառայի ու շատերի փոխարեն իր անձը փրկանք տա:

Մարկ. 10.45

Աղոթք - Տեր Դիսուս, Քեզ ենք պատվում որպես Աստծո Որդի ու փառքի Տեր, որ բոլորի համար մահացար: Օգնիր մեզ, որ Քո սերը ուրիշներին ցույց տանք: Ամեն:

Դիսուսի օրինակին հետևիր ու ձեռք մեկնիր կարոտյալներին:

Քրիստոսի սիրտը

Ավատրալացի մի թղթակից, որ 400 օր բանտարկված էր եգիպտական մի բանտում, իր խառն զգացումները արտահայտեց, երբ ազատ արձակվեց: Իր ազատվելու համար ուրախ լինելով հանդերձ՝ նա ասաց, թե ընդունում է իր ազատությունը, սակայն մտահոգ է ետևում թողած բարեկամների համար: Նա ասում էր, որ շատ դժվար էր հրաժեշտ տալ իր գործակից թղթակիցներին, որոնք իր հետ բանտարկված էին, ու չգիտեի, թե դեռ ինչքան պիտի բանտարկված մնային:

Մովսեսն էլ նման մտահոգություն ունեցավ, երբ իր ետևում էր թողնելու իր բարեկամներին: Երբ եղբայր, քույր և ազգ կորցնելու փորձառությունը դիմազրավեց, որոնք ոսկի հորթին էին պաշտել, մինչ ինքը Սինա լեռան վրա Աստծու հետ էր հանդիպում (Ել. 32.11-14), նա թախանձեց նրանց համար: Նա ցույց տվեց, թե ինչքան էր սիրում նրանց ու աղերսեց նրանց համար՝ ասելով. «Իսկ եթե չես ներելու, ուրեմն իմ անունը ջնջի՛ր քո մատյանից, ուր գրել ես ինձ» (Հմ. 32):

Պողոս առաքյալն էլ նման մտահոգություն արտահայտեց ընտանիքի, բարեկամների ու ազգի մասին՝ նրանց անհավատության համար: Պողոսն ասաց, որ նույնիսկ պատրաստ էր ինքն իրեն նզովել Քրիստոսից, եթե նման սիրով կարողանար իր եղբայրներին ու քույրերին ազատել (Հռոմ. 9.3): Ետ նայելով տեսնում ենք, թե Մովսեսն ու Պողոսը ցույց տվեցին Քրիստոսի սիրտը: Դա սերն էր, որ նրանք կարող էին զգալ, ու զոհողությունը, որ կարող էին անել Քրիստոսով՝ հավիտյան միասին լինելու համար:

Աղոթք - Երկնքում եղող Աստված, շնորհակալ եմք, որ մեզ հիշեցնում ես, թե որքա՞ն եմք Քեզ նմանվում, երբ կամենում եմք ապրել ու մեռնել նրանց համար, ովքեր դեռ չեն տեսնում, թե Դու որքա՞ն ես իրենց սիրում: Ամեն:

Ուրիշներին սիրելը պատվում է Գիտուսի՝ մեր հանդեպ ունեցած սերը:

Կարդա՛
Ելք 32. 21-32

Արդ, եթե ներելու ես իրենց մեղքերը, ներիր, իսկ եթե չես ներելու, ուրեմն իմ անունը ջնջի՛ր քո մատյանից:

Ելք 32.31-32

Մեր հոր դեմքը

Հիշում եմ հորս դեմքը: Դժվար էր կարդալ: Նա ազնիվ մարդ էր, սակայն միշտ՝ վերապահ: Որպես մանուկ՝ հաճախ էի զննում նրա դեմքը՝ փնտրելով ժպիտ կամ այլ տեսակ զգացումի արտահայտություն: Մեր դեմքերը մեզ են ներկայացնում: Խոժոռ, տխուր, ժպտուն կամ ծուռ նայվածքները ցույց են տալիս մեր զգացումները ուրիշների հանդեպ: Մեր դեմքերը մեր «արտահայտությունն ու խոսքն» են:

Կարդա՛ր Սաղմոս 79

Աստված, մեզ ե՛տ դարձրու, ցույց տուր մեզ երեսը քո, որ ապրենք:

Սաղմ. 79. 4

Ասափը՝ 80-րդ Սաղմոսի հեղինակը, չվարել էր ու ցանկանում էր տեսնել Տիրոջ երեսը: Նա նայեց Երուսաղեմում իր գտնված տեղից դեպի հյուսիս ու տեսավ Իսրայելի թագավորության կործանումը Ասորեստանի ձեռքով: Նրա կործանումով Հուդան ամեն կողմից հարձակման մեծ վտանգի մեջ էր. Ասորեստանը՝ հյուսիսից, Եգիպտոսը՝ հարավից ու արաբական ազգերը՝ արևելքից: Հուդայի թագավորությունը շատ հեշտությամբ կարող էր նույն ձևով կործանվել: Ասափն իր մտավախությունները Աստծուն հայտնեց աղոթքով ու երեք անգամ կրկնեց իր աղոթքը (70.3, 7, 19). «Ցույց տուր մեզ երեսը քո, որ ապրենք»: (Կամ այլ խոսքով՝ թույլ տուր, որ տեսնեմ Քո ժպիտը):

Լավ զգացում է մեր վախերից այն կողմ անցնելով փնտրել մեր երկնավոր Հոր երեսը: Աստծո երեսը տեսնելու լավագույն ձևը Քրիստոսի խաչին նայելն է. Խաչը Աստծո «արտահայտությունն ու խոսքն» է:

Ուստի այս իմացիր. երբ Հայրը քեզ է նայում, Նա մեծ ժպիտ ունի իր երեսին: Դու շատ ապահով ես:

Աղոթք - Տե՛ր, խնդրում եմ Քո երեսը պայծառացրու ինձ վրա: Ամեն:

Աստծո սերը թանկ արժե՝ նման խաչի վրա Քրիստոսի բաց բազուկներին:

Եթե միայն

Երբ մեր մեքենայով դուրս էինք գալիս ավտոկայանատեղից, Եամուսինս մեքենան դանդաղեցրեց՝ սպասելու հեծանիվով մի երիտասարդ աղջկա: Երբ Թոմը գլխով նշան արեց՝ ցույց տալով, որ աղջիկը կարող է առաջ անցնել, աղջիկը ժպտաց, ձեռքով նշան տվեց ու անցավ: Մի պահ հետո, երբ կանգնած մի մեքենայի վարորդ դուռը բացեց, հեծանիվի վրայի աղջկան գետին գցեց: Արյունոտ ոտքերով՝ նա ճչաց, երբ գնում էր իր կտորած հեծանիվը:

Հետո մի պահ մտածեցինք այս դեպքի մասին՝ ասելով. եթե միայն նրան սպասեցնեինք, եթե միայն վարորդը իր շուրջը նայեր մեքենայի դուռը բացելուց առաջ: Ու երբ անակնկալ դժվարությունների ենք հանդիպում, ասում ենք. եթե միայն իմանայի, որ զավակս երիտասարդների հետ էր, որոնք ալկոհոլ էին գործածում: Եթե միայն քաղցկեղի մասին ավելի վաղ իմանայինք: Երբ անակնկալ դժվարություններ ենք դիմազրավում, նույնիսկ Աստծո բարությունն ենք հարցակահի տակ դնում: Մենք նաև կարող ենք տեսնել Մարթայի ու Մարիամի հուսահատությունը իրենց եղբոր մահվան դառն փորձառություն առջև (Հովհ. 11.21, 32):

Մարթայի նման միշտ չէ, որ հասկանում ենք, թե ինչու ենք նեղություններ ու դժվարություններ ունենում: Սակայն կարող ենք հանգիստ լինել՝ իմանալով, որ Աստված Իր ծրագիրն է իրագործում ավելի լավ բանի համար: Ամեն պարագայում մենք կարող ենք հավատարիմ ու սիրող մեծ Աստծո իմաստություն վստահիլ:

Աղոթք- Հայր, գիտեմ, որ դժվար պարագաներից ես ինձ փրկել: Ենթադրեմ եմ, որ ինձ սովորեցնում ես Քեզ վստահել, երբ չեմ հասկանում, թե Դու ինչ ես անում իմ կյանքի մեջ: Ամեն:

Աստծուն վստահել լույսի մեջ ոչինչ է, սակայն խավարի մեջ Նրան վստահելը հավատք է:

Կարդա՛ր
Յովհաննես 11. 21-35

Տեր, եթե այստեղ լինեիր, իմ եղբայրը չէր մեռնի:
Յովհ. 11.32

Ամեն ինչի համար երախտապարտ լինել

Ավատրալիայում կարող է ժամեր տևել քաղաքից քաղաք մեքենայով գնալը, ու հոգնածությունը կարող է պատճառ դառնալ պատահարների: Հետևաբար, ոչ աշխատանքային օրերին մայրուղիների վրա հանգստի վայրեր են պատրաստվում, ու կամավորներն անվճար սուրճ են բաժանում: Կինս՝ Մերրին և ես հաճույք ենք ստանում այս հանգստի վայրերից: Մի ճամփորդության ընթացքում մեքենան կանգնեցրինք ու մոտեցանք սուրճի համար: Մի սպասարկող երկու բաժակ տվեց մեզ ու երկու դոլար պահանջեց: Հարցրեցի. «Ինչո՞ւ»: Ցույց տվեց ցուցատախտակի վրա մանր տառերով գրությունը, որ հնարավորություն էր տալիս անվճար սուրճ ստանալ միայն վարորդին, սակայն մնացածները պիտի վճարեին: Նեղացած ասացի, թե սխալ է մոտեցումը, վճարեցի երկու դոլարը ու անցա: Երբ վերադարձա մեքենայի մոտ, Մերրին ցույց տվեց սխալս: Ես նվերը վերագրել էի իրավունքի ոտնահարման ու աներախտապարտ եղել ստացածիս համար: Նա ճիշտ էր:

Երբ Մովսեսը առաջնորդեց Իսրայելի ժողովրդին Խոստացված Երկիրը, թախանձեց, որ երախտապարտ լինեն (Բ Օր. 8.10): Փառք Աստծո, երկիրը օրհնված էր: Նրանք կարող էին հեշտությունք այդ օրհնությանն արժանի գտնել իրենք իրենց (Հմ. 17-18): Այս գաղափարով հրեաները զարգացրեցին սովորություն՝ շնորհակալություն հայտնելու յուրաքանչյուր ճաշի համար՝ անկախ քանակից: Իրենց համար դա պարզև էր: Ետ գնացի կնոջ մոտ ու ներողություն խնդրեցի: Մի գավաթ անվճար սուրճը պարզև էր, որին արժանի չէի, և մի բան, որի համար երախտապարտ պիտի լինեի:

Աղոթք - Օրհնյալ ես դու, մեր Տեր ու մեր Աստված, տիեզերքի Թագավոր, որ երկրից մեզ հաց ես տալիս: Ամեն:

Հրեական աղոթք ճաշի շնորհակալություն

Շնորհակալ եղիր Աստծուն նույնիսկ փոքրագույն պարզևի համար:

Կարդա՛ր
Բ Օր. 8. 6-18

Կուտես, կիագե-
նաս ու կօրհնես քո
Տեր Աստծուն այն
լավ երկրում, որ
նա տվել է քեզ:
Բ Օր. 8.10

Վախից՝ հավատք

Բժշկի խոսքերը սրտին իջան ծանր հարվածի պես: Ախտորոշումը քաղցկեղ էր: Նրա աշխարհը կանգ առավ, երբ սկսեց մտածել ամուսնու ու զավակների մասին: Նրանք թախանձագին աղոթել էին՝ Հուսալով ուրիշ արդյունքի մասին: Ի՞նչ կարող էին անել: Հոսող արցունքների միջից նա մեղմորեն ասաց. «Աստված, սա մեր կարողությունից վեր է: Խնդրում ենք մեր ուժը եղիր»:

Ի՞նչ ենք անում, երբ ախտաճանաչումը ոչնչացնող է, երբ հանգամանքները մեր կառավարումից դուրս են: Ո՛ր պիտի դիմենք, երբ վիճակն անհույս է: Ամբակում մարգարեի վիճակն էլ ղեկավարումից դուրս էր, ու այն վախը, որ ունեցավ, սոսկում պատճառեց իրեն: Գալիք դատապարտությունը աղետալի պիտի լիներ (Ամբ. 3.16-17): Սակայն այդ անխուսափելի քաոսային վիճակում Ամբակումը ընտրություն արեց հավատքով ապրելու (2.4) ու Աստծով ուրախ լինելու օգտին (3.18): Նա իր հավատքն ու վստահությունը չդրեց իր ընտանիքի, կարողության կամ միջոցների, այլ Աստծո բարություն ու մեծության վրա: Իր ունեցած վստահությունը Աստծո հանդեպ տվեց նրան կարողությունը՝ ասելու. «Տեր Աստվածն է իմ զորությունը, Նա կհաստատի իմ ոտքերը մինչև վերջ և ինձ բարձունք կհանի՝ հաղթելու իր երգով» (Հմ. 19):

Երբ դիմագրավում ենք դժվար պարագաներ - հիվանդություն, ընտանեկան դժվարություն, նյութական նեղություն - մենք էլ մեր հավատքն ու վստահությունը միայն Աստծո վրա պիտի դնենք: Նա մեզ հետ է մեր դիմագրաված ցանկացած պարագայում:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ, որ միշտ կարող եմ քեզ դիմել: Երբ դիմագրավում եմ կյանքի դժվարությունները, կարող եմ Քեզ վստահել: Շնորհակալ եմ, որ Դու իմ ապավենն ու զորությունն ես, տազնապների պահին շուտ գտնվող օգնական (Սաղմ. 46.1): Ամեն:

Երբ դիմագրավում ենք դժվար հանգամանքներ, կարող ենք Աստծուն վստահել, որպեսզի մեր ուժը լինի:

Կարդա՛ր Ամբակում 3.16-19

Տեր Աստվածն է իմ զորությունը, նա կհաստատի իմ ոտքերը մինչև վերջ:
Ամբ. 3.19

Սեր մանուկներին

1865-ին Թոմաս Բարնադոն Լոնդոնի բժշկական դպրոց ընդունվեց՝ Չինաստանում միսիոներ բժշկել լինելու երազանքով: Շատ չանցած՝ նա իր անմիջական շրջանակում էլ կարիքի հանդիպեց: Անտուն մնացած մանուկներ էին ապրում ու մեռնում Լոնդոնի փողոցներում: Բարնադոն որոշեց այս ահավոր վիճակի համար մի բան անել: Լոնդոնի արևելյան շրջանում չքավոր ու լքված մանուկների համար տներ պատրաստեց ու ազատեց 60.000 փոքրիկներ աղքատությունից ու հավանական վաղ մահացությունից: Աստվածաբան և հովիվ Ջոն Սթոլթն ասաց. «Այսօր մենք նրան կարող ենք անվանել փողոցի մանուկների պաշտպան ու խնամակալ սուրբ»: Հիսուսն ասաց. «Այդ երեխաներին թո՛ւյլ տվեք և նրանց մի՛ արգելեք ինձ մոտ գալ, քանի որ երկնքի արքայությունն այդպիսիներինն է» (Մատթ.

**Կարդա՛ր
Մատթոս 18.1-10**

Այդ երեխաներին թո՛ւյլ տվեք և նրանց մի՛ արգելեք ինձ մոտ գալ, քանի որ երկնքի արքայությունն այդպիսիներինն է:
Մատթ. 19.14

19.14): Երևակայիր ամբոխի և նույնիսկ Հիսուսի շահակերտների զարմանքն ու ապշանքը Հիսուսի արած այս հայտարարությունից համար: Հին օրերում մանուկները մեծ արժեք չէին ներկայացնում և մեծ մասամբ նետված էին կյանքի լուսանցքը: Ու դեռ Հիսուսն ընդունեց, օրհնեց ու արժեք տվեց նրանց: Հակոբոսը մարտահրավեր նետեց՝ ասելով. «Սուրբ և անարատ կրոնասիրությունը Աստծու ու Հոր առաջ այս է՝ որբերին և այրիներին նրանց նեղություն ժամանակ այցելել և իր անձն աշխարհից անարատ պահել» (Հակ. 1.27): Այսօր, այդ առաջին դարի մանուկների նման, երեխաները ցանկացած հասարակությունում, համայնքային ու ընտանեկան միջավայրում գրկանքի, չարաշահման ու շատ այլ վտանգների մեջ են: Մենք կարող ենք Հորը պատվել՝ ցույց տալով Նրա սերը այս փոքր մանուկների հանդեպ, որոնց Հիսուսն է ընդունում:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, աղոթում եմք, որ կարողանանք նույն սերը արտահայտել ու հոգատար լինել բոլոր նրանց հանդեպ, ովքեր կարիք ունեն, ու հոգ տանել նրանց, ինչպես հոգ ենք տանում մեր մանուկներին: Ամեն:

Հիսուսի սիրո մեկ արտահայտությունը եղիր:

Նրա թևերի տակ

Երբ մտածում եմ պաշտպանություն մասին, չեմ կենտրոնանում թռչնի փետուրների վրա: Հակառակ այն բանի, որ թռչնի փետուրները թվում են տկար ու թեթև պաշտպանության համար, շատ ավելին են, քան աչքը կարող է տեսնել:

Թռչնի փետուրները հիանալի օրինակ են Աստծո ստեղծագործության ու ծրագրի: Փետուրները ունեն սահուն ու թավ մաս: Փետուրի սահուն մասը ունի կարծր թելեր՝ փոքր կախիչներով, որոնք իրար են կցվում շղթայի նման: Թավ մասը թռչունին տաք է պահում: Փետուրի այս երկու մասերը միասին պաշտպանում են թռչունին հովից ու անձրևից: Սակայն մի շարք թռչունների ձագերի փետուրների՝ ամբողջովին զարգացած չլինելու պատճառով մայրը իր փետուրներով ծածկում է նրանց բնի մեջ՝ պաշտպանելու հովից ու անձրևից:

Աստծո պատկերը, «մեզ պահելով Նրա թևերի հովանու տակ» Սաղմոս 90.4-ում և այլ Սուրբ Գրային հատվածներում (տե՛ս՝ Սաղմ. 17.8), հանգստի ու պաշտպանության համար է: Միտքն եկող պատկերը իր փոքրիկներին փետուրներով ծածկող մայր թռչունինն է, ծնողի նման, ում թևերը ապահով տեղ են մանուկների համար վախազդու փոթորիկներից ու ցավերից: Աստծո հանգստացնող ներկայությունը ապահովություն և պաշտպանություն է տալիս կյանքի զգացական փոթորիկներից: Թեև մենք կյանքում դժվարությունների ու ցավերի միջով ենք անցնում, սակայն կարող ենք դրանց դիմադրավել առանց վախի, եթե մեր երեսները դեպի Աստված են ուղղված: Նա մեր «ապաստանն» է (Սաղմ. 90.2, 4, 9):

Աղոթք - Հայր Աստված, օգնիր ինձ հավատալ, որ Դու իմ ունեցած ցանկացած վախից մե՞ծ ես: Ամեն:

Կարդա՛ր Սաղմոս 90

Իր ծոցում կպահի կաշտպանի քեզ, և դու ապահովություն կունենաս Նրա թևերի հովանու տակ:

Սաղմ. 90.4

Երբ վախը հույսդ է մարում, Աստծուն ապավինիր: Նա այն ապաստանն է, որին կարող ես հասնել ծնկաչոք:

Ոչ թե վախ, այլ՝ հավատք

Բարեկամս ինձ ասաց. «Ամուսնուս առաջարկեցին պաշտոնի բարձրացում օտար երկրում, սակայն ես չուզեցի մեր տնից հեռանալ, հետևաբար նա ակամա մերժեց հրավերը»: Նա բացատրեց, որ նրան ետ պահեցին նման մեծ փոփոխություններից, նոր փորձությունների դիմագրավելու վախը, միաժամանակ մտածեց, թե ի՞նչ կորցրեց՝ մերժելով առաջարկը:

Իսրայելացիները թույլ տվեցին, որ իրենց մտահոգություններն ու վախը ապշեցնեն իրենց, երբ կոչ արեցին նրանց բնակվելու հարուստ ու բարեբեր երկրի մեջ, ուր «կաթ ու մեղր» էր հոսում (Ելք 33.3): Երբ նրանք լսեցին մեծ քաղաքներում բնակվող ազդեցիկ ժողովուրդների տեղեկությունները, սկսեցին վախենալ: Իսրայելացիների մեծամասնությունը երկիր մտնելու կոչը մերժեց:

Սակայն Հեսուդն ու Քաղբը նրանց մղեցին վստահելու Աստծուն՝ ասելով. «Տերը ...մեզ հետ է: Մի՛ վախեցեք նրանցից» (Թվ. 14.9): Թեև այնտեղ ապրող մարդկանց թիվը մեծ էր թվում, սակայն նրանք կարող էին վստահ լինել, որ Տերը իրենց հետ պիտի լինի:

Բարեկամիս հրամանն էր տրվել ուրիշ երկիր գնալ, ինչպես իսրայելացիներին, սակայն նա զղջաց, որ իրենց վախերի պատճառով առիթը բաց թողեցին: Ինչպիսի՞ն են քո հանգամանքները: Կարո՞ղ ես դիմագրավել վախազդու վիճակների: Եթե այդպիսին են հանգամանքները, իմացիր, որ Տերը քեզ հետ է ու քեզ պիտի առաջնորդի: Իր անսահման սիրով կարող ենք հավատքով առաջ ընթանալ:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, այնպես արա, որ չթողնեմ, որ վախերս Քեզ հետևելու որոշումից ետ կանգնեցնեմ, որովհետև գիտեմ, որ Դու միշտ ինձ պիտի սիրես ու երբեք չպիտի թողնես: Ամեն:

Վախը կարող է մեզ անդամալուծել, սակայն հավատքը մղում է մեզ Աստծուն հետևելու:

Կարդա՛ր
Թվեր 13.25 - 14. 9

Տերը մեզ հետ է: Մի՛ վախեցեք նրանցից:
Թվեր 14. 9

Խաղաղ տան խոստում

Վաթառնահինգ միլիոն՝ Ներկայումս այդ է աշխարհում գաղթականների թիվը: Մարդիկ, որոնք ստիպված են թողնել իրենց տները պատերազմների և հալածանքների հետևանքով: Այս թիվը ամենաբարձրն է մինչև օրս արձանագրվածներից: Միացյալ Ազգերի Կազմակերպությունը քաջալերում է առաջնորդներին՝ միասին գործակցել գաղթականներ ընդունելու համար, որպեսզի ամեն երեխա ուսում ստանա, ամեն չափահաս գտնի հարմար աշխատանք, և ամեն ընտանիք տուն ունենա: Գաղթականների համար տներ կառուցելը ճգնաժամների ժամանակ ինձ հիշեցնում է Աստծո խոստումներից մեկը Հուդայի ժողովրդին, երբ անգուլթ Ասորեստանի բանակները սպառնում էին նրան: Տերը Միքիա մարգարեին պարտականություն է տալիս ժողովրդին զգուշացնելու, որ կարող են իրենց տաճարը, ինչպես նաև սիրելի Երուսաղեմը կորցնել: Սակայն Աստված խոստանում է գեղեցիկ ապագա կորստից հետո: Օր պիտի գա, ասաց Միքիան, երբ Աստված աշխարհի ժողովուրդներին Իր մոտ պիտի կանչի: Վայրագությունը պիտի վերանա: Պատերազմի զենքերը հողագործության գործիքներ պիտի դառնան, և յուրաքանչյուր մարդ, որ պատասխանում է Աստծո կոչին, պիտի գտնի խաղաղ տուն և արդյունավոր կյանք Նրա Թագավորության մեջ (4.3-4):

Շատերի համար, ինչպես նաև քեզ համար, ապահով տունը թվում է ավելի երազային, քան ճշմարիտ: Սակայն մենք կարող ենք հենվել Աստծո տված խոստումներին, երբ սպասում ենք, գործում ու աղոթում, որ այդ խաղաղ տները իրականություն դառնան:

Աղոթք - Ով Աստված, շնորհակալ ենք գեղեցիկ տան խոստումիդ համար: Խնդրում ենք խաղաղություն բեր մեր այս աշխարհին ու հոգա Քո բոլորի զավակների կարիքները: Ամեն:

Կարդա՛ Միքիա 4. 1-5

Յուրաքանչյուրը կհանգստանա իր որթատունկի եւ իր թզենու տակ, և չի լինի ոչ ոք, որ սարսափ ազդի:
Միք. 4.4

Աստված խոստանում է Իր որդիներին խաղաղ տուն Իր Թագավորության մեջ:

Դու նախատիպ ես

Յուրաքանչյուրս Աստծո ձեռքերով ստեղծված նախատիպ ենք: Ինքնաստեղծ այր կամ կին չկա: Որևէ մեկը ինքն իրենից տաղանդավոր, երևելի ու փայլուն չէ: Աստված մեզնից յուրաքանչյուրին իր ձեռքերով է շինել: Նա մեզնից յուրաքանչյուրի մասին մտածել ու կազմել է իր անբացատրելի սիրով:

Աստված Ինքն է կառուցել քո մարմինը, միտքն ու հոգին: Նա դեռևս շարունակում է շինել քեզ: Նրա միակ նպատակն է մեր հասունությունը: «Նա, ով ձեր մեջ այս բարի գործն սկսեց, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլ. 1.6): Աստված քեզ ավելի քաջ, ուժեղ, մաքուր, խաղաղ, սիրող ու քիչ եսասեր է դարձնում. այն անձը, որ միշտ ցանկացել ես լինել:

«Նրա ողորմությունը հավերժ է, նրա ճշմարտությունը՝ սերնդից սերունդ» (Սաղմ. 99.5): Աստված միշտ քեզ սիրել է ու հավատարիմ պիտի լինի մինչև վերջ:

Մեզ տրված սերը հավիտենական է, ու մեր Աստվածը երբեք մեզ չպիտի լքի: Այս իրողությունը լավ պատճառ է ուրախ լինելու ու «Նրա առջև ելնելու ցնծություն» (Հմ. 2):

Եթե չես կարող երգել, պարզապես աղաղակ բարձրացրու դեպի Նա. «Ծառայեցե՛ք Տիրոջն ուրախությամբ» (Հմ. 1):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ Դու շարունակում ես ինձ շինել: Դժվար է թվում ինձ փոխվել, սակայն հաստատ գիտեմ, որ Դու դեռ գործում ես իմ մեջ, ու ես աճում եմ: Ամեն:

Կարդա՛ Սաղմոս 99

Նա է Տեր Աստվածը մեր. նա ստեղծեց մեզ, և ոչ թե մենք եղանք. նրա ժողովուրդն ենք մենք ու ոչխարներից նրա արոտի: Սաղմ. 99.3

Հոգևոր աճ է արձանագրվում, երբ հավատքը մշակվում է:

Տրտմությունից՝ ուրախություն

Քելիի հղիությունը բարդություններ առաջացրեց, ու բժիշկները մտահոգ էին նրա վիճակով: Երկուսքի ցավերի ուժեղ ու երկարատև լինելու պատճառով որոշեցին շտապ վիրահատության ենթարկել: Սակայն հակառակ նրա չարհարանքին՝ Քելլին շուտով մոռացավ իր ցավերը, երբ ձեռքերի մեջ առավ նորածնին: Նրա տրտմությունը ուրախության փոխվեց:

Աստվածաշունչը հաստատում է այս ճշմարտությունը. «Կինը երբ ծննդաբերում է, տրտմություն է ունենում, քանի որ իր ժամանակը հասած է լինում, բայց երբ երեխային ծնում է, նեղությունն այլևս չի հիշում՝ այն ուրախության պատճառով, որ աշխարհում մի մարդ ծնվեց» (Հովհ. 16:21): Հիսուսը այս օրինակը բերեց Իր աշակերտների հետ խոսելու ժամանակ՝ շեշտելու, որ թեև նրանք տրտմություն պիտի ունենային, որովհետև շուտով նրանց պիտի թողներ, սակայն այդ տրտմությունը ուրախության պիտի փոխվեր, երբ Իրեն դարձյալ տեսներին (Հմ. 20-22):

Հիսուսն ակնարկում էր Իր մահվանն ու հարությանը և այն բաներին, որ դրանից հետո էին պատահելու: Իր հարությունից հետո Հիսուսը քառասուն օր ևս նրանց հետ պիտի լիներ ու սովորեցներ երկինք համբարձվելուց առաջ (Գործք Առ. 1:3): Սակայն Հիսուսը չթողեց նրանց տրտմության ու ցավի մեջ ու խոստացավ Սուրբ Հոգու ուրախությունով լցնել նրանց (Հովհ. 16:7-15, Գործք Առ. 13:52): Թեև մենք չենք տեսել Հիսուսին երես առ երես, սակայն որպես հավատացյալներ ունենք վստահություն, որ մի օր մենք պիտի տեսնենք Նրան: Այդ օրը ցավը, որ մենք դիմագրավում ենք այս աշխարհում, պիտի մոռացվի: Սակայն մինչև այդ օրը Տերը մեզ առանց ուրախության չի թողնի. Նա մեզ է տվել Իր Հոգին (Հռոմ. 15:13, Ա. Պետ. 1:8-9):

Աղոթք - Սիրելի՛ Տեր, ցանկանում եմք Քո ներկայության մեջ լինել, հատկապես երբ ցավ ու նեղություն ենք դիմագրավում: Դեռ մեզ չես լքել. Սուրբ Հոգին բնակվում է մեր մեջ ու տալիս ուրախություն: Ամեն:

Մի օր մեր տրտմությունը ուրախության պիտի փոխվի:

Կարդա՛ր
Յովհ. 16. 16-22

Դուք կտրտմեք, բայց ձեր տրտմությունն ուրախության կվերածվի:
Յովհ. 16.20

Դարձը

Մի տարեց վետերան գինվորականի հուղարկավորութեան ընթացքում հովիվը նշեց, թե մահացողը ուր կարող է լինել: Սակայն դրանից հետո, փոխանակ ասելու մարդկանց, թե ինչպես կարող են Աստծուն ճանաչել, նա մտածեց Աստվածաշնչի մեջ չգտնվող բաների մասին: Ու ես ինձ հարցրի. «Ո՞ւր է հույսը»:

Վերջապես նա հրավիրեց, որ միասին փակման երգը երգենք: Ու երբ ոտքի ելանք երգելու «Ի՞նչ մեծ ես դու» երգը, ներկաները սկսեցին Տիրոջը փառաբանել իրենց հոգու խորքերից: Մի քանի րոպե հետո սենյակում գոյություն ունեցող հոգին ամբողջովին փոխվեց: Զարմանալիորեն երրորդ համարը երգելու ժամանակ զգացումներս ճմլեցին ձայնս: Երբ մտածում եմ, թե Տերը չիմայեց Իր Որդուն՝ ուղարկեց մեռնելու, սիրտս ճգմվեց: Խաչի վրա բռտա կրեց, սիրեց ինձ, արյուն թափեց, մեռավ մեղքիս համար: Մինչև մեր այդ սքանչելի երգը երգելը ես մտածում էի, թե մի՞թե Աստված Իրեն պիտի ցույց տար այդ հուղարկավորութեան ընթացքում: Իրականում Նա երբեք չլիցեց մեզ:

Մեկ ակնարկը Եսթերի գրքին հայտնում է այս ճշմարտությունը: Հրեաները աքսորի մեջ էին, ու մի հզոր ազգ ուզում էր բնաջնջել նրանց: Սակայն այդ խավարագույն պահերին մի անաստված թագավոր ինքնապաշտպանություն իրավունք տվեց գերի եղած իսրայելցիներին նրանց դեմ, ովքեր ուզում էին նրանց սպանել (Եսթ. 8:11-13): Հաջող ինքնապաշտպանություն ու տոնակատարություն տեղի ունեցավ: Զարմանալի չէ, որ Աստված հայտնվում է հուղարկավորութեան ընթացքում երգի բառերի միջից: Նա ցեղասպանության փորձը տոնակատարության փոխեց ու խաչելությունը՝ հարություն ու փրկություն:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմք Քո մեծության ու հրաշագործության համար: Ամեն:

Մեր հիանալի Աստված հաճախ Իր ներկայությունը ցույց է տալիս, երբ մենք անգամ դա չենք ակնկալում:

Կարդա՛
Եսթեր 8. 11-17

Հրեաների համար մեծ լույս ծագեց, և նրանք շատ ուրախացան:

Եսթ. 8.16

Մեր հիանալի Աստված հաճախ Իր ներկայությունը ցույց է տալիս, երբ մենք անգամ դա չենք ակնկալում:

Հանդարտ եղիր

«Կազմակերպված միտք. ճիշտ մտածել տեղեկատվական այս ժամանակաշրջանում» գրքի հեղինակ Դանիել Լեվիտինը ասում է. «Անցյալ հինգ տարվա ընթացքում մենք ստեղծել ենք ավելի շատ տեղեկատվություն, քան ամբողջ մարդկության պատմության մեջ, ու դեռ շարունակում ենք ամեն օր»: Ապա շարունակում է. «Այլ խոսքով, մենք մոլի ենք եղել վերագրվածության»: Շարունակական լուրերի ու գիտության մեծ հոսքը կարող է իշխել մեր մտքին: Ներկա տեղեկատվական ռաբակոմունների միջավայրում ավելի դժվար է ժամանակ գտնել լուռ մնալու, մտածելու և աղոթելու:

Կարդա՛ր
Սաղմոս 45. 1-11

Շտապեցե՛ք ու իմացե՛ք, որ ես Աստվածն եմ: Սաղմ. 45.11

Սաղմոս 45.10-ն ասում է. «Շտապեցե՛ք ու իմացե՛ք, որ ես Աստվածն եմ»: Այս համարը մեզ հիշեցնում է Տիրոջ վրա կենտրոնանալուն ժամանակ տրամադրելու անհրաժեշտությունը: Շատերն են մտածում, որ «լուռ պահը» էական մասն է մեր կյանքի՝ մի պահ Աստվածաշունչ կարգալու, աղոթելու ու նկատի առնելու Աստծո բարությունն ու մեծությունը: Սաղմոս 45-ի հեղինակի նման, երբ մենք էլ փորձառությունը ունենանք այն ճշմարտության, թե «Աստված ապավենն ու զորությունն է մեր և մեր օգնականը մեզ հասած խիստ նեղությունների մեջ» (Հմ. 2), մեր վախը մեզնից կհեռանա (Հմ.3), մեր կենտրոնացումը աշխարհի տառապանքից Աստծո խաղաղությանը կուղղորդի ու կստեղծի վստահություն, թե մեր Աստվածն է դեկավարում (Հմ. 10):

Հոգ չէ, որքան էլ մեր աշխարհը քաոսային լինի մեր շուրջ, մենք կարող ենք լուրջություն ու զորություն գտնել մեր երկնավոր Հոր սիրո ու զորության մեջ:

Աղոթք - Երկնավոր Հայր, բերում եմք Քեզ մեր աղմկալի կյանքերը ու մեր խառնակույտ մտքերը, որպեսզի սովորենք հանդարտ մնալ ու գիտենալ, թե Դու Աստված ես: Ամեն:

Ամեն օր մենք կարիք ունենք հանդարտ լինելու ու Տիրոջը լսելու:

ՅՆՃՎԵԼՈՒ պատրաստ

Ամուսն վերջին մի օր ճեմելու գնացինք Անգլիայի «Նոր անտառում»: Հաճելի ժամանակ անցկացրինք՝ դիտելով մոտակայքում արածող ձիերին ու քաղելով անուշահամ վայրի մորենի, որ հավանաբար տարիներ առաջ ուրիշներն էին տնկել: Մինչ այդ հիշեցի Հիսուսի խոսքը. «Ես ձեզ ուղարկեցի հնձելու այն, ինչ դուք չեք մշակել» (Հովհ. 4.38):

Միրում եմ այդ բառերի մեջ Աստծո թագավորության առատաձեռնությունը արտահայտությունը: Նա թույլ է տալիս, որ մենք վայելենք ուրիշների աշխատանքի պտուղները, ինչպես Հիսուսի հանդեպ մեր ունեցած սերն ենք բաժանում բարեկամի հետ, որի ընտանիքը աղոթում էր նրա համար երկար տարիներ: Նաև սիրում եմ Հիսուսի խոսքերի սահմանները, որ մենք էլ սերմեր պիտի ցանենք, որոնց արդյունքը մենք չպիտի վայելենք, այլ ուրիշները: Հետևաբար, մեզ տրված բոլոր պարտականությունները կատարում ենք առանց մտածելու, թե պատասխանատու ենք արդյունքների համար: Վերջապես, Աստծո գործը մեզնից չէ կախված: Նա ունի բոլոր աղբյուրները արդյունավոր հունձքի համար, ու մենք առանձնաշնորհում ունենք մեր դերը խաղալու դրա մեջ:

Հարց եմ տալիս, թե ի՞նչ դաշտեր են քո և իմ առջև պատրաստ հնձվելու: Թող որ Հիսուսի տված ցուցումներին ուշադիր լինենք. «Ձեր աչքերը բարձրացրե՛ք ու տեսե՛ք արտերը» (Հմ. 35):

Աղոթք - Ստեղծագործ Աստված, շնորհակալ եմ Քո մեծ առատաձեռնության, ինչպես նաև Քո վստահության համար՝ Քո գործն անելու: Օգնիր ինձ, որ պատրաստ լինեմ Քո բարի լուրը կիսելու առիթների համար: Ամեն

Կարդա՛ր
Յովհ. 4. 35 - 38

Ձեր աչքերը բարձրացրե՛ք ու տեսե՛ք արտերը, որ սպիտակել են ու արդեն հնձի հասել:

Յովհ. 4. 35

Մենք կարող ենք հնձել այն, ինչ ուրիշներն են ցանել:

Անօրենությունը վերացրած

Պատանեկան տարիներին ընկերուհուս հետ մեր տան մոտ գտնվող նավերների խանութը գնացինք: Նա ցնցեց ինձ, երբ մի բուռ լիքը գունավոր մատիտներ հիշեցնող ձողիկներ դրեց գրպանս ու խանութից դուրս հրեց ինձ՝ առանց վճարելու: Մի ամբողջ շաբաթ մեղքի զգացումը ճնշում էր ինձ: Ապա մորս մոտ գնացի և մեղքս խոստովանեցի արցունքոտ աչքերով: Ցավելով ընկերուհուս չընդդիմանալու սխալ որոշումին համար՝ վերադարձրի գողացված ձողիկները, ներողություն խնդրեցի ու խոստացա այլևս գողություն չանել: Սակայն խանութպանը բարկություն բերեց ինձ հորդորեց այլևս չվերադառնալ իր մոտ: Բայց քանի որ մայրս ներեց ինձ և վատահեցրեց, որ ես լավագույնն էի արել՝ շտկելու սխալս, այդ գիշեր խաղաղ քնեցի: Այդպես էլ Դավիթ թագավորը ներումի հանգիստ ու խաղաղ զգացումը ունեցավ իր արած խոստովանության համար (Սաղմ. 51):

31.1-2): Նա Բեթսաբեի ու Ուրիայի դեմ իր գործած մեղքը պահեց (ԲԹագ. 11-12), մինչև նրա «գորությունը տապալվեց»: Բայց երբ Դավիթը մերժեց «ծածկել» իր անօրենությունները, Տերը ներեց նրա մեղքերը (Սաղմ. 33.5): Տերը պաշտպանեց նրան «տագնապներից» և շրջապատեց նրան «ազատության երգերով»: Դավիթը հրճվեց, որովհետև «ուլքեր իրենց հույսը դրել են Տիրոջ վրա, Տիրոջ ողորմությունը կպարուրի նրանց» (Հմ. 11): Մենք չենք կարող ընտրել մեր մեղքերի հետևանքները կամ մարդկանց տրվող պատասխանները կանխատեսել, երբ խոստովանենք ու ներում խնդրենք: Սակայն Տերը կարող է մեզ զորացնել՝ վայելելու մեր ազատությունը մեղքի գերությունից և ունենալու խաղաղություն խոստովանությունով, ինչպես Նա է հաստատում՝ ասելով, թե մեր մեղքերը ներված են հավիտյան:

Աղոթք - Տե՛ր, երբ խոստովանենք մեր մեղքերը ու ստանանք Քո ներումը, խնդրում ենք օգնիր մեզ՝ հավատալու, թե մեր մեղքերը ամբողջովին և հավիտյան սրբված են: Ամեն:

Երբ Աստված ների, մեր անօրենությունները կջնջվեն:

Կարդա՛ր
Սաղմոս 31.1-11

Ասացի, թե կխոստովանեմ մեղքերն իմ, և դու թողություն կտաս իմ մեղքերի ամբողջ ամբարշտությանը:
Սաղմ. 31.5

Ուրիշների շահը

Ընկերս՝ Ջեյմին, աշխատում է մեծ միջազգային առևտրական ընկերությունում: Աշխատանքի առաջին օրերին մի մարդ մոտեցավ նրա գրասեղանին ու սկսեց խոսել հետը: Մարդը հարցրեց նրա գործի բնույթի մասին: Ջեյմին այդ մասին ասելուց հետո հարցրեց նրա անունը: «Անունս Ռիչ է»,- ասաց մարդը:

«Ուրախ եմ քեզ հանդիպելու»,- ասաց Ջեյմին ու շարունակեց՝ հարցնելով. «Եվ ի՞նչ ես անում այստեղ»: «Ես այս ընկերության տերն եմ»,- պատասխանեց մարդը: Ջեյմին հանկարծ հասկացավ, որ այս ոչ պաշտոնական ու համեստ խոսակցությունը իր ծանոթությունն էր աշխարհի մեծահարուստ մարդկանցից մեկի հետ:

Անձնապատանություն ու «ես»-ը փառավորելու ներկա օրերում այս պատմությունը կարող է ծառայել որպես պարզ հիշեցում Փիլիպպեցիների նամակում արձանագրված Պողոս առաքյալի այս կարևոր խոսքերի. «Ոչ մի բան թող չլինի հակառակությունք և ոչ էլ սնապարծությունք» (2.3): Նրանք, ովքեր իրենց ուշադրությունը ուրիշներին են սևեռում և ոչ իրենց, ունեն Պողոսի նշած այս հատկանիշները: Երբ մենք «մյուսին մեր անձից ավելի լավ ենք համարում», ցույց ենք տալիս Քրիստոսանման խոնարհություն (Հմ. 3): Մենք պատկերացնում ենք Հիսուսին մեր կյանքերի մեջ, որ չի եկել «որ իրեն ծառայեն, այլ ինքը ծառայի» (Մարկ. 10.45): Երբ մեզ վրա առնում ենք «ծառայի կերպարանք» (Փիլ. 2.7), մենք ունենում ենք Հիսուսի մտածումը (Հմ. 5): Երբ ուրիշների հետ ենք հաղորդակցվում, միայն մեր շահը չփնտրենք, այլ «ընկերոջն էլ» (Հմ. 4):

Աղոթք - Տե՛ր Հիսուս, Դու մեզ տվեցիր խոնարհության օրինակը, երբ թողեցիր երկնքի փառքը ու եկար աշխարհի խոնարհ ծառա լինելու: Օգնիր մեզ, որ մեր ամենօրյա գործերում ցույց տանք Քրիստոսանման խոնարհություն: Ամեն:

Աստծուն ծառայիր՝ ուրիշներին ծառայելով:

Կարդա՛ր Փիլիպ. 2. 1-11

Խոնարհությամբ մեկը մյուսին թող իր անձից ավելի լավ համարի: Միայն ձեր անձի շահերին չհնայեք: Փիլիպ. 2. 3-4

Ֆրապուրված

2016-ի ամռանը եղբորս աղջիկը համոզեց ինձ բջջային նոր հեռախոսով Պոկեմոնգոու խաղը փորձել: Այս խաղի նպատակն է գտնել ու վերցնել Պոկեմոն կոչվող փոքր արարածներին: Երբ ինչ-որ մեկը երևում է խաղի մեջ, կարմիր ու սպիտակ գնդակներն էլ են երևում հեռախոսի էկրանին: Պոկեմոնը բռնելու համար խաղացողը պետք է գնդակը մատի շարժումով նրա ուղղութեամբ տանի: Պոկեմոնները ավելի հեշտ կարող են բռնվել՝ հրապուրվելով:

Սակայն պոկեմոնները միակը չեն, որոնց կարելի է հրապուրել: Հակոբոսը՝ Հիսուսի եղբայրը, իր գրած նամակում մեզ հիշեցնում է, թե «ամեն մեկը փորձվում է իր իսկ ցանկությունից հրապուրված ու խաբված» (Հակ. 1.14): Այլ խոսքով, մեր ցանկությունները գործում են փորձության հետ՝ մեզ հրապուրելու և առաջնորդելու սխալ ճանապարհով: Թեև կարող ենք փորձության ենթարկվել մեր խնդիրների համար Աստծուն այպանելու և նույնիսկ սատանային, բայց մեր իսկական վտանգը մեր մեջ է:

Սակայն կա մի բարի լուր: Մենք կարող ենք փորձության հրապուրից փախչել Աստծո հետ խոսելով այն բաների մասին, որոնք մեզ փորձում են: Թեև ինչպես Հակոբոսն է բացատրում, «Աստված չար բաներով չի փորձվում. ինքն էլ ոչ մեկին չի փորձում» (1.13), նա հասկանում է մեր մարդկային ցանկությունը՝ սխալ բան անելու: Մենք միայն Աստծուց պիտի խնդրենք այն իմաստությունը, որ ինքն է խոստացել մեզ (Հակ. 1.1-6):

Աղոթք - Տե՛ր, երբ փորձության ենթարկվեմ, ցույց տուր ինձ փախուստի դուռը: Ամեն:

Կարդա՛ր
Յակոբոս 1.5-6, 12-15

Բայց ամեն մեկը փորձվում է իր իսկ ցանկությունից հրապուրված ու խաբված: Յակ. 1.14

Աղոթիր սխալ անելու ճանապարհից հեռանալու համար:

Օձն ու եռանիվը

Տարիներ շարունակ դարձյալ ու դարձյալ պատմել եմ մի պատմություն Գանայից, ուր մանուկ ժամանակ եղբայրս ու ես ապրել ենք: Հիշում եմ, որ մի օր մեր հին մետաղյա եռանիվը կանգնեցրի փոքր կորեա օձի վրա: Եռանիվի՝ շատ ծանր լինելու պատճառով օձը բռնված մնաց առջևի անիվի տակ: Մորս ու մորաբերորջս մահից հետո կորած մի նամակ գտանք, որի մեջ մայրս հիշում էր այդ դեպքը իր բոլոր մանրամասնություններով: Իրականության մեջ ես եռանիվը օձի վրա կանգնեցրի, ու եղբայրս մորս մոտ վազեց՝ ասելու պատահածի մասին: Մորս նամակը դեպքի մանրամասնությունները ներկայացնում էր ճշգրիտ ձևով՝ որպես ականատեսի վկայություն:

Կարդա՛ր Ղուկաս 1. 1-14

Ես էլ, որ սկզբից բոլոր բաները ճշմարտապես հետազոտեցի, ուզեցի քեզ կարգով գրել: Ղուկ. 1.3

Ղուկասը որպես պատմաբան հասկացավ կարևորությունը ճշգրիտ արձանագրության: Նա բացատրեց, թե ինչպես Հիսուսի պատմությունը «ականատեսներն ու խոսքին սպասավոր եղողներն էին սկզբից ավանդել մեզ» (Ղուկ. 1.2): Նա գրեց պատվական թեոփիլեին. «Ուզեցի քեզ կարգով գրել, որպեսզի իմանաս այն բաների ստուգությունը, որ սովորեցիր» (Հմ. 3-4): Այս աշխատասիրության արդյունքը եղավ Ղուկասի Ավետարանը: Ապա Գործք Առաքելոց գրքի ներածականում Ղուկասը Տեր Հիսուսի մասին ասում է. «Իր չարչարանքից հետո շատ ապացույցներով կենդանի կանգնեցրեց իրեն» (Գործք Առ. 1.3):

Մեր հավատքը հաստատված չէ զրույցի ու բաղձալի մտածումի վրա, այլ արմատավորված է Հիսուսի կյանքի վավերագրական արձանագրության վրա, Նա, որ եկավ մեզ խաղաղություն տալու Աստծո հետ: Նրա պատմությունը հաստատ կմնա:

Աղոթք - Հայր, մեր հույսը Քո Որդու վրա է: Շնորհակալ եմք, որ Նրա պատմությունը պահել ես մեզ համար Աստվածաշնչի էջերում: Ամեն:

Հարազատ հավատքը արմատավորված է տրամաբանության մեջ:

Թախանձանքով փնտրել

Ամեն շաբաթ օր մեր ընտանիքը շարվում է մրցադաշտի եզրին՝ քաջալերելու աղջկաս, որ վազում է իր ավագ դպրոցի վազքի խմբի հետ: Հատման գիծն անցնելուց հետո մարզիկները շտապում են միանալ իրենց խմբին, մարզիչին ու ծնողներին: Այնտեղ եղող 300-ից ավելի բազմության մեջ դժվար է ինչ-որ մեկին գտնել: Մենք ուշադրությամբ դնում ենք ամբոխը, մինչև գտնում ենք մեր շատ սիրելի աղջկան՝ նրան գրկելու համար:

Բաբելոնում յոթանասուն տարվա գերությունից հետո Աստված հրեաներին ետ բերեց Հուդա ու Երուսաղեմ: Եսային նկարագրում է Աստծո հրճվանքը, նրանց տուն վերադարձին ճանապարհ պատրաստելու աշխատանքը ու դռներ բանալը՝ նրանց ընդունելու: Աստված վերահաստատում է իր կոչումը՝ նրանց դարձնելու իր սուրբ ժողովուրդը ու վերահաստատելու նրանց քաղաքի պատիվը՝ «Փնտրված» ու «ոչ թե լքված քաղաք» նոր անուններով (Ես. 62.12): Նա թախանձանքով փնտրում է նրանց, ովքեր ցրված էին Բաբելոնի մեջ՝ ետ բերելու դեպի Իրեն:

Իսրայելի որդիների նման մենք էլ Աստծո սիրելի որդիներն ենք՝ թախանձանքով փնտրված: Թեև մեր մեղքը որոշ ժամանակ մեզ իրենից հեռացրեց, Հիսուսի զոհողությունը հարթեց նրան տանող այդ ճանապարհը: Նա մեզնից յուրաքանչյուրին ուշադրությամբ փնտրում է ամբոխի մեջ՝ սպասելով մեզ սիրով ողջագուրելու:

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ ինձ ես փնտրում, երբ կրած եմ, ու տուն ես վերադարձնում Հիսուս Քրիստոսով: Ամեն:

Աստված փնտրում է իր սիրելի զավակներին:

Կարդա՛ր
Եսայի 62. 1-12

Դու կոչվելու ես
Փնտրված քաղաք
և ոչ թե լքված:
Ես. 62.12

Ուշադրություն դարձնել

Ձոն նյութտոնը գրում է. «Եթե տեսնեմ, որ մի մանուկ մի լու-
մա է կորցրել, և կարող եմ ուրիշը տալով նրա արցունքնե-
րը սրբել, զգում եմ, որ մի բան արել եմ: Ես պիտի ուրախ լի-
նեմ ավելի մեծ բաներ անելով, սակայն չպիտի անտեսեմ սա»:

Այս օրերին դժվար չէ գտնել կարիքավոր մարդիկ՝ խանութի
վաճառող, որ երկրորդ աշխատանքն է կա-
տարում՝ իր ընտանիքի կարիքները հոգա-
լու համար, գաղթական, որ տուն է փնտ-
րում, միայնակ մայր, որի մտահոգությունե-
ները իր հույսը կտրել են, կամ էլ մենակ
մնացած տարեց մարդ, որ մտածում է, թե
իր օգտակար լինելու օրերն անցել են:

Սակայն ի՞նչ պիտի անել: «Երանի՛
նրան, ով մտածում է աղքատի ու տնանկի մասին», - գրում է Դա-
վիթը (Սաղմ. 41.1): Եթե նույնիսկ չենք կարող չքավորությունը
մեղմացնել նրանց, ում հանդիպում ենք, կարող ենք գոնե հաշվի
առնել նրանց, այսինքն՝ «ուշադրություն դարձնել»: Մենք կարող
ենք մարդկանց ցույց տալ, որ իրենցով մտահոգ ենք: Կարող ենք
նրանց հետ ազնիվ վարվել ու հարգել, հոգ չէ թե նրանք դյուրագր-
գիւ ու հոգնեցուցիչ են: Կարող ենք նրանց պատմությունները
ուշադրությամբ լսել: Կարող ենք նաև աղոթել նրանց համար, ինչն
ամենից ազդու և բուժիչ արարքն է: Հիշենք Հիսուսի տված հին
տարրաբանությունը, երբ ասաց. «Ավելի՛ երանելի է տալը, քան
առնելը» (Գործք Առ. 20.35): Ուշադրություն դարձնելը իր դրա-
կան հետևանքն է ունենում. մենք ավելի ուրախ ենք լինում, երբ
մեր անձերն ենք տալիս: Նկատի ունենանք չքավորներին:

Աղոթք - Հայր, ամեն օր մեզ ցույց տուր նրանց, ովքեր մեր
ուշադրության կարիքն ունեն: Տուր մեզ սերն ու համբերությու-
նը, որ իրապես հաշվի առնենք նրանց, այնպես, ինչպես
համբերությամբ մեզ ես իրել: Ամեն:

Միայն սիրո համար տրված կյանքով արժե ասրել:

Ֆրեդերիկ Բյուչներ

Կարդա՛ Սաղմնո 40.1-3

Երանի նրան, ով
մտածում է
աղքատի ու
տնանկի մասին:
Սաղմ. 40.1

Առաա բերք

Գարնանն ու ամուսնը հիանում եմ մեր հարևանի բակում Գաճող պտուղները տեսնելով: Նրանց դրած որթատունկերը մազլցում են ցանկապատի վրա՝ մեծ քանակով խաղող տալով: Կարմիր սալորներով լեցուն ճյուղերը կախվում են ցանկապատի մեր կողմում: Թեև մենք չենք մշակում հողը, ցանում հունդեր, ջրում ու հոգ տանում պարտեզին, մեր հարևան զույգը իրենց հունձքը բաժանում է մեզ հետ: Նրանք ստանձնում են ամբողջ աշխատանքն ու պատասխանատվությունը պարտեզը մշակելու ժամանակ, սակայն մեզ ուրախացնում են իրենց բերքից բաժին հանելով:

Ցանկապատի մյուս կողմում եղող ծառերի ու որթատունկերի բերքը ինձ հիշեցնում է այլ բերք, որ օգուտ է բերում ինձ ու իմ կյանքի մեջ Աստծո դրած մարդկանց: Այդ բերքը Հոգու պտուղն է:

Քրիստոսի հետևողների առաքելությունն է վայելել Սուրբ Հոգու զորությունը ապրելու կյանքի արդյունքը (Գաղ. 5.16-21): Մինչ Աստծո ճշմարտության հունդերն աճում են մեր սրտերում, Հոգին ավելացնում է կարողությունը մեր մեջ՝ ցույց տալու «սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն» (Հմ. 22-23): Երբ մեր կյանքերը հանձնենք Տեր Հիսուսին, այլևս եսակենտրոն լինելու հակում չենք ունենա (Հմ. 24): Ժամանակի ընթացքում Սուրբ Հոգին փոխում է մեր մտածելակերպը, կեցվածքն ու վարմունքը: Մինչ մեծանում ենք ու աճում Քրիստոսով, կարող ենք մեր հարևաններին ավելի սիրելու ուրախությունը ունենալ՝ բաժանելով իր ազնիվ հունձքի բարիքները:

Աղոթք - Տեր, խնդրում եմք մշակիր Պոգու պտուղը մեր սրտերում ու մտքերում, որպեսզի մեր դրացիները կարողանան վայելել Քո անուշ բույրը մեր կյանքերի մեջ ու միջոցով: Ամեն:

Պոգու պտուղը մեզ փոխում է, որպեսզի մենք մեր շուրջ եղողների կյանքի վրա մեր ազդեցությունը ունենանք:

Կարդա՛
Գաղ. 5.16-25

Ես ձեզ ընտրեցի, ու ձեզ դրեցի, որպեսզի դուք գնաք և պտուղ բերեք, ու ձեր պտուղը մնա: Յովհ. 15.16

Մաքրել

Երբ բացեցի սպասք լվանալու մեքենան, մտածեցի պատահած սխալի մասին: Փոխանակ տեսնելու մաքուր ամաններ՝ դուրս հանեցի ափսեներ ու գավաթներ՝ ծածկված կավիճի նման փոշիով: Զարմանքով մտածեցիր, որ մեր շրջանի ջրի մեջ գտնված նյութերն են պատճառը, և կամ մեքենան էր փչացել:

Աստծո մաքրությունը, ոչ այդ փչացած մեքենայի նման, լվանում է ու մաքրում մեզ ամեն տեսակ անմաքրությունից: Եզեկիելի գրքում տեսնում ենք, որ Աստված կանչում է Իր ժողովրդին, երբ մարգարեն տալիս է Աստծո սիրո ու ներումի պատգամը: Իսրայելի ժողովուրդը մեղք էր գործել՝ իր հավատարմությունն ուրիշ աստվածների ու ազգերի տալով: Տերը, սակայն, ողորմությունով պատրաստ էր նրանց ետ ընդունելու՝ խոստանալով մաքրել նրանց «բոլոր պղծություններից ու կոռուքներից» (36.25): Մինչ դնում է Իր Հոգին նրանց մեջ (Հմ. 27), նաև խոստանում է նրանց պտուղներով առատ հանդերի մեջ դնել, ուր սով չպիտի լինի (Հմ. 30):

Եզեկիելի օրերի նման այսօր Տերը մեզ ետ կընդունի, եթե խոտորենք ճանապարհից: Եթե մեր անձերը Իր կամքին ու ճանապարհներին հաճենք, Նա կբարեփոխի մեզ ու կմաքրի ամեն մեղքից: Իր Սուրբ Հոգու բնակությունով մեր մեջ Նա մեզ օգնում է Իրեն հետևելու օրեցօր:

Աղոթք - Տե՛ր, մաքրվելու ու ներվելու զգացումը հիանալի է: Շնորհակալ եմ, որ ինձ փոխում ես ու նոր մարդ ես դարձնում: Սովորեցրու ինձ ամեն օր Քեզ հանձնվել, որպեսզի աճեմ ավելի ու ավելի ու նմանվեմ Զիսուսին: Ամեն:

**Կարդա՛ր
Եզեկիել 36.24-32**

Ձեզ վրա սուրբ ջուր եմ ցանելու, և դուք մաքրվելու եք: Եզ. 36.25

Տերը մեզ մաքուր է դարձնում:

Աստծո լուսափայլ գեղեցկությունը

Լորդ Հաուել կղզին ճերմակ ավազով ու բյուրեղ ջրով փոքր դրախտավայր է Ավստրալիայի արևելյան ծովեզրի վրա: Երբ այցելեցի մի քանի տարի առաջ, հիացա նրա գեղեցկությամբ: Այնտեղ կարելի է լողալ կրիաների ու տեսակավոր բազմագույն ձկների հետ: Ծովալճի մեջ կարելի է հիացումով դիտել բուստերը ու սքանչանալ: Այս գեղեցկությամբ զմայլված՝ չկարողացա չպաշտել մեր Աստծուն:

Պողոս առաքյալը տալիս է պատճառը այս ճշմարտության, որ ստեղծագործությունը իր լավագույն ձևով ցույց է տալիս Աստծո բնույթը (Հռոմ. 1.20): Լորդ Հաուել կղզու Աստծո այս սքանչելիքները ինձ տվեցին հպանցիկ ակնարկ Իր գործության ու գեղեցկության մասին: Երբ եզեկիեկ մարգարեն հանդիպեց Աստծուն, նրան ցույց տրվեց լուսափայլ մեկը՝ նստած կապույտ գահի վրա, շրջապատված փառավոր գույներով (Եզ. 1.25-28): Հովհաննես առաքյալը նման բան տեսավ: Աստված փայլում էր հասալիս ու սարդիոն արժեքավոր քարերի նման՝ շրջապատված զմրուխտի նման ծիածանով (Հայտ. 4.2-3): Երբ Աստված Ինքն իրեն ցույց է տալիս, Նա ոչ թե միայն բարի ու հզոր է երևում, այլ նաև գեղեցիկ: Ստեղծագործությունը հայտնում է այս գեղեցկությունը, ինչպես արվեստի մի գործ ցուցնում է արվեստագետին: Շատ անգամ բնությունը պաշտվում է Աստծո փոխարեն (Հռոմ. 1.25): Ի՛նչ ցավալի երևույթ: Փոխանակ այդպես լինելու՝ թող երկրի բյուրեղ ջրերը ու սքանչելի արարածները ցույց տան մեզ Նրան, որ նրանց ետևում է ու ավելի գորեղ ու գեղեցիկ է, քան որևէ բան այս աշխարհի վրա:

**Կարդա՛ր
Յո՛ւմ. 1.18-25**

Իր աներևույթ բնությունը, իր մշտնջենական գորությունը ու աստվածությունը տեսնվում են ստեղծվածների միջոցով: Յո՛ւմ. 1.20

Աղոթք - Ո՛վ իմ անձս, օրհնիր Տիրոջը: Ո՛վ Տեր, իմ Աստված, դու չափազանց մեծ ես, փառավորություն ու վայելչություն հագած: (Սաղմ. 103.1)

Ստեղծագործության գեղեցկությունը ցուցանում է Արարչի գեղեցկությունը:

Աստված նոր բան է անում

Խմբի առաջնորդը հարցրեց. «Աստված նոր բան անո՞ւմ է իբրև կյանքում»: Ընկերս՝ Մինդին, որ խնդիրներ ուներ, պատասխանեց ու ասաց, թե համբերության կարիք ուներ՝ տարիքն առած ծնողների, ամուսնու հիվանդության ու երեխաների ու թոռների համար, որոնք դեռ չէին որոշել Տիրոջը հետևել: Ապա նա արեց մեր մտածելակերպին հակառակ մատնանշում. «Հավատում եմ, թե նոր բանը, որ Աստված է անում, ընդլայնում է իմ հնարավորությունները և ավելացնում սիրելու առիթները»:

Այս մատնանշումը պատշաճ է Թեսաղոնիկում եղող նոր հավատացյալների համար Պողոս առաքյալի մատուցած աղոթքին. «Տերը ձեզ աճեցնի ու ավելացնի սիրով իրար և բոլորի հանդեպ» (Ա Թես. 3.12): Պողոսը քաջալերում է նրանց, որ շարունակեն իրենց հավատքի մեջ հաստատ մնալ (Ա Թես. 3.7-8): Ու նա աղոթում է, որ Տերը ավելացնի նրանց սերը բոլորի հանդեպ:

Դժվարությունների ժամանակ հաճախ ենք գանգատվում ու հարցնում. «Ինչո՞ւ»: Կամ զարմանում ենք՝ ասելով. «Ինչո՞ւ ես»: Դա կարող է առիթ լինել, որ Տիրոջը խնդրենք, որ իր սերն ավելացնի մեր սրտերում և օգնի, որ օգտագործենք ուրիշներին սիրելու մեզ տրված հնարավորությունները:

Աղոթք - Տե՛ր, ունեն իմ մտահոգությունները: Փոխիր մտածելակերպս ու բաց աչքերս՝ ուրիշներին սիրելու: Ամեն:

Կարդա՛ր Ա Թես. 3.6-13

Իսկ Տերը ձեզ աճեցնի ու ավելացնի սիրով իրար և բոլորի հանդեպ, ինչպես որ մենք էլ ձեր հանդեպ:
Ա Թես. 3.12

Մեր հարցերը կարող են լցնել մեր աղոթքները սիրով ու կարեկցության հոգով:

Միայնակ մի՛ վազիր

Ամուսնուս՝ Ձեքի վազքի առաջին մրցումն էր: Երբ նա հասավ 25-րդ մղոնին և ուներ միայն մեկ մղոն վազելու, հոգնած զգաց: Զուր խմելու համար օգնության կայանում սպասելուց հետո հոգնած ու ուժասպառ նստեց խոտին: Մի քիչ ժամանակ անցավ. չկարողացավ դարձյալ ոտքի ելնել և որոշեց հրաժարվել: Կենտուկիից միջին տարիքի երկու անծանոթ ուսուցիչներ իրեն մոտեցան ու հարցրեցին, թե ուզում է արդյոք վազել: Հանկարծ նա իր ուժը վերագտավ, նրանք իրեն ընկերացան, ու կարողացավ մրցումը ավարտին հասցնել:

Այս երկու ուսուցիչները, որոնք քաջալերեցին Ձեքին, ինձ հիշեցրին Ահարոնին եւ Ուրին՝ երկու բարեկամներին, որոնք օգնեցին Խորայելի առաջնորդ Մովսեսին, երբ ժողովուրդը հարձակման էր ենթարկվել թշնամու կողմից (Ել. 17.8-

13): Պատերազմի ժամանակ նրանք հաղթում էին մարտում, երբ Մովսեսը կարողանում էր իր գավազանը վեր պահել (Հմ. 11): Ուստի Ահարոնն եւ Ուրը Մովսեսի աջ ու ձախ կողմերը կանգնեցին ու նրա ձեռքերը վեր պահեցին մինչև մայրամուտ (Հմ. 12):

Աստծուն հետևելը միայնակ ջանք չէ: Նա մեզ չստեղծեց կյանքի մրցումը միայնակ հաղթահարելու: Ընկերակցողները կարող են օգնել մեզ հարատևելու դժվար պարագաներում, երբ անում ենք այն, ինչի համար Աստված հրավիրել է մեզ անելու:

Ո՛րև կարող եմ քաջալերել այսօր, որ կարողանա հարատևել դժվարություն մեջ:

Աղոթք - Ո՛վ Աստված, շնորհակալ եմ հարաբերությունների համար, որոնք կը քաջալերում են ինձ շարունակել Քեզ հետևել: Օգնիր ինձ, որ ես էլ գորության աղբյուր լինեմ ուրիշների համար: Ամեն:

Կարդա՛ Ելք 17. 8-13

Ուստի մենք էլ, որ մեզ շրջապատած վկաների այսքան բազմություն ունենք... և համբերությամբ վազենք մեր առաջ դրած ասպարեզի ընթացքը: Եբր. 12.1

Բարեկամները մեզ օգնում են Աստծուն հետևելու մեջ հարատևելու համար:

Անարժեք փառաբանություն

Ես օգտագործում եմ գրելու տաղանդս Աստծուն ծառայելու ու Նրան փառավորելու համար: Ու հիմա շատ ավելի առողջապահական խնդիրների պատճառով, որոնք սահմանափակում են շարժվելու կարողությունս: Ուստի, երբ մի բարեկամ ասաց, որ արժեք էի տեսնում գրածներինս մեջ, վհատվեցի ու սկսեցի կասկածել Աստծու գործին իմ արած փոքր մասնակցություն համար: Աղոթքով, Իր Սուրբ Խոսքի ընթերցումով և ամուսնուս, ընտանիքիս ու բարեկամներիս քաջալերանքով Տերը հաստատեց, թե միայն Իր, ոչ ուրիշների կարծիքը, կարող է հաստատել մեր շարժառիթներն ու արժեքները մեր ընծայաբերումը Իրեն: Խնդրեցի Աստծուց, որ շարունակում է օգնել ինձ, զարգացնել իմ կարողությունները ու առիթներ շնորհել Իր ինձ տված միջոցները բաժանելու:

Հիսուսը հակադրեց մեր տալու արժեքների չափանիշները (Մարկ. 12.41-44): Մինչ հարուստները տաճարի գանձանակի մեջ շատ բան էին դրում, աղքատ մի այրի երկու լուսնա գցեց (Հմ. 42): Տերը հայտարարեց նրա տված նվերը ամենից թանկը (Հմ. 43), հակառակ այն բանի, որ նրա նվերը անբաղդատելի էր ուրիշների շատ տվածի հետ (Հմ. 44): Հակառակ այն իրողություն, որ այրու պատմությունը կենտրոնանում է նյութական ընծայաբերումի վրա, ամեն հանձնումի արարք կարող է լինել փառաբանության և սիրո հնազանդության արտահայտություն: Երբ Աստծուն ներկայացնում ենք մեր ժամանակի, կարողություն կամ գանձերի լավագույնը սիրով մղված սրտերով, մենք արժանավոր պաշտամունք ենք բարձրացնում:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ բնավ մեզ ուրիշների հետ չես համեմատում, երբ մեր լավագույն ընծան ենք բերում Քեզ, որ Դու ես մեզ տվել: Ամեն:

Չոհաբերական ընծայաբերումը, մղված Աստծո հանդեպ մեր ունեցած սիրուց, միշտ էլ պիտի լինի պաշտամունքի արժեքավոր արտահայտություն:

Կարդա՛ր
Մարկոս 12.38-44

...սա իր չքավորությունից զցեց այն ամենը, ինչ ուներ, իր կյանքի ամբողջ ապրուստը: Մարկ. 12. 44

Չորության մեջ մնալ

«**Օձ պիտի տեսնե՞նք**», - Հարցրեց Ալենը՝ մեր շրջանում ապրող մի պատանի, երբ սկսեցինք թափառել մեր տան մոտ գտնվող գետի եզերքը: Որոշ ժամանակ անց կինս՝ Քերին, հանկած մի քայլ ետ գնաց՝ փախուստ տալու համար ճամփին գտնվող ոլորված թունավոր օձից: Սպասեցինք մինչև օձը հեռացավ: Մի պահ կանգնեցինք ու Աստծուն փառք տվեցինք, որ բան չպատահեց: Հավատում եմ, որ Ալենի հարցով Աստված մեզ պատրաստել էր այդ պահի համար, ու մեր աղոթքը մաս էր իր նախախնամական հոգածություն:

Այդ օրվա մեր ունեցած փորձառությունը ինձ հիշեցրեց Դավթի խոսքերի կարևորությունը. «Փնտրեցէ՛ք Տիրոջն ու հզորացե՛ք, փնտրեցե՛ք նրա երեսը շարունակ» (Սաղմ. 104.4): Այս խոսքերը մաս են կազմում այն Սաղմոսի, որ տոնում է Ուխտի Տապանակի վերադարձը Երուսաղեմ: Սա հիշեցնում է Աստծո հավատարմությունը իր ժողովրդի հանդեպ՝ պատմության մեջ նրանց պայքարների ժամանակ՝ հիշեցնելով նրանց, որ միշտ իրեն պաշտեն ու ներբողեն (Հմ. 35):

Ի՞նչ է նշանակում «Աստծո երեսը փնտրել»: Նշանակում է մեր սրտերը իրեն դարձնել նույնիսկ ամենից դժվար պահերին: Երբեմն մեր աղոթքները պատասխան են գտնում մեր ցանկացածից տարբեր կերպ, սակայն Աստված հավատարիմ է, ինչ էլ որ պատահի: Մեր Հովիվ Աստվածը մեր ուղին պիտի առաջնորդի ու մեզ պիտի պահի իր շնորհի, զորություն ու սիրո մեջ: Հետևաբար, հայտարարենք մեր՝ իրենից կախյալ լինելը:

Աղոթք - Քեզ կարոտ եմ, Տե՛ր, ամեն ժամ: Օրհնիր ինձ, ո՛վ Փրկիչ իմ, Քեզ եմ գալիս: Ռոպեր Լուրի

Աղոթքը շնորհում է քայլելու զորությունը ու ոչ թե նվաղելու: Օսվալդ Չամբերս

Կարդա՛ր Ա Մնաց.
16. 11-18, 28-36

Մշտապես աղոթեցե՛ք ու գոհունակությամբ արթուն կացե՛ք նրա մեջ:
Կող. 4.2

Մի կտոր դրախտ

Ղասարանի պատուհանից դուրս նայելով՝ լսում եմ թռչունների գեղգեղանքը, տեսնում եմ ու լսում մեղմ փչող հովը, հարևանի նորամշակ դաշտի մեջ թափած գունավոր տերևները, ինչպես նաև պայծառ կապույտ երկնքի մեծ ու սպիտակ ամպերը:

Վայելում եմ մի կտոր դրախտ՝ բացառությամբ անընդհատ երթևեկող մեքենաների աղմուկի և ունեցած մեջքի փոքր ցավի: Գործածում եմ դրախտ բառը թեթևորեն, որովհետև մի ժամանակ մեր երկիրը ամբողջությամբ բարի էր, և ոչ հիմա: Երբ մարդը մեղք գործեց, Եդեմի պարտեզից դուրս դրվեց, ու երկիրը անիծվեց (տես. Ծննդ. 3): Այդ ժամանակից երկիրը ու նրա մեջ գոյություն ունեցող ամեն բան դատապարտված են քայքայում: Տառապանքը, ցավը, նեղությունը, հիվանդությունն ու մահը արդյունքն են մարդկության մեղքի մեջ անկումի (Հռոմ. 8.18-23):

Ու տակավին Աստված բոլոր բաները նոր է անում: Մի օր Իր բնակությունը Իր ժողովրդի հետ պիտի լինի նորոգված ու բարեզարգված ստեղծագործության մեջ - «նոր երկիրք ու նոր երկիր» - ուր «այլևս մահ չի լինի, ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ այլևս չի լինի, որովհետև առաջիններն անցան» (Հայտ. 21.1-4): Մինչև այդ օրը մենք կարող ենք վայելել պայծառ ժայթքող ու երբեմն էլ լայնածավալ սքանչելի գեղեցկությունը, որ ունենք մեր շուրջ՝ այս աշխարհի մեջ, որը միայն փոքր նախահամն է նոր լինելիք «երկնքի» կամ «դրախտի»:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ մեղքով ու քայքայունով տգեղ թվացող այս աշխարհի մեջ դեռ թույլ ես տալիս, որ գեղեցկության նշույլներ տեսնենք: Ամեն:

**Կարդա՛ր
Յայտն. 21. 1-5**

Եվ գահի վրա նստողն ասաց. «Ահա ամեն բան նոր եմ անում: Յայտն. 21.5

Աստված ամեն բան նոր է դարձնում:

Աստծուն տուր

Երբ պատանի լինելով դիմագրավում էի դժվարին մարտահրավերներ, մայրս ինձ սովորեցրեց արժեքը թղթի ու գրիչի. ամբողջական պատկեր ունենալու համար՝ անհրաժեշտ է թղթին հանձնել բոլոր տվյալները: Օրինակ, երբ վստահ էի ի՛նչ դասեր առնել կամ ի՛նչ գործ անել, կամ ինչպե՛ս դիմագրավել չափահասությունս անխուսափելի և վախազդու ճշմարտությունները, սովորեցի նայել երևույթներին ու սովորել հնարավոր գործընթացները ու հավանական արդյունքները գրելու առավելությունը: Սիրտս թղթի վրա դատարկելուց հետո ես կարող էի մի պահ ետ կանգնել հարցից ու դիտել այն ավելի առարկայականորեն: Պարզապես իմ տպավորությունները թղթի վրա արձանագրելը ինձ տվեց ավելի թարմ հեռանկար. մեր սրտերը Աստծո առջև աղոթքով բացելը օգնում է մեզ ունենալ իր հեռանկարը ու հիշեցնել մեզ իր ունեցած զորությունը: Եզեկիա թագավորը ճիշտ դա արեց, երբ ստացավ սրտաբեկ մի նամակ չարաշուք ոտխից: Ասորեստանցիները սպառնացին քանդել Երուսաղեմը, ինչպես արել էին շատ ուրիշ քաղաքների ու ազգերի հետ: Եզեկիան նամակը բացեց Տիրոջ առջև աղոթքով ու խնդրեց Նրանից ազատել ժողովրդին, որպեսզի աշխարհն իմանա, որ «միայն ինքն է Աստված» (Դ Թագ. 19.19): Երբ մենք դիմագրավում ենք հանգամանքների, որոնք տալիս են նեղություն, վախ կամ զգացում, թե դրա միջից անցնելու համար անհրաժեշտ է ունենալ մեր ունեցածից շատ ավելին, Եզեկիայի օրինակին հետևենք ու Տիրոջ մոտ գնանք: Նրա նման մենք էլ կարող ենք մեր հարցերը Աստծուն տանել ու Նրան վստահել՝ մեր քայլերը առաջնորդելու ու մեր սրտերը խաղաղեցնելու ու հանդարտեցնելու համար:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ Դու ես աղբյուրը իմ իմաստության ու զորության: Քեզ եմ ապավինում ու վստահում, որ առաջնորդես ինձ դժվար հանգամանքների մեջ: Ամեն:

Աստված մեր մեծագույն օգնությունն է տազնապի ժամանակ:

Կարդա՛ր
Դ Թագ. 19. 9-19

Եզեկիան... գնաց Տիրոջ տուն և դրանք բաց վիճակում ցույց տվեց :
Դ Թագ. 19.14

Ողբի ծառայություն

2002-ին քրոջս՝ Մարթայի ու իր ամուսնու՝ Ջիմի՝ ավտովթարից մահանալուց հետո մի բարեկամ ինձ հրավիրեց մեր եկեղեցին՝ մասնակցելու «Ցավի ժամանակ աճուճ» խորագրով սեմինարի: Ակամա համաձայնեցի զնալ առաջին հանդիպմանը, բայց նպատակ չունեի շարունակել: Սակայն զարմացա, երբ տեսա մի խումբ մարդկանց, որոնք իրենց ունեցած կորստի ցավի մեջ խնդրում էին Աստու եւ ուրիշների օգնությունը: Այս իրականությունը ստիպեց ինձ նորից ու նորից շարունակել հաճախել, ու մեր ցավերը կիսելու այս ճանապարհով աշխատեցի ընդունել իրողությունը և ունենալ ներքին խաղաղություն:

**Կարդա՛ր
Գործք Առ. 7.54 - 8.2**

Աստվածավախ մարդիկ Ստեփանոսին թաղեցին ու նրա վրա մեծ սուգ արեցին: Գործք 8.2

Սիրելիի կամ բարեկամի հանկարծակի կորստի նման, Ստեփանոսի՝ Հիսուսի զորեղ վկայի մահը ցնցեց ու ցավ պատճառեց եկեղեցու անդամներին (Գործք Առ. 7.57-60): Այս հալածանքին որպես պատասխան՝ «Աստվածավախ մարդիկ Ստեփանոսին թաղեցին ու նրա վրա մեծ սուգ արեցին» (հմ. 8.2): Հավատքի այս մարդիկ երկու բան արեցին. որպես կորստի հետևանք՝ թաղեցին Ստեփանոսին, հետո սգացին նրա մահը՝ կիսելով իրենց վիշտը: Որպես Տեր Հիսուսի հետևորդներ՝ մենք մեր ունեցած կորստի համար միայնակ չպիտի սգանք: Անկեղծությամբ ու սիրով կարող ենք մոտենալ ուրիշներին, որոնք ցավի մեջ են, ու խոնարհաբար կարող ենք ընդունել մեր կողքին եղողների կարեկցությունը: Մինչ սգում ենք միասին, կարող ենք աճել հասկացողության ու խաղաղության մեջ, որ մերն են մեր ցավերը լավ գիտեցող Հիսուս Քրիստոսով:

Աղոթք - Երկնքում եղող Հայր, օգնիր մեզ, որ «ողբացողների հետ ողբանք» ու աճենք Քո բուժող սիրով: Ամեն:

Ուրիշների հետ ողբալու ծառայությունը օգնում է մեր սրտերի բուժմանը:

Նեղություններից ազատագրվել

Վերջերս ձեռքս վերցրի քուլեջի օրերից մնացած թերթերս: Չկարողանալով դիմանալ՝ ժամանակ տրամադրեցի կարդալու դրանք: Կարդալով գրածներս՝ նկատեցի, որ այլևս նույն կերպ չեմ մտածում իմ անձի մասին: Հավատքիս մասին ունեցած կասկածներս ու միայնությունս պայքարներս ահավոր էին եղել այդ օրերին: Հիմա ետ նայելով հստակ տեսնում եմ, թե ինչպես է Աստված ինձ կրել ու առաջնորդել ավելի լավ տեղեր: Նաև տեսնելով, թե ինչպես է Աստված հեզաբար ինձ դրանց միջից անցկացրել, եզրակացրի, որ ինչ որ այսօր ճշող է թվում, մի օր մաս պիտի կազմի Նրա բուժիչ սիրո մեծ պատմությունը:

**Կարդա՛ր
Սաղմոս 29.1-12**

Երեկոյան լացը կդադարի, իսկ առավոտյան ուրախություն կը լինի: Սաղմ. 29.5

Սաղմոս 30-ը տոնակատարության Սաղմոս է, որ նույնպես հիացմունքով և ուրախությամբ է ետ նայում Աստծո վերանորոգող զորությունը. հիվանդությունից՝ բժշկության, մահվան սոսկումից՝ կյանքի, Աստծո դատապարտությունից՝ Նրա հաճությունը վայելելու, լացից՝ ցնծության (Հմ. 2-3, 11):

Այս Սաղմոսը Դավթի գրած փառաբանության ու ցավով լեցուն ողբի սաղմոսներից է: Դավթի վերանորոգման ու վերականգնումի զգացումը այնքան սքանչելի էր, որ կարողացավ գրել. «Իրիկունը լաց կա, բայց առավոտյան՝ ցնծություն» (Հմ. 5): Հակառակ իր ունեցած ցավերին՝ Դավթին ավելի մեծ բան տեսավ՝ Աստծո բժշկարար հզոր ձեռքը:

Եթե դու ցավի մեջ ես այսօր ու քաջալերանքի կարիք ունես, հիշիր անցյալիդ այն պահերը, երբ Աստված կրել ու առաջնորդել է քեզ դեպի բժշկության վայր: Աղոթիր վստահության համար, որ Նա նորից նույնը անի:

Աղոթք - Տեր, երբ մեր պայքարները մեր կարողությունից վեր լինեն, օգնիր մեզ հանգիստ ու զորություն գտնել: Ամեն:

Աստված սիրով է գործում վերանորոգման և ուրախության համար՝ մեր կյանքի կակիծների մեջ:

Աստծուն տեսնել

Հոգևոր հովիվ ու հեղինակ էրվին Լուցերը պատմում է պատմություն հեռուստատեսային ծրագրի հյուրընկալող Արթ Լինքլեթերի ու փոքրիկ տղայի մասին, որ նկարում էր Աստծուն: Զվարթորեն Լինքլեթերն ասում է. «Ձեռ կարող նկարել Աստծո պատկերը, որովհետև ոչ մեկը չգիտի Աստծո պատկերը»:

«Նրանք պիտի իմանան, երբ նկարը ավարտեմ»,- ասում է փոքրիկը: Մենք շատ հաճախ ենք հարց տալիս. «Ինչի՞ է նման Աստված: Աստված բարի է՞: Աստված ազնի՞վ է: Մտահո՞գ է մեզ համար»: Այս հարցերի պարզ պատասխանը Հիսուսն է տվել Փիլիպպոսին. «Տե՛ր, ցո՛ւյց տուր մեզ Հորը»: Ու Հիսուսը պատասխանում է. «Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, և ինձ չճանաչեցի՞ր, Փիլիպպո՛ս: Ինձ տեսնողը Հորը տեսավ» (Հովհ. 14.8-9):

Եթե երբևէ ցանկանաս Աստծուն տեսնել, նայիր Հիսուսին: Պողոսն ասաց. «Նա (Որդին) աներևույթ Աստծո պատկերն է» (Կող. 1.15): Կարգա չորս Ավետարանները՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննոս: Մտածիր Հիսուսի ասածների մասին: Նկարիր քո մտքում Աստծո պատկերը՝ կարգացածիդ համաձայն: Շատ ավելին պիտի իմանաս, երբ կարդալն ավարտես:

Մի բարեկամ մի օր ինձ ասաց, որ միակ Աստվածը, որին կարող է հավատալ, Նա է, որին տեսել է Հիսուսի մեջ: Եթե մոտիկից դիտես, կարծում եմ, որ համաձայն պիտի լինես: Երբ կարդում ես Նրա մասին, սիրտդ պիտի խայտա: Գուցե չգիտես, սակայն Հիսուսն է Աստվածը, որին դու փնտրում ես կյանքիդ մեջ:

Աղոթք - Տե՛ր, մենք տրամադրված ենք տեսնելու քեզ իբրև մի բան, որ չես: Օգնիր մեզ Քեզ ավելի հստակ տեսնելու Աստվածաշնչի էջերում: Օգնիր, որ Քո Որդուն ցուլացնենք մեր կյանքի մեջ: Ամեն:

Որքան ավելի հստակ տեսնենք Աստծուն, այդքան ավելի հստակ կտեսնենք մենք մեզ: Էրվին Լուցեր

Կարդա՛ր
Յովհ. 14.1-12

Փիլիպպոսը նրան ասաց. «Տե՛ր, ցո՛ւյց տուր մեզ Հորը, և բավական է մեզ»: Յովհ. 14.8

Նամակներ գրել

Հայրս ու իր քույրերը շարունակում են իրենց հաղորդակցութիւնը իրար նամակներ գրելով: Ամեն շաբաթ նրանք անձնական նամակներ են գրում կանոնավոր կերպով՝ իրենց նամակատարին մտահոգելու աստիճան, երբ չի ունենում հանձնելի նամակ: Նրանց նամակները լի են կյանքի նյութերով՝ ներառելով բարեկամների ու ընտանիքի մեջ պատահած ամենօրյա դեպքերը:

Սիրում եմ հետևել իմ ընտանիքի այս կանանց շաբաթական վարժությանը: Սա կօգնի ինձ ավելի գնահատել Պողոս Առաքյալի խոսքը, թե նրանք, ովքեր հետևում են Տեր Հիսուսին, «Քրիստոսի թուղթն» են, «ոչ թե թանաքով, այլ կենդանի Աստծո Հոգով» (Բ Կորնթ. 3.3): Որպես պատասխան սուտ վարդապետների, որոնք ուզում էին

դեռ գնահատել իր պատգամը (տե՛ս՝ Բ Կորնթ. 11), Պողոսին քաջալերել է Կորնթոսի մեջ եղող եկեղեցուն հետևելու ճշմարիտ ու ապրող Աստված, ինչպես որ Նա էր նախապես սովորեցրել: Այս անելով նա ներկայացնում է հավատացյալներին Քրիստոսի նամակը, իրենց բարեփոխված կյանքով, ավելի գորեղ վկայութիւնն Հոգու, որ գործում է Պողոսի առաքելության միջոցով, քան որևէ գրված նամակ:

Ի՞նչ հիանալի է, որ Աստծո Հոգին մեր մեջ շնորհի ու փրկության պատմութիւնն է գրում: Ինչպես որ գրված խոսքերը կարող են իմաստալից լինել, մեր կյանքերն էլ լավագույն վկաներն են Ավետարանի ճշմարտության, որովհետև նրանք խոսում են սիրո, ծառայության, կեցվածքի և ուրախության մասին: Մեր խոսքերի, գործերի, երախտագիտության և սիրո համաձայն՝ Տերը տարածում է Իր կյանքն ու սերը: Ի՞նչ հստակ պատգամ կարող ես ուղարկել այսօր:

Աղոթք - Տեր Աստված, գրի իմ կյանքի պատմութիւնը, որպեսզի կարողանամ ցոլացնել Քո սերը ու բարութիւնը նրանց, որոնց հանդիպում եմ այսօր: Ամեն:

Կարդա՛ր Բ Կորնթ. 3.1-6

Մեր թուղթը դուք եք՝ մեր սրտում գրված և բոլոր մարդկանց կողմից իմացված ու կարդացված: Բ Կորնթ. 3.2

Մենք Քրիստոսի նամակն ենք:

Նա, որ հասկանում է

Ձոն Բաբելը Թեքսասի ոստիկանությունից և հրշեջների բաժանմունքի հոգևոր տեսուչն է: Իր քսաներկու շաբաթվա արձակուրդի ընթացքում նա հաճախեց ոստիկանական ակադեմիա՝ մարզվելու, որպեսզի ավելի լավ հասկանա, թե ոստիկանները ինչ դժվարությունների են դիմազրավում: Մարզվող ոստիկանների հետ ժամանակ անցկացնելով ու սովորելով մասնագիտության դժվար մարտահրավերները՝ Բաբելը ունեցավ նոր ըմբռնում խոնարհության և կյանքի մասին: Նա հույս ունի, որ ապագայում պիտի կարողանա ավելի ազդու խորհրդատու լինել այն ոստիկանների համար, ովքեր տաժանքի, կորստի և զգացական ճնշումների են ենթարկվում:

Կարդա՛
Յովհ. 1. 1-18

Եվ Բանը մարմին եղավ ու մեր մեջ բնակվեց:

Յովհ. 1. 14

Գիտենք, որ Աստված հասկանում է մեր դիմազրաված վիճակները, որովհետև Նա է մեզ ստեղծել ու տեսնում է ամեն բան, որ կատարվում է մեզ հետ: Նաև գիտենք, որ Նա հասկանում է, քանի որ Ինքն էլ է աշխարհ եկել և որպես մարդ արարած ունեցել կյանքի փորձառությունը: Նա «մարմին եղավ ու մեր մեջ բնակվեց» Հիսուս Քրիստոսի անձի միջոցով (Յովհ. 1.14): Հիսուսի երկրային կյանքը պարունակում էր զանազան դժվարություններ: Նա զգաց արևի կիզիչ տաքությունը, անոթի ստամոքսի ցավը ու անտուն լինելու անորոշ վիճակը: Զգացական դաշտում նա տոկաց անհամաձայնության բոլոր պրկումների դիմաց, մատնվեց սրտաճմրտմի և շարունակական բռնության սպառնալիքին: Հիսուսը սքանչելի խորհրդականն է, որ համբերությամբ լսում է մեր մտահոգությունները հոգատար հոգով (Ես. 9.6): Նա միակն է, որ կարող է ասել. «Ես նրանց միջով եմ անցել ու հասկանում եմ»:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ իմ մասին հոգում ես Թո անձը խոնարհեցնելով ու աշխարհ գալով՝ որպես մարդ արարած: Գիտեմ, որ հասկանում ես ամեն բան կյանքիս մեջ: Իմ բոլոր մտահոգությունները քեզ եմ հանձնում: Ամեն:

Աստված հասկանում է բոլոր պայքարները, որոնց դիմազրավում ենք:

Առաջին քայլն անել

Թամ Դաշունն նկատեց, որ ինչ-որ բան էր պակաս իր կյանքում: Հետևաբար սկսեց եկեղեցի հաճախել, նույնը, ուր իր աղջիկն էր գնում: Սակայն նրանք երբեք միասին չգնացին: Նախապես Թամը վշտացել էր իր աղջկանից, որ պատճառ էր դարձել իրենց հարաբերությունների խզումի: Պաշտամունքից անմիջապես հետո Թամը թողնում էր ու գնում:

Եկեղեցու անդամները Ավետարանի պատմությունը բաժնեկցեցին իր հետ, բայց Թամը միշտ քաղաքավարությունամբ մերժեց ընդունել Հիսուսին: Սակայն շարունակեց եկեղեցի հաճախել:

Մի օր Թամը սաստիկ հիվանդացավ: Աղջիկը քաջություն ունեցավ նամակ գրելու նրան: Նա պատմեց, թե ինչպես էր Հիսուսը իր կյանքը փոխել, ու այժմ հոր հետ հաշտություն էր խնդրում: Այդ երեկո Թամը Հիսուսին մոտեցավ ու հաշտվեց: Մի քանի օր հետո Թամը մեռավ խաղաղություն ունենալով Աստծո ու իր սիրելիների հետ:

Պողոս առաքյալը գրեց, որ մենք պետք է «փորձենք համոզել մարդկանց» Աստծո սիրո ու ներումի ճշմարտության մասին (Բ Կորնթ. 5.11): Նա ասաց, որ «Քրիստոսի սերը մեզ ստիպում է» իր հաշտության գործը առաջ տանել (Հմ. 14):

Ներելու մեր կամեցողությունը կարող է օգնել ուրիշներին, որ տեսնեն, թե Աստված ցանկանում է մեզ իր հետ հաշտեցնել (Հմ. 9): Պատրաստ ես Աստծո գործությանը վստահել և ցույց տալ ուրիշներին Նրա սերը այսօր:

Աղոթք - Տե՛ր, խնդրում եմ օգնիր ինձ, որ տեսնեմ, թե կա՞ մեկը, ում հետ պիտի հաշտվեմ: Ցույց տուր ինձ, թե ինչպես կարող եմ առաջին քայլն անել: Ամեն:

Կարդա՛ր
Բ Կորնթ. 5. 11-21

Որովհետև Աստված էր Քրիստոսի մեջ, որ աշխարհն իր հետ հաշտեցրեց, և նրանց հանցանքներն իրենց ներքե և հաշտության խոսքը մեր մեջ դրեց:

Բ Կորնթ. 5.19

Մեր կամեցողությունը՝ հաշտություն փնտրելու ուրիշների հետ՝ Աստծո սիրտն է ցույց տալիս նրանց:

Մի քիչ սպասիր

«Մատանիների տիրակալը» եռամաս շարժապատկերի մասին եղած խոսակցությունը ժամանակ մի պատանի ասաց, որ ինքը նախընտրում է պատմությունը կարդալ գրքում, քան դիտել շարժապատկերը: Երբ հարցրին՝ ինչու, նա պատասխանեց. «Գիրք կարդալու ժամանակ կարող եմ կանգնել այնտեղ, ուր ուզում եմ»: Նույնը կարող եմք վերագրել Աստվածաշնչի ընթերցանությանը:

Եբրայեցիս 11-ը, որ հաճախ կոչվում է «հավատքի գլուխ», հիշում է 19 մարդկանց՝ իրենց անուններով: Նրանցից յուրաքանչյուրը դժվարություն ու կասկածի ճանապարհով քայլեց, սակայն ընտրեց Աստծուն հնազանդվելը: «Սրանք բոլորը հավատի մեջ մեռան, առանց խոստումներն ստանալու, այլ հեռվից տեսնում էին դրանք և ուրախանում և ողջունում էին ու դավանում, թե երկրում օտարներ և պանդուխտներ են» (Հմ. 13):

Որքա՛ն դյուրին է աճապարել Աստվածաշնչի ընթերցանության մեջ՝ առանց կանգ առնելու ու մտածելու այնտեղ նշված մարդկանց ու դեպքերի մասին: Մեր անձնապես պարտադրած ժամանակացույցը մեզ արգելում է ավելի խորանալու Աստծո ճշմարտության ու մեր կյանքերի իր ունեցած ծրագրի մեջ: Սակայն եթե մի քիչ ավելի սպասենք, մենք մեզ պիտի գտնենք կլանված կյանքի իրավիճակները ներկայացնող մեզ նման իսկական մարդկանց կյանքի դրամայով, մարդկանց, որոնք ընտրեցին իրենց կյանքերը վստահել Աստծո հավատարմությանը:

Աղոթք - Երկնքում եղող Աստված, շնորհակալ եմ քո գրի առնված խոսքի ու հավատքով ապրած մարդկանց օրինակի համար: Օգնիր մեզ, որ Քեզ հետևենք, ինչպես նրանք արեցին: Ամեն:

Հապաղի՛ր Աստծո խոսքի վրա ու այնտեղ պիտի գտնես հավատքի սքանչելի օրինակներ:

Կարդա՛ր Եբր. 11. 8-13

Սրանք բոլորը հավատի մեջ մեռան, առանց խոստումներն ստանալու, այլ հեռվից տեսնում էին դրանք և ուրախանում և ողջունում էին ու դավանում, թե երկրում օտարներ և պանդուխտներ են:
Եբր. 11.13

Թագավոր ունենք

Երբ մի հարցում ուզածս չեղավ, ամուսնուս վրա ցավեցնող խոսքերով հարձակվելուց հետո Սուրբ Հոգին հանդիմանեց ինձ՝ հիշեցնելով Սուրբ Գրային մի համար, որ հայտնեց իմ մեղավորութունը: Արդյոք արժե՞ր իմ համառ հպարտության մեջ մնալ՝ վնասելով ամուսնական կյանքս և անհնազանդ լինելով Աստծուն: Ո՛չ, բացարձակապես: Սակայն երբ ներում խնդրեցի Տիրոջից ու կողակցիցս, իմ ետևում թողել բազմաթիվ վերքեր՝ իբրև արդյունք մերժելով իմաստուն խորհուրդն ու ապրելով այնպես, կարծես որևէ մեկին պատասխանատու չէի՝ բացի իմ անձից:

Կար ժամանակ, երբ իսրայելցիները ապստամբ դիրք ունեին Աստծո հանդեպ: Մովսեսի մահից հետո Հեսուն առաջնորդեց իսրայելցիներին դեպի խոստացյալ երկիրը:

Նրա առաջնորդութամբ իսրայելցիները Տիրոջը ծառայեցին (Դատ. 2.7): Սակայն երբ Հեսուն ու իր ժամանակակից ժողովուրդը մահացան, իսրայելցիները մոռացան Աստծու ու Նրա արած բոլոր գործերը (Հմ. 10): Նրանք մերժեցին Աստվածային առաջնորդությունը և ողջագուրեցին մեղքը (Հմ. 11-15): Կացությունը մի քիչ բարելավվեց, երբ Աստված դատավորներ հանեց (Հմ. 16-18), որոնք ծառայեցին թագավորների նման: Սակայն ամեն անգամ, երբ դատավոր էր մահանում, իսրայելցիները մերժում էին Աստծուն ու ապրում այնպես, կարծես պարտական չէին որևէ մեկին՝ բացի իրենցից: Այդ պատճառով նրանք սոսկալի հետևանքներ կրեցին (Հմ. 19-22): Սակայն նույնը չի լինելու մեր իրականությունը: Մենք կարող ենք հանձնվել Հիսուսի հեղինակությունը, որովհետև Նա մեր կենդանի Դատավորն ու թագավորների թագավորն է:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, խնդրում եմք օգնիր մեզ, որ հիշենք, թե Դու ես կենդանի թագավորների թագավորը ու տերերի Տերը, հզոր ու արժանի մեր սիրո հնազանդության ու վստահության: Ամեն:

Կարդա՛ր
Դատ. 2. 11-23
Այն օրերին Իսրայելում թագավոր չկար, և ամեն մարդ անում էր այն ինչ հաճելի էր իրեն: Դատ. 21.24

Աստված մեզ տալիս է զորությունն ու առանձնաշնորհունը ցնծալու և ամեն բան իր ձևով անելու վարձատրությունը:

Ի՞նչ է հորդ անունը

Երբ Միջին Արևելքի մեջ ուզեցի բջջային հեռախոս գնել, ինձ սովորական հարցերը տվեցին՝ անուն, քաղաքացիութիւն, հասցե: Սակայն երբ վաճառատան օգնական երիտասարդը հարցաթերթիկը լրացնելիս հարցրեց՝ «Ի՞նչ է հորդ անունը», զարմացա ու մտածեցի, թե ինչու էր կարևոր հորս անունը: Դա իմ մշակույթում կարևոր չէ, սակայն անհրաժեշտ է ինքնությունս հաստատելու համար: Մի շարք մշակույթների մեջ նախնիները կարևոր են:

Իսրայելցիներն էլ հավատացին նախնիների կարևորությանը: Նրանք հպարտ էին իրենց Աբրահամ նախահորով ու մտածեցին, որ Աբրահամի սերնդին պատկանելը իրենց Աստծո որդիներ է դարձնում: Նրանց կարծիքով իրենց մարդկային նախնիներով կապված էին իրենց հոգևոր ընտանիքին:

Հարյուրավոր տարիներ հետո, երբ Հիսուսը խոսում էր հրեաների հետ, Նա մատնանշեց, որ սա այսպես չէ: Նրանք կարող էին ասել, թե Աբրահամը իրենց երկրային նախնին է, սակայն եթե Նրան չսիրեին, Նա, որին Հայրն էր ուղարկել, Աստծո ընտանիքին մաս չեն կազմի:

Նույնն է պարագան այսօր: Մենք չենք ընտրում մեր մարդկային ընտանիքը, սակայն մենք կարող ենք որոշել մեր պատկանած հոգևոր ընտանիքը: Եթե հավատանք Հիսուսի անվանը, Աստված մեզ կտա իրավունքը՝ լինելու Իր զավակները (Հովհ. 1.12):

Ո՞վ է քո հոգևոր հայրը: Որոշե՞լ ես հետևել Հիսուսին: Թող այսօր լինի Հիսուսին վստահելու օրը՝ քո մեղքերից ներվելու ու Աստծո ընտանիքին մաս կազմելու:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, Դու ես իմ երկնավոր ու հավիտենական Հայրը: Շնորհակալ եմ Հիսուսի՝ իմ Փրկչի համար: Ամեն:

Աստված մեր հավիտենական Աստվածն է:

Կարդա՛ր Յովհաննես 8.39-47

Բայց ովքեր նրան ընդունեցին, նրանց, որ հավատում են նրա անվանը, իշխանութիւն տվեց նրանց Աստծու զավակներ լինելու: Յովհ. 1.12

Բարկության կառավարում

Երբ ընթրում էի ընկերուհուս հետ, նա ասաց, թե ինչքան է զգզված է իր ընտանիքի անդամներից մեկից: Սակայն նա դժվարանում է նրան մի բան ասել նրա նեղացնող՝ արհամարհական ու ծաղրական վարվելակերպի համար: Երբ նա փորձել էր հարցի մասին խոսել, պատասխանը հեզնական մի ակնարկ էր եղել: Նա բարկությամբ պոռթկացել էր, ու երկուսն էլ սկսել էին իրար նախատել, ու ընտանիքում բացված ճեղքը ավելի էր լայնացել:

Ես հասկանում եմ, որովհետև նույն բարկությունն եմ ապրում: Ինձ համար էլ դժվար է մարդկանց դիմազրավել: Եթե մի բարեկամ կամ ընտանիքի անդամ նեղացնող բան է ասում, ընդհանրապես ընկճվում եմ, իսկ այդ անձը կամ մեկ ուրիշը նման գծուծ քայլ է անում: Որոշ ժամանակ անց պոռթկում եմ:

Կարող է այնպես լինել, որ Պողոս առաքյալը դրա համար է եփեսացիս 4.26-ում ասում. «Թող արեգակը ձեր բարկության վրա մայր չմտնի»: Ժամանակ սահմանելը չլուծված հարցերի համար բարկությունը հսկողության տակ է դնում: Փոխանակ բորբոքվելու սխալի համար, որ նյարդային վիճակը բարդացնելու բարեբեր հող է, մենք կարող ենք Աստծուց օգնություն խնդրել՝ սիրով ճշմարտությունը «խոսելու» (Եբ. 4.15):

Որևէ մեկի հետ խնդրի՞ր ունես: Փոխանակ պահելու՝ նախ Աստծո առջև այն բարձրացրու: Նա կարող է բարկության կրակի հետ կռվել ներումի ու սիրո զորությամբ:

Աղոթք - Երկնավոր Հայր, խնդրում եմ պահիր մեզ բարկությունից: Թող որ մեր արտասանած խոսքերը Քեզ պատիվ բերեն: Ամեն:

Կարդա՛ր
Եփես. 4.15, 26-32

Բարկանաք՝ մի՛ մեղանչեք. թող արեգակը ձեր բարկության վրա մայր չմտնի: Եփ. 4.26

Բարկության կրակը մարիր, նախքան այն հսկողությունից դուրս կգա:

Արգելքները վերացնել

Մերիին հանդիպում էի ամեն երեքշաբթի, երբ այցելում էի այն «տուն»-ը, որ օգնում է նախկին բանտարկյալներին վերահաստատվել հասարակության մեջ: Իմ կյանքը իրենցից տարբեր էր թվում. բանտից նոր արձակում, մոլուխյան դեմ պայքար, որդուց բաժանում: Այլ խոսքով՝ հասարակության սահմանին ապրող մարդ:

Մերիի նման Ռնեսիմոսն էլ գիտեր, թե ինչ է նշանակում հասարակության սահմանի վրա ապրել: Որպես ստրուկ՝ պարզ էր, որ Ռնեսիմոսը սխալ էր արել իր Քրիստոնյա տիրոջ՝ Փիլիմոնի հանդեպ, ու բանտարկվել էր: Բանտում հանդիպել էր Պողոսին ու Քրիստոսին դարձել հավատքով (Հմ. 10): Հակառակ նրա փոխված լինելուն՝ դեռ ստրուկ էր: Պողոսը նրան ետ է ուղարկում Փիլիմոնի մոտ հանձնարարական մի նամակով խնդրելով նրան ընդունել «ո՛չ իբրև ծառա, այլ ծառայից բարձր, իբրև սիրելի եղբայր» (Փիլ. 1.16): Փիլիմոնը ընտրություն պիտի կատարեր. կարող էր Ռնեսիմոսի հետ վարվել իբրև ծառայի կամ ընդունել նրան եղբոր պես: Ես էլ ընտրություն ունեի. տեսնել Մերիին որպես նախկին բանտարկյալ ու մոլուխյունից դուրս եկող մեկը կամ կին, որի կյանքը փոխվել էր Քրիստոսի զորությունով: Մերին Քրիստոսով իմ քույրն է, ու մենք առանձնաշնորհումը ունեինք միասին քայլելու մեր հավատքի ճանապարհորդության մեջ: Դյուրին է մեզ բաժանող հասարակական-անտեսական վիճակների, դասակարգերի կամ մշակութային տարբերությունների պատեր բարձրացնել: Սակայն Ավետարանը վերացնում է այդ արգելքները՝ փոխելով մեր կյանքերը ու մեր հարաբերությունները հավիտյան:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմ, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանը կյանքեր ու հարաբերություններ է փոխում: Շնորհակալ եմ, որ մեր միջև եղած արգելքները վերացնում ես ու մեզ բոլորիս դարձնում Քո ընտանիքի անդամները: Ամեն:

Ավետարանը փոխում է մարդկանց ու հարաբերությունները:

Կարդա՛ Փիլիմոն 1. 8-16

Սիրելի եղբայր, մանավանդ ինձ, սակայն որքա՛ն առավել՝ քեզ համար, թե՛ մարմնի և թե՛ Տիրոջ կողմից: Փիլիմոն 1.16

Նայիր դեկավարին

Աշխարհահռչակ ջուժակահար Ջոշուա Բելը Սբ. Մարտին Կալեդոնիայի 44 հոգանոց կամերային նվագախումբը ղեկավարելու արտասովոր ձև ունի: Փոխանակ շարժելու գավազանը՝ ղեկավարում է իր Ստրադիվարիուսը մյուս ջուժակահարների հետ նվագելով: Բելը մի օր ասաց Կոլորադոյի հանրային ռադիոկայանից. «Նույնիսկ երբ նվագում եմ, կարող եմ նրանց տալ ամեն տեսակի ուղղություն և նշաններ, որ մտածում եմ, թե միայն նրանք կարող ենք հասկանալ: Նրանք գիտեն ջուժակի վեր ու վար ամեն շարժումը կամ հոնքերիս վեր բարձրանալը, կամ աղեղիս տարբեր շարժումները: Նրանք գիտեն այն ձայնը, որ ուզում եմ ամբողջ նվագախմբից»:

Ճիշտ այնպես, ինչպես նվագախմբի անդամներն են հետևում Ջոշուա Բելին, Աստվածաշունչը մեզ սովորեցնում է մեր աչքերը սևեռել մեր Տիրոջը՝ Հիսուսին: Եբրայեցիներ 11-ում հավատքի հերոսների անունները նշելուց հետո հեղինակն ասում է. «Ուստի մենք էլ, որ մեզ շրջապատած վկաների այսքան բազմություն ունենք, դեն գցենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը և համբերությամբ վազենք մեր առաջ դրած ասպարեզի ընթացքը, նայենք հավատի գորագլխին ու կատարողին՝ Հիսուսին...» (Եբ. 12.1-2):

Հիսուսը խոստացավ ասելով. «Եվ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը» (Մատթ. 28.20): Քանի որ Նա մեզ հետ է, ունենք հիանալի առանձնաշնորհում՝ մեր աչքերը իր վրա հառելու, երբ նա ղեկավարում է մեր կյանքերի երաժշտությունը:

Աղոթք - Տե՛ր, մեր աչքերը Քեզ են նայում այսօր, որպեսզի Քո տված ուղղությամբ հետևենք ու Քեզ հետ ներդաշնակ ապրենք: Ամեն:

Կարդա՛ Եբր. 12. 1-3

Համբերությամբ վազենք մեր առաջ դրած ասպարեզի ընթացքը, նայենք հավատի գորագլխին ու կատարողին՝ Հիսուսին: Եբր. 12.1-2

Մեր աչքերը մեր Փրկչին՝ Հիսուսին հառենք, երբ նա մեր կյանքերն է ուղղորդում:

Լավագույն մասը

Երբ փոքր տղա էի, եղբայրներս ու ես հաճախ էինք վիճում մորս պատրաստած համեղ կարկանդակի մեծ կտորին տիրանալու համար: Մի օր հայրս հոնքերը վեր բարձրացրած դիտում էր մեր միմոսությունը: Նա ժպտալով իր ամանը վերցրեց ու մորս ասաց. «Տուր ինձ մի մեծ կտոր քո սրտի չափով»: Եղբայրներս ու ես զարմացած լռությամբ դիտեցինք, մինչ մայրս խնդալով հորս տվեց ամենամեծ կտորը:

Երբ ուրիշների ունեցածների վրա ենք կենտրոնանում, շատ հաճախ արդյունքը նախանձն է լինում: Սակայն Աստծո խոսքը մեր ուշադրությունը ավելի արժեքավոր բանի վրա է հրավիրում՝ փոխանակ երկրային ունեցվածքի: Սաղմոսերգուն գրում է. «Բաժինս դո՛ւ ես, Տե՛ր, ասացի որ օրենքիդ պիտի հետևեմ: Ամբողջ սրտովս աղոթեցի քո դիմաց» (Սաղմ. 118:57-58): Սուրբ Հոգուց ներշնչված՝ նա ներկայացնում է ճշմարտությունը, թե ոչինչ ավելի կարևոր չէ, քան Աստծուն մոտ լինելը:

Ինչի՞ց ավելի մեծ բաժին կարող ենք ունենալ, քան մեզ սիրող ու անհուն Արարիչն է: Աշխարհի վրա ոչինչ չի կարելի համեմատել Նրա հետ, ու ոչինչ չի կարող Նրան մեզնից հեռացնել: Մարդկային մարմաջը թանկ արժեցող ոչնչություն է. մեկը կարող է «ամեն բան» ունենալ աշխարհի վրա և միաժամանակ թշվառական լինել: Սակայն երբ Աստված է մեր ուրախությունն աղբյուրը, մենք իրապես ամեն բան կարող ենք ունենալ: Մեր մեջ տեղ կա, որ միայն Աստված կարող է լցնել: Միայն Նա կարող է մեզ տալ մեր սրտի խաղաղությունը:

Աղոթք - Սիրո՛ղ Աստված, շնորհակալ եմ, որ ոչինչ ու ոչ ոք չի կարող Քեզ նման գոհացնել իմ բոլոր կարիքները: Ամեն:

Երբ մենք Նրանն ենք, Նա էլ մերն է հավիտյան:

Կարդա՛ր
Սաղմոս 72. 21-28

Ես սովորել եմ՝ ինչի մեջ որ կամ, նրանով բավարարվել: Փիլ. 4.11

Մրցույթն ավարտենք

2016-ի Ռիոյի Օլիմպիական խաղերին աշխարհի ուշադրու-
 թյունը գրավեցին 5000 մետր վազող երկու մարզիկներ: Մր-
 ցույթի 3200 մետրին նորգելանդացի Նիքի Համբլինը և ամերի-
 կացի էբբի դ'Ագաստինոն իրար խփվելով ընկան: Էբբին շուտ ոտ-
 քի ելավ ու կանգնեց Նիքիին օգնելու: Մի քանի վայրկյան հետո
 երկու մարզիկները սկսեցին վազել, սա-
 կայն էբբին սկսեց դանդաղել՝ աջ ոտքը
 վնասելու պատճառով: Հիմա Նիքիի
 հերթն էր սպասելու և քաջալերելու մր-
 ցակցին՝ ավարտելու մրցումը: Երբ էբ-
 բին հասավ մրցումի ավարտին, Նիքին
 այնտեղ իրեն էր սպասում: Ի՞նչ
 սքանչելի պատկեր իրար քաջալերելու:

Սա ինձ հիշեցրեց Սուրբ Գրային մի
 հատված. «Երկու հոգով ավելի լավ է, քան մենակ..., քանի որ
 եթե մեկն ընկնի, նրա ընկերը կկանգնեցնի նրան, բայց վա՛յ
 մենակին, որ ընկնի...» (Ժող. 4.9-10): Որպես հոգևոր մրցումի
 մեջ վազողներ՝ մենք իրար կարիք ունենք, ու ավելին, մենք
 իրար դեմ չենք մրցում, այլ՝ հանդես գալիս իբրև նույն խմբի
 անդամներ: Պահեր պիտի լինեն, երբ մենք պիտի հապաղենք ու
 դանդաղենք և կարիք ունենանք մեկին, որ մեզ վեր կբարձրաց-
 նի: Այլ ժամանակ մարդը կարող է ունենալ մեր քաջալերանքի
 կարիքը մեր աղոթքներով ու ներկայությամբ:

Հոգևոր մրցման ժամանակ պետք է միայնակ վազել: Աստված
 առաջնորդում է քեզ՝ ուրիշի կյանքում լինելու Նիքիի կամ էբբիի
 նման: Պատասխանելով նրա կոչին՝ եկեք մրցումը ավարտենք:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ իմ հավատակիցների
 սոված քաջալերանքի համար՝ օգնելու ինձ իմ ընթացքի մեջ: Օգ-
 նիր ինձ, որ միջոցների գտնեն ուրիշներին քաջալերելու: Ամեն:

**Մենք իրար կարիքն ունենք՝ հասնելու ուր որ Աստված է
 առաջնորդում:**

Կարդա՛
Ժողովող 4. 9-12
 Երկու հոգով ավե-
 լի լավ է, քան մե-
 նակ... եթե մեկն
 ընկնի, նրա ընկերը
 կկանգնեցնի նրան:
 Ժող. 4.9-10

Ամենօրյա աղոթքը

Երգահան ու երգիչ Ռոբերտ Համլետը հորինեց «Կինը, որ աղոթում է ինձ համար» երգը՝ նվիրված իր մորը, որ ամեն առավոտ աղոթում էր իր զավակների հետ՝ ավտոկայան գնալուց առաջ: Երբ երիտասարդ մի կին լսեց այս երգը, ինքն էլ որոշեց աղոթել իր որդու համար, ու արդյունքը սիրտ ջերմացնող եղավ: Երբ մի օր այս երիտասարդ մայրը աղոթեց իր որդու համար դռնից դուրս գնալուց առաջ, հինգ րոպե հետո տղան վերադարձավ տուն՝ իր հետ ավտոկայանից ուրիշ մանուկներ բերելով: Մայրը զարմացած հարցրեց, թե ինչ էր պատահել: Տղան ասաց. «Նրանց մայրերը չաղոթեցին իրենց համար»:

Կարդա՛
Եփես. 6.18-19
 Աղոթքով ու աղա-
 չանքով աղոթք
 արեք, ամեն ժա-
 մանակ՝ Հոգով:
 Եփես. 6.18

Եփեսացիների գրքում Պողոսը թախանձում է մեզ «աղոթքով ու աղաչանքով՝ աղոթք անել, ամեն ժամանակ» (6.18): Էսկան է մեր ընտանիքում ամեն օր ցույց տալ մեր կախյալ լինելը Աստծուց, որովհետև նախ մանուկներն են սովորում Աստծուն վստահել՝ տեսնելով ճշմարիտ հավատք իրենց մոտիկ եղող մարդկանց կյանքի մեջ (Բ Տիմ. 1.5): Չկա ավելի լավ կերպ սովորեցնելու աղոթքի կարևորությունը, քան աղոթելը նրանց համար և նրանց հետ: Սա միջոցներից մեկն է, որով նրանք սկսում են անհրաժեշտություն զգալ անձնական հավատքով Աստծուն մոտենալու:

Երբ «անկեղծ հավատքի» օրինակ լինենք մեր զավակներին, նրանց կտանք հատուկ նվեր, վստահություն, թե սիրող, առաջնորդող ու պաշտպանող Աստված միշտ ներկա է մեր մեջ՝ որպես մեր կյանքի կարևոր մի մաս:

Աղոթք - Տեր, օգնիր, որ կատարելապես Քեզ վստահեմ ամեն ժամանակ ու վստահ լինեմ, թե Դու միշտ ինձ հետ ես: Ամեն:

Ամենօրյա աղոթքը պակասեցնում է մեր ամենօրյա մտահոգությունները:

Քաղցր և թթու

Մեր փորձրիկ տղան՝ Խավիերը, երբ առաջին անգամ կիտրոնի համը տեսավ, կնճռոտեց քիթը, լեզուն դուրս հանեց ու աչքերը փակելով՝ ասաց. «Թթու»: Երբ ձեռքս երկարեցի, որ կիտրոնի կտորը վերցնեմ աղբամանը նետելու, Խավիերը գոռաց՝ «Ո՛չ», ու վազելով զնաց խոհանոցի մյուս կողմը՝ ինձնից փախչելով: «Ավելի»,¹ ասաց նա՝ կնճռոտելով շրթունքները յուրաքանչ-յուր ժայթքեցնող կծելու գործողության հետ, մինչև տվեց ինձ կեղևը: Իմ բերանի համը ճշտորեն ցույց է տալիս կյանքիս քաղցր պահերի իմ նախընտրությունը: Նախընտրությունս, զգուշանալու ու խույս տալու ամեն տեսակի թթու ու դառն բանից, ինձ հիշեցնում է Հոբի կնոջը, ով թվում է, թե բաժանում է չարչարանքի դառնության հանդեպ ունեցածս զգվանքը: Վստահորեն Հոբը բերկրանք չէր զգում դժվարության ու նեղության ժամանակ, սակայն նա պատվում է Աստծուն սրտաճմլիկ հանգամանքներում (Հոբ 1.1-22): Երբ Հոբը ցավ տվող պաշարներով հարվածներ կրեց, համբերությամբ այն տարավ (2.7-8): Նրա կինը ասաց, որ մոռանա Աստծուն ու հայհոյի (հմ. 9), սակայն Հոբը շարունակեց Աստծուն վստահել ցավի ու տառապանքի մեջ (հմ. 10): Բնական է կյանքի մեջ դառնություններից խուսափելը: Նույնիսկ մենք փորձության ենք ենթարկվում Աստծո դեմ ելնելու, երբ ցավի մեջ ենք: Սակայն Տերը այս փորձությունները գործածում է մեզ սովորեցնելու, թե ինչպես կարելի է Նրան վստահել ու հանձնվել, որովհետև Նա կարող է մեզ պահել դժվարության ու նեղության ժամանակ: Ու Հոբի նման կարիք չունենք սպասելու չարչարանքի՝ սովորելու դառն պահերի անակնկալ քաղցրությանը, որ մեր հավատքի երկնային գործության աղբյուրն է:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ մեզ վստահեցնում ես, թե տառապանքը երբեք չպիտի սպառվի, եթե վստահեմք Քեզ, թե ո՛վ ես, ի՛նչ ես արել և ի՛նչ կարող ես անել: Ամեն:

Կարդա՛ր
Յոբ 2. 1-10
 Եթե Տիրոջ ձեռքից բարիքներն ընդունեցի՞նք, չարիքներին չհամբերե՞նք:
 Յոբ 2.10

**Աստված տառապանքը գործածում է մեր հավատքը գո-
 րացնելու համար:**

Ի՞նչ ասաց Սիմոնը

Տասը տարուց ավելի Ռեֆյուջ Ռաբինդրանաթը եղել է երիտասարդների գործիչ Շրի Լանկայում: Նա գործում է երիտասարդների հետ մինչև ուշ՝ նրանց լսելով, խաղալով, սովորեցնելով ու խրատելով: Նա հաճույք է ստանում երիտասարդների հետ աշխատելով, սակայն հուսահատական է թվում, երբ լավ աշակերտները երբեմն հավատքից հեռանում են: Մի շարք պահերի նա մի քիչ Սիմոնի նման է զգում, ինչպես կարդում ենք Ղուկաս 5-ի մեջ: Սիմոնը ամբողջ գիշերը աշխատել էր, սակայն չէր կարողացել ձուկ բռնել (Հմ. 5): Նա հոգնած ու հուսահատ զգաց: Սակայն երբ Հիսուսը ասաց. «Նավը դեպի խո՛րքը տար, ու ձեր ուռկանները գցեցե՛ք որսալու» (Հմ. 4), Սիմոնը պատասխանեց ու ասաց. «Բայց քո խոսքի համար ուռկանը կգցեմ» (Հմ. 5): Սիմոնի հնազանդությունը երևելի է: Որպես վարպետ ձկնորս՝ նա շատ լավ գիտեր, թե ձկները ջրի հատակն են իջնում, երբ արևը բարձր է, և իրենց գործածած ուռկաններով հնարավոր չէ ջրի հատակը գնալ այդ ձկները բռնելու համար:

Նրա պատրաստակամությունը՝ Հիսուսին վստահելու՝ դրական վարձատրություն պիտի տար: Սիմոնը ոչ միայն մեծ քանակով ձուկ որսաց, այլ ավելի խոր հասկացողություն ունեցավ, թե ով է Հիսուսը: Նա Հիսուսին սկսեց «Տեր» (Հմ. 8) կոչել՝ «վարդապետ» կոչելու փոխարեն (Հմ. 5): Արդարև, «լսելը» մեզ թույլ է տալիս մոտիկից տեսնել Աստծո գործերն ու ավելի մոտենալ Նրան:

Թերևս Աստված քեզ է կանչում «քո ուռկանները նորից ձգելու»: Մենք կարող ենք Տիրոջը պատասխանել, ինչպես Սիմոնն արեց. «Բայց նետում եմ ուռկանը քո խոսքի համար»:

Աղոթք - Հայր, մեր առանձնաշնորհումն է Քեզ «Տեր» կոչել: Խնդրում ենք օգնիր մեզ՝ Քեզ հնազանդվելու և վստահելու ու ավելի սովորելու, թե ինչ է նշանակում Քո կողքից քայլել: Ամեն:

Մեր հնազանդությունը Աստծուն մեզ պիտի առաջնորդի անորոշության միջով ու մեզ Իրեն ավելի մոտեցնի:

**Կարդա՛ր
Ղուկաս 5.1-11**

Սիմոնը նրան ասաց. «Բայց քո խոսքի համար ուռկանը կգցեմ»: Ղուկ. 5.5

Վրանների մեջ ապրել

Շքեղ լճերով ծանոթ Մինեսոտա նահանգում մեծացած լինելով՝ սիրում էի բանակումի գնալ՝ Աստծո արարչագործ գեղեցկությունը վայելելու համար: Սակայն վրանում քնելն իմ նախասիրությունը չէր, հատկապես երբ անձրևոտ գիշերն ու կաթկթող վրանը պատճառ դարձան թաց ու խոնավ անկողնի:

Հիանում եմ, երբ մտածում եմ, թե մեր հավատքի հերոսներից մեկը հարյուր տարուց ավելի իր օրերն անցկացրեց վրանի մեջ: Երբ յոթանասունհինգ տարեկան էր, Աբրահամը լսեց Աստծո կոչը՝ թողնելու իր երկիրը, որպեսզի Տեղը նրան նոր ազգի վերածի (Ծն. 12.1-2): Աբրահամը հնազանդվեց Աստծուն՝ վստահելով, որ Նա պիտի աներ ամեն բան՝ իր խոստման համաձայն: Ու իր կյանքի մնացյալ օրերը, մինչև իր մահը 175 տարեկանում (25.7), նա ապրեց իր տնից հեռու՝ վրանների մեջ:

Մենք կարող ենք նույն կոչումը չունենալ թափառական ապրելու, սակայն նույնիսկ երբ մենք սիրում ենք ու ծառայում այս աշխարհին ու նրա մեջ ապրող ժողովրդին, մենք ցանկանում ենք ունենալ աշխարհի վրա հաստատված լինելու փորձառությունը: Աբրահամի նման, երբ հովը քանդի մեր անկայուն ու անապահով, ջուր կաթեցնող ծածկոցը, կարող ենք հավատքով նայել գալիք քաղաքին, որի «ճարտարապետն ու արարիչն Աստված է» (Եբ. 11.10): Ու Աբրահամի նման մենք էլ կարող ենք հույս ունենալ, թե Աստված գործում է՝ նորոգելու իր ստեղծագործությունը, պատրաստելով ավելի լավ երկիր՝ «երկնային քաղաք» (Եբ. 11.16):

Աղոթք - Տեր Աստված, Դու ես մեր պաշտպանությունն ու վեճը: Թող Քեզ վստահենք մե՞ծ ու փոքր բաների մեջ: Ամեն:

Աստված մեզ տալիս է հաստատ հիմք մեր կյանքերի համար:

Կարդա՛ր Ծննդոց 12. 4-9

Այդտեղից նա գնաց Բեթելի արևելյան կողմում գտնուող լեռը: Այնտեղ Բեթելում, խփեց իր վրանը: Ծն. 12.8

Բաժանված, բայց ոչ լքված

Մեծ հուզումով հրաժեշտ տվեցի եղբորս աղջկան Մասա-
չուսեթսի Բոստոն Համալսարան բարձրագույն ուսման
համար մեկնելու երեկոյան: Չորս տարի մեզնից մոտ երկու
ժամվա հեռավորության վրա գտնվող Համալսարանի ուսանող
լինելով՝ նա մեր անմիջական հսկողության տակ էր: Այժմ նա
մոտավորապես 800 մղոն հեռու պիտի լիներ, ու մենք հաճախ
չպիտի տեսնեինք նրան: Ինձ պետք էր
հավատալ, որ Աստված նրան հոգ պիտի
տաներ: Նման կերպ Պողոսը Եփեսոսի
եկեղեցու երեցնեբին հրաժեշտ տվեց:
Հիմնելով եկեղեցին ու երեք տարի շա-
րունակ նրանց սովորեցնելուց հետո՝ նա
հաստատեց, թե այս երեցները իր ընտա-
նիքի մոտիկ անդամներն են: Հիմա, երբ
նա Երուսաղեմ էր գնում, նրանց դարձ-
յալ չպիտի կարողանար տեսնել:

Սակայն Պողոսը բաժանումի խրատ ուներ նրանց: Թեև նրանք
չպիտի ունենային իրեն որպես ուսուցիչ, սակայն լքված չպիտի
զգային: Աստված պիտի շարունակեր նրանց սովորեցնել «իր շնորհ-
քի Ավետարանը» (Գործք Առ. 20.23): Աստված միշտ իրենց հետ պի-
տի լիներ: Լինեն նրանք մեր զավակները, ընտանիքի այլ անդամներ
կամ բարեկամներ, երբ թողնում ենք, որ թողնեն ու հեռանան իրենց
ընտանեկան բնից, հրաժեշտ տալը շատ դժվար է: Նրանք մեր անմի-
ջական հոգատարությունից ու ազդեցությունից հեռանում են ու
սկսում իրենց նոր կյանքը: Երբ թողնում ենք նրանց ձեռքը, պիտի
վստահ լինենք, որ Աստված նրանց իր ձեռքերի մեջ է առնում: Նա
շարունակում է ձևավորել նրանց կյանքերը ու նրանց կարիքները
հոգում մեր կարողությունից շատ ավելի:

Աղոթք - Տե՛ր, օգնիր, որ վստահ լինենք, թե Քո հսկող հոգա-
տարությունը հասնում է նրանց, ովքեր մեր սրտի հատորներն են,
սակայն պայմանների բերումով մեզնից հեռու են գտնվում: Ամեն:

**Թեև մեր սիրելիները մեզնից հեռու են, նրանք երբեք Աստ-
ծուց հեռու չեն:**

Կարդա՛

Գործք 20.17-20, 35-38

Եվ հիմա ձեզ
հանձնում եմ Աստ-
ծուն, եղբայրներ,
ու նրա շնորհի
խոսքին, որ կարող
է շինություն տալ:
Գործք Առ. 20.32

Դատարկից Լեցուն

Մանուկների հայտնի մի գիրք պատմում է աղքատ գյուղացի մի տղայի պատմություն, որ երբ գլխարկը հանում է թագավորին պատվելու, անմիջապես նույնանման մի գլխարկ է հայտնվում իր գլխին ու նյարդայնացնում թագավորին՝ իբրև անպատվության նշան: Բարդուղիմեոսը հանում է գլխարկները մեկ առ մեկ, երբ տարվում է պատժի վայրը: Ամեն հայտնվող նոր գլխարկ ավելի գեղեցիկ ու արժեքավոր գոհարեղեններով է զարդարված լինում, ու 500-րդ գլխարկը ցանկալի է թվում Դերվին թագավորին, որ ներում է շնորհում Բարդուղիմեոսին ու գնում այդ գլխարկը 500 ոսկով: Վերջապես Բարդուղիմեոսի գլուխը դատարկ է մնում, ու նա տուն է վերադառ-

Կարդա՛

Դ Թագ. 4. 1-7

«Այլևս աման չկա»: Եվ յուրը դարձրեց հոսելուց: Դ Թագ. 4.6

նում ազատ և ընտանիքին հոգ տանելու անհրաժեշտ դրամով: Մի այրի կին եկավ Եղիսեի մոտ նյութական մեծ զրկանքի պատճառով վախենալով, որ իր զավակները կվաճառվեն ստրկության՝ պարտքերը վճարելու համար (Բ Թագ. 4): Նա որևէ կարվածք չունեի՝ բացի մի սրվակ յուղից: Աստված բազմապատկեց այդ յուղը՝ լցնելով փոխ առնված անոթների մեջ, և նրա ամբողջ պարտքը վճարվեց, ավելին՝ մնաց նաև առօրյա կարիքների համար (Հմ. 7): Աստված գումար հայթայթեց այրու համար, ինչպես ինձ համար՝ փրկություն: Մեղքի պատճառով պարտքեր ունեմ, սակայն Հիսուսը վճարեց իմ պարտքերը ու նաև ինձ հավիտենական կյանք խոստացավ: Առանց Հիսուսի՝ մեզնից ցանկացածը այդ աղքատ գյուղացի տղայի նման է՝ առանց որևէ միջոցի՝ վճարելու մեր թագավորին՝ Իր դեմ արած մեր նախատինքների համար: Աստված հրաշալի կերպով հայթայթում է չափից մեծ հատուցում մեզ համար և վստահեցնում, որ նրանք, ովքեր Իրեն վստահում են, կյանք պիտի ունենան հավիտյան:

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ վճարում ես իմ պարտքը՝ Զիսուս Բրիստոսին գոհելով: Ես ոչինչ չունեի. Դու վճարեցիր բոլորը: Ամեն:

Զիսուսի գոհողությունն այն է, որ վճարում է մեր հոգևոր պարտքը:

Եղանակին հարմար հագուստ

Մինչ իմ գնած ձմեռային հագուստի արժեքի կտրոնն էի հանում, ժպտացի, երբ կարդացի ետևում գտնվող հետևյալ խոսքերը. «ԶԳՈՒՅՇ: Այս նորածե արտադրությունը քո մեջ պիտի դնի ցանկություն՝ դուրս գալու ու այնտեղ մնալու»: Երբ եղանակին հարմար հագուստ ենք հագնում, կարող ենք դիմանալ ու նույնիսկ հարմարվել կտրուկ փոխվող եղանակին:

Նույն սկզբունքը ճիշտ է նաև մեր հոգևոր կյանքի համար: Որպես Հիսուսի հետևողներ՝ ամեն եղանակի հարմար մեր հոգևոր հագուստի պահարանը Տիրոջ Խոսքի՝ Աստվածաշնչի մեջ տրված է որպես հստակ պատվեր: «Ուրեմն, ինչպես Աստուծո ընտրյալներ՝ սրբեր ու սիրելիներ, հագե՛ք ողորմասիրտ զթածություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն... ինչպես որ Քրիստոսը ձեզ ներեց, այնպես էլ դուք» (Կող. 3.12-13):

Այս տարազները, որ Աստված է հայթայթում, ինչպես ազնվությունը, խոնարհությունը և քաղցրությունը, օգնում են մեզ, որ կարողանանք դիմագրավել թշնամությունն ու քննադատությունը՝ համբերատարությամբ, ներումով ու սիրով: Նրանք մեզ տալիս են հարկ եղած զորությունը՝ հաստատ մնալու կյանքի փոթորիկների դիմաց:

Երբ դիմագրավում ենք աննպաստ պայմաններ տանը, դպրոցում կամ աշխատանքի վայրում, «հագուստ»ները, որ Աստված թեկադրում է հագնել, պաշտպանում են մեզ ու կարողություն շնորհում դրական փոփոխություն կատարելու: «Եվ այս ամենի վրա սերը հագեք, որ կատարելության կապն է» (Կող. 3.14):

Աղոթք - Երկնավոր Հայր, օգնիր ինձ, որ հագնեմ Քո սիրո հագուստը, որպեսզի պատրաստ լինեմ ամեն բան դիմագրավել այսօր: Ամեն:

Կարդա՛ր Կողոսացիներ 3.8-17

Եվ այս ամենի վրա սե՛րը հագեք, որ կատարելության կապն է: Կող. 3.14

Ազնվությունը այն յուզն է, որ վերացնում է շփումը կյանքից դուրս:

Այն օրը, որ չկարողացա աղոթել

2015-ի նոյեմբերին իմացա, որ կարիք ունեմ սրտի վիրահատու-
թյան: Զարմացած ու մի քիչ ցնցված՝ բնականաբար մղում
ուներեցա խորհելու մահվան հնարավորություն մասին: Կա՞ր արդյոք
մի հարաբերություն, որ պիտի վերահաստատեր: Կա՞ր նյութական
խնդիր, որ պիտի լուծեր՝ ընտանիքիս ապահովության համար: Եթե
նույնիսկ վիրահատությունը հաջող լիներ, ամիսներ պիտի սպասեր
աշխատանքս վերսկսելու համար: Կայի՞ն
գործեր, որոնք կարող էի անել ժամանակից
շուտ: Իսկ ի՞նչ անել այն գործերի հետ,
որոնք հնարավոր չէ հետաձգել: Ժամանակ
էր գործի լծվելու ու աղոթելու: Սակայն դժ-
բախտաբար երկուսն էլ չէի կարող անել:

Մարմինս ու միտքս այնքան հոգնած
էին, որ նույնիսկ ամենից պարզ գործը
թվում էր իմ կարողությունից վեր: Հավա-
նաբար ամենից զարմանալին այն էր, որ
երբ փորձեցի աղոթել, իմ մտածումները
մղեցին ինձ անհանգստություն, կամ սր-
տիս տկարություն պատճառով թեթև շնչառությունը ինձ քուն
բերեց: Ամենից շատ ինձ ցավ պատճառողը աղոթել չկարողանալն էր:
Աստված գիտեր, որ այս բանը ինձ հետ էր պատահում: Հիշեցի, որ Նա
երկու պատրաստություններ է արել մեր կյանքերի մեջ. Սուրբ Հոգու
աղոթքը, երբ չենք կարողանում աղոթել (Հռոմ. 8:26), և ուրիշների
արած աղոթքը մեր փոխարեն (Հակ. 5:16, Գաղ. 6:2): Ի՛նչ սփոփանք
է իմանալ, որ Սուրբ Հոգին նույնիսկ իմ կարիքները Հորն է ներկա-
յացնում: Ի՛նչ հրաշալի պարգև է իմանալ, որ բարեկամներն ու ըն-
տանիքի անդամները աղոթում են ինձ համար: Մի այլ անակնկալ-
երբ բարեկամներս ու ընտանիքիս անդամները հարցրեցին՝ ինչու
աղոթել, պարզ եղավ ինձ համար, որ Աստված լսում էր իմ պատաս-
խանը նրանց նույնպես որպես աղոթք: **Աղոթք** - Տեր, շնորհակալ
ենք, որ մեզ համար հոգ ես տանում, հասկանում ես մեր կարիքները
ու աղոթում մեզ համար, երբ մենք չենք կարողանում: Ամեն:

Կարդա՛ Յոռմ. 8. 22-26

Թե ինչի՞ համար
պետք է աղոթենք
ինչպես որ արժան
է, չգիտենք, բայց
Յոզիմ ինքը ան-
բարբառ հառա-
չանքներով բարե-
խոս է լինում մեզ
համար: Յոռմ. 8.26

Աստված երբեք չի թողնում անլսելի իր զավակների ձայները:

Թարմ հավատք

Երբ մեր որդին պայքարում էր թմրանյութերի դեմ, եթե ինձ ասավեր, թե մի օր Աստված մեր փորձառությունը պիտի գործածի ուրիշ ընտանիքներին քաջալերելու համար, որոնք նման վիճակների միջով են անցնում, դժվարություններ պիտի հավատայի այդ խորհրդին: Երբ դու նման վիճակի մեջ ես, հեշտ է տեսնել, թե Աստված միջոց ունի դժվար պայմանների միջից բարի բան դուրս բերելու:

Թովմաս առաքյալը այլևս չէր ակնկալում, որ Աստված բարու պիտի վերածեր իր հավատքի մեծագույն մարտահրավերը՝ Հիսուսի խաչելությունը: Թովմասը մյուս առաքյալների հետ չէր, երբ Հիսուսը նրանց երևաց հարությունից հետո, ու իր խոր ցավի մեջ նա պնդեց՝ ասելով. «Եթե նրա ձեռքերին մեխերի նշանը չտեսնեմ ու իմ մատը մեխերի տեղը չխրեմ, իմ ձեռքը նրա կողը չխրեմ, չեմ հավատա» (Հովհ. 20.25): Սակայն հետո, երբ Հիսուսը երևաց բոլոր աշակերտների հետ, Թովմասի կասկածների փոշիի միջից Աստծո Հոգին ներշնչեց հզոր հավատքի հաստատում: Երբ Թովմասը բացականչեց. «Տե՛ր իմ ու իմ Աստվա՛ծ իմ» (Հմ. 28), նա ըմբռնեց այն ճշմարտությունը, թե Հիսուսը իսկապես մարմին առած Աստված էր իր առջև կանգնած: Հավատքի համարձակ հայտարարություն էր սա, որ կարող է քաջալերել ու ներշնչել հաջորդ բոլոր դարերի հավատացյալներին:

Մեր Աստված կարող է ներշնչել թարմ հավատք մեր սրտերի մեջ, նույնիսկ այն պահերին, երբ նվազագույն ակնկալություն ունենք: Մենք կարող ենք միշտ առաջ նայել Նրա հավատարմությանը: Ոչ մի բան դժվար կամ անհնար չէ Նրա համար:

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ Քո սերը ավելի զորավոր է, քան մեր մեծագույն դժվարությունները, նույնիսկ մեր ամենից վատ կասկածներն ու վախերը: Ամեն:

Կարդա՛ր Յովհ. 20. 24-29

Պինդ, անսայթաք բռնե՛ք հույսի դավանությունը, որովհետև խոստացող հավատարիմ է: Եբր. 10.23

Աստված կարող է փոխել մեր կասկածները հավատքի համարձակ հայտարարության:

Նոր... ներսը և դուրսը

Մի քանի տարի առաջ մի հրատարակիչ մեծ սխալ գործեց: Հրատարակի վրա երկար տարիներ առկա մի գիրք վերատպագրության կարիք ուներ: Հեղինակը դարձյալ գիրքը գրեց՝ արդիականացնելու համար: Սակայն մի հարց առաջացավ: Հրատարակիչը այս վերատպված գրքի համար նոր ու գեղեցիկ շապիկ պատրաստեց, սակայն հին գիրքը գրեց մեջը: Գրքի շապիկը թարմ ու նոր էր, սակայն ներսը հին էր ու ժամանակավրեպ: Այս «վերատպագրությունը» իրականում նոր էր:

Շատ հաճախ նման բաներ պատահում են մարդկանց հետ: Նրանք անդրադառնում են, որ կյանքի մեջ փոփոխություն է լինելու: Երբ իրերը սխալ ուղղություն ու ընթացքի մեջ են, կարող են նոր արտաքին փոփոխությունների բերել: Նրանք կարող են փոխել վարվելակերպը, սակայն չեն մտածում, որ միայն Աստված կարող է մեզ փոխել ներքնապես: Հովհաննու 3-ի մեջ Նիկողիմոսը զգաց, որ Հիսուսը «Աստուծոց եկավ» (Հմ. 2): Նա բոլորովին նոր բան առաջարկեց: Ինչ որ Հիսուսն ասաց, Նիկողիմոսին այնպես թվաց, թե նա առաջարկում էր վերստին ծնունդ ու ոչ մի պակաս բան (Հմ. 4): Նա կարիք ուներ «վերստին ծնվելու»՝ ամբողջովին նոր արարած լինելու համար (Հմ.7): Փոփոխությունը տեղի է ունենում միայն Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով: Դա պատահում է, երբ «հներն անցան, ասա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթ. 5:17): Փոփոխության կարիք ունե՞ս: Հավատա Հիսուսին: Միայն Նա՛ կարող է քո սիրտը փոխել ու ամեն բան նորացնել:

Աղոթք - Տե՛ր, գիտեմ, որ արտաքին փոփոխությունները՝ վարվելակերպ, արտաքին, կեցվածք, չեն փոխում ինձ ներսից: Դավատում եմ Հիսուսին, Նրան, որ խաչի վրա մեռավ ու հարություն առավ իմ մեղքերը ներելու համար: Ներքնապես նորոգիր ինձ. հոգիս նորոգիր: Ամեն:

Կարդա՛
Յովհ. 3. 1-8, 13-16

Եթե մեկը վերստին չծնվի, Աստուծու արքայությունը չի կարող տեսնել:
Յովհ. 3.3

Միայն Աստված կարող է մեզ նոր արարած դարձնել:

Նյութերի ցանկ

Աղոթք	Հուլ. 12, օգ. 10, 25, սեպ. 4, 6, 21, 28
Անարդարություն.....	Հուլ. 10
Անկում.....	Սեպ. 5
Ապաշխարություն.....	Հուլ. 3
Աստծու հետ հաղորդակցություն.....	Հուլ. 14, 29
Աստծու հոգածությունը.....	Հուլ. 19, 25, օգ. 15, սեպ. 8, 25
Աստծու ներկայությունը.....	Սեպ. 18
Աստծու սերը .	Հուլ. 5,6,13,18,20, օգ. 2,9,10,15,21, սեպ.7, 11
Աստծու վարդապետությունը.....	Օգ. 20, 31, սեպ. 15
Աստծուն վստահել.....	Հուլ. 15, 22, 26, օգ. 4, 11
Ավետարանչություն.....	Հուլ. 31, օգ. 5, 22, սեպ. 10
Բարկություն.....	Սեպ. 16
Գոհունակություն.....	Սեպ. 19
Դրախտ.....	Օգ. 17, 19, սեպ. 5, 24
Եկեղեցի.....	Հուլ. 24, 30
Երջանկություն.....	Օգ. 19
Ծառայել.....	Հուլ. 23, օգ. 8
Ծնող լինել.....	Սեպ. 21
Կասկած.....	Սեպ. 8
Կարեկցություն.....	Օգ. 14, 28, սեպ. 7
Կյանքի պայքարներ.....	Հուլ. 15, օգ. 3, սեպ. 8
Հանդիստ.....	Հուլ. 8
Հաշտություն.....	Սեպ. 17
Հավատք.....	Հուլ. 7, օգ. 26, սեպ. 13, 22, 29
Հանցանք.....	Օգ. 23
Հեզություն.....	Օգ. 2, 24
Հնազանդություն.....	Հուլ. 11, օգ. 7, սեպ. 14, 23
Հոգեկան այլափոխություն.....	Հուլ. 25, օգ. 6
Հոգեկան կարգապահություն.....	Օգ. 21
Հոգևոր աճում.....	Հուլ. 1, 21

Հոգու պտուղը.....	Օգ. 29, սեպ. 27
Հույս.....	Օգ. 1, 20
Մեղք.....	Հուլ. 3, սեպ. 5
Մեղքերի թողություն.....	Հուլ. 18, 28, օգ. 23, 30
Մենակություն.....	Սեպ. 8
Միություն.....	Հուլ. 30
Նախապաշարում.....	Սեպ. 17
Ներել ուրիշներին.....	Հուլ. 5, սեպ. 12
Շնորհակալություն.....	Օգ. 12
Ուրիշ հավատացյալների հետ ապրել.....	Սեպ. 20
Պաշտամունք.....	Հուլ. 9, սեպ. 3
Սատանա.....	Հուլ. 11
Սեր Աստծու հանդեպ.....	Սեպ. 3
Սեր մանուկների հանդեպ.....	Օգ. 14
Սեր ուրիշների հանդեպ.....	Օգ. 9, 24, Սեպ. 1
Սուրբ Հոգի.....	Հուլ. 21, 27, սեպ. 14, 27
Ստեղծագործություն.....	Օգ. 18, 31
Վախ.....	Հուլ. 22, օգ. 13, 16
Վիշտ.....	Օգ. 19, սեպ. 7
Տալ.....	Օգ. 28
Տանջանք.....	Հուլ. 11, 19, 26, օգ. 4, 11, սեպ. 2, 6, 22
Փառաբանություն.....	Օգ. 18
Փորձություն.....	Օգ. 25
Փրկություն.....	Հուլ. 14, 31, օգ. 1, 8, 9, 27, 30, սեպ. 15, 30
Քաջակերություն.....	Սեպ. 2, 20
Քրիստոսի Աստվածություն.....	Սեպ. 11
Քրիստոսի փրկություն.....	Հուլ. 16
Քրիստոս Փրկիչ.....	Հուլ. 7, 14, օգ. 2, սեպ. 9, 26
Քրիստոնեական կյանք.....	Հուլ. 17
Քրիստոսի համար ապրել.....	Հուլ. 1, 17, 28, օգ. 5, սեպ. 10
Քրիստոսի կյանքն ու ուսուցումը.....	Օգ. 26

Կարևոր ազդե

Հարգելի՛ բարեկամ, եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքուկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

*Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am*

*Արցախ
ք. Ստեփանակերտ
Ալեք Մանուկյան 7ա
Հեռ. (374) 94 52 75; 95 02 95*

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ
Ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Էլկայք՝ www.amaa.am